ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ

ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ»00.05-«ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ և ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ«
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

Հ.Մ. ԽԱՉԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 12

§ 1 Պենիտենցիար հանցավորության հասկացությունը, շարժընթացը, կառուցվածքը, վիճակը ՀՀ-ում 12

§ 2 Պենիտենցիար հանցավորության զոհ - դատապարտյալների կրիմինալոգիական բնութագիրը 30

ԳԼՈՒԽ 2. ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ 48

§ 1 Պենիտենցիար հանցավորությանը նպաստող գործոնները 48

§ 2 «Հանցավոր ենթամշակույթի» ազդեցությունը պենիտենցիար հանցավորության վրա 65

ԳԼՈՒԽ 3. ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ 86

§ 1 Դատապարտյալների անձնային առանձնահատկությունների դերը պենիտենցիար հանցագործությունների կանխարգելման գործում 86

§ 2 Դատապարտյալների վիկտիմայնացման կանխարգելման հիմնապնդիրները քրեակատարողական հիմնարկներում 98

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 116

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ 122

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Իրավական պետության կայացման գործընթացում մեծ դեր ունեն քրեական և քրեակատարողական օրենսդրությունների կատարելագործումը, ազատազրկման դատապարտված անձանց վերասոցիալականացումը, նոր հանցագործությունների կանխումը:

Ազատազրկման ընթացքում կատարված հանցագործությունները արգելակում են պատժի նպատակների իրականացումը, հեղինակազրկում քրեակատարողական համակարգը, ապակայունացնում իրավիճակը քրեակատարողական հիմնարկներում, խոչընդոտում այնտեղ իրավակարգի ամրապնդմանը: Ուստի, պենիտենցիար հանցավորությունը վտանգավոր է ոչ միայն քրեակատարողական հիմնարկների, այլև՝ ամբողջ հասարակության համար:

Պենիտենցիար հանցավորության հետ սերտ կապված է պենիտենցիար վիկտիմայնացումը, որի աճը նպաստում է դատապարտյալների վիկտիմայնացման մակարդակի հետագա բարձրացմանը, ինչը նույնպես բացասաբար է անդրադառնում դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացի վրա:

Պենիտենցիար հանցավորության կանխարգելումը միշտ եղել է քրեակատարողական մարմինների ուշադրության կենտրոնում, սակայն տարվող կանխարգելիչ միջոցառումները մինչ այժմ կրում են միակողմանի բնույթ. հանցավոր վարքագծի մեխանիզմում անտեսվում է զոհի դերը: Պենիտենցիար կանխարգելումը գլխավորապես ուղղված է այն դատապարտյալներին, ում կողմից սպասելի է հանցավոր արարքների կատարում: Կարելի է ենթադրել, որ քրեակատարողական հիմնարկի[1] վարչակազմի նկատմամբ դատապարտյալների անվստահության պատճառներից մեկը հենց դաէ:

Նշվածը անհրաժեշտություն է առաջացնում փնտրելու պենիտենցիար հանցավորության կանխարգելման նոր ուղիներ: Որպես այդպիսին կարող է լինել համեմատաբար վերջերս

[1] Այսուհետ՝ ՔԿՀ:

ձևավորված՝ հանցավորության կանխարգելման վիկտիմալոգիական ուղղությունը:

Բացի այդ, անչափ կարևոր և արդիական է ազատազրկման դատապարտված անձանց անվտանգության ապահովմանն ուղղված մեխանիզմների մշակումը, պատժի նպատակների իրականացմանը և առաջին հերթին դատապարտյալների ուղղմանը խոչընդոտող հանցավոր միջավայրի ազդեցությունից նրանց պաշտպանության այլ ուղիների որոնումը:

Նշված խնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը հիմնավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Պենիտենցիար հանցավորության ուսումնասիրությանը իրենց աշխատություններում տարբեր ժամանակաշրջաններում անդրադարձել են Յու. Մ. Անտոնյանը, Գ.Ա. Ավանեսովը, Վ.Մ.Անիսիմկովը, Ա.Ա. Բակինը, Ն.Վ. Բրիզգալովան, Ա.Ի. Դոլգովան, Յու.Վ. Ժուրավլյովան, Ի.Վ. Կորետնիկովան, Գ.Ֆ. Խոխրյակովը, Հ.Մ. Խաչիկյանը և այլոք: Նշված հեղինակների աշխատություններն ունեն տեսական և գործնական մեծ նշանակություն, սակայն պենիտենցիար հանցավորության կանխարգելման խնդրի համալիր հետազոտությունը դրանցում իրականացված չէ:

ՀՀ-ում պենիտենցիար հանցավորության համալիր հետազոտություն չի իրականացվել. դրա առանձին հիմնախնդիրներ վերլուծության են ենթարկվել պրոֆեսոր Հ. Խաչիկյանի աշխատություններում, այդուհանդերձ, խնդրո առարկան չի սպառվել և բազմաթիվ հարցեր մնացել են չլուսաբանված կամ մասնակի են հետազոտվել:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը պենիտենցիար հանցավորության և դատապարտյալների վիկտիմայնության կանխման հետ կապված հասարակական հարաբերություններն են: Հետազոտության առարկան են դատապարտյալների անվտանգության ապահովման և պենիտենցիար հանցավորության կանխարգելման ոլորտում ծագող հասարակական հարաբերությունները կարգավորող քրեական և քրեակատարողական

իրավունքի նորմերը, դատապարտյալների՝ պենիտենցիար վիկտիմայնացմանը նպաստող գործոնները, դատապարտյալի և պենիտենցիար հանցագործության զոհի անձը, պենիտենցիար հանցավորության կանխարգելմանն ուղղված քրեաիրավական և վիկտիմալոգիական միջոցների համակարգը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Աշխատության հիմնական նպատակն է պենիտենցիար հանցավորության դետերմինանտների վերլուծությունը, հանցագործի անձի և հանցագործության զոհի, ինչպես նաև ազատազրկման վայրերում հանցագործությունների կանխման հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը և կանխարգելիչ գործունեության կատարելագործման նպատակով կոնկրետ մեխանիզմների մշակումը: Այս նպատակին հետամուտ՝ փորձ է արվել լուծելու հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել պենիտենցիար հանցավորության ներկա վիճակը և միտումները,
- վերհանել ազատազրկման վայրերում հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնները,
- ուսումնասիրել դատապարտյալների վիկտիմային առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ազատազրկման վայրերում հանցագործությունների կանխարգելման իրավական և կազմակերպական խնդիրները,
- առաջարկություններ մշակել պենիտենցիար հանցավորության կանխարգելման կատարելագործման ուղղությամբ:

Հետազոտության մեթոդոլոգիական և մեթոդիկան: Ուսումնասիրության մեթոդոլոգիական հիմքն են կազմել ճանաչողության ընդհանուր-գիտական մեթոդները՝ անալիզ և սինթեզ, դեդուկցիա, ինդուկցիա,ինչպես նաև մասնավոր-գիտական մեթոդները, երևույթների քանակական ու որակական վերլուծություն, դասակարգում, ձևական-տրամաբանական, պատմաիրավական, համեմատական-իրավական և այլն:

Հետազոտության տեսական և իրավական հիմքը: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել քրեական, քրեակատարողական իրավունքների, կրիմինալոգիայի, կրիմինապենոլոգիայի, հոգեբանության ոլորտներում գիտական ուսումնասիրություններ իրականացրած հայ և օտարերկրյա հեղինակների մի շարք աշխատություններ՝ մենագրություններ, ատենախոսություններ, գիտական հրապարակումներ, մեթոդական և ուսումնական ձեռնարկներ, գիտական ու գործնական այլ նյութեր, զեկույցներ, օրենքների մեկնաբանություններ և այլն: Ատենախոսության իրավական հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ՀՀ օրենքը «Քրեակատարողական ծառայության մասին» և հետազոտության օբյեկտին ու առարկային առնչվող այլ օրենքներ և իրավական ակտեր:

Հետազոտության փորձառական հիմքը: Ուսումնասիրության փորձառական հիմքն են կազմել 2000-2012թթ ՀՀ ԱՆ Քրեակատարողական Ծառայության կողմից տրամադրված՝ ՀՀ ազատազրկման վայրերում կատարված հանցագործությունների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը, ինչպես նաև դատապարտյալների և ՔԿՀ աշխատակիցների շրջանում մեր կողմից անցկացված անանուն հարցումների արդյունքում ստացված տվյալները (35 հարցված աշխատակիցներ, 85 հարցված դատապարտյալներ):

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ փորձ է արվել համակարգային ուսումնասիրության ենթարկելու ՀՀ-ում պենիտենցիար հանցավորության դետերմինանտները, վերլուծելու հանցավորության նշված տեսակի կանխարգելման ուղիները և մեթոդները: Առաջին անգամ վերհանվել և ուսումնասիրվել են ՀՀ-ում ազատազրկում պատժատեսակի կրման ընթացքում դատապարտյալների վիկտիմայնացման, վիկտիմալոգիական բնույթի կանխարգելիչ միջոցների կիրառման մեխանիզմները, նոր

լուծումներ են առաջարկվել ազատազրկման վայրերում դատապարտյալների անձնական անվտանգության ապահովման ուղղությամբ:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք հանգում են հետևյալին.

1. Անհրաժեշտ է դատապարտյալների նյութակենցաղային ապահովվածության մակարդակը համապատասխանեցնել միջազգային իրավական չափանիշներին, առաջին հերթին՝ պատժի կրման կացարանային ձևից անցում կատարել խցային ինի, բարելավել պատիժը կրող անձանց բնակարանային պայմանները:

Ներկայումս պատժի կրման գործող կացարանային կարգը դատապարտյալների վիկտիմայնացմանը նպաստող հիմնական պատճառներից է:

Պատժի կրման կացարանային ձևից խցային ինի անցումը կարող է դրական ազդեցություն ունենալ պենիտենցիար վիկտիմայնացման վրա:

2. Առաջարկվում է վերացնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի ինստիտուտը. դատապարտյալի անձի մասին լրիվ պատկերացում կարող է կազմել միայն պատիժը կատարող ՔԿՀ վարչակազմը ու ամենևին կարիք չկա ընթացակարգը բարդացնելու:

3. Առաջարկվում է նախատեսել պատժի կրումից առանց նախապայմանների ազատում, եթե անձը կրել է դատարանի կողմից նշանակված պատժի 3/4-ը, պատժի կրման ընթացքում դրսևորել է դրական վարքագիծ՝ չունի տույժեր, ՔԿՀ վարչակազմի կողմից արժանացել է խրախուսանքի:

4. Առաջարկվում է ստեղծել էլեկտրոնային գրադարան՝ թույլատրելով դատապարտյալների մուտքը որոշակի կայքեր /լրատվական, տեղեկատվական/՝ առանց հետադարձ կապի, էլեկտրոնային նամակներ ուղարկելու կամ ստանալու հնարավորության:

5. Պենիտենցիար հանցավորության կանխարգելման հարցում մեծ դեր կարող է խաղալ դատապարտյալների զբաղվածությունը. չնայած նրան, որ դատապարտյալներն ունեն վարձատրվող աշխատանքի իրավունք, փաստացի այդ իրավունքը չի իրացվում: Ուստի, առաջարկվում է գյուղատնտեսությամբ կամ անասնապահությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին հարկային արտոնություններ տրամադրելու միջոցով շահագրգռել իրենց գործեությունը ծավալել քրեակատարողական հիմնարկների հարակից տարածքներում՝ պատիժ կրող դատապարտյալներին աշխատանքով ապահովելու նպատակով: Նշված ծրագրի իրականացումը հնարավորություն կտա դատապարտյալներին ունենալու սեփական դրամական միջոցները, օգտվելու քրեակատարողական հիմնարկում գործող վճարովի ծառայություններից, կնպաստի դատապարտյալների զբաղվածության խնդրի լուծմանը, բանտային առօրյայից կտրվելուն, բանտային ենթամշակույթի նորմերից և ավանդույթներից հեռանալուն, ինչը, անկասկած, նախադրյալներ կստեղծի հանցավոր ենթամշակույթի ազդեցության թուլացման, և՝ հետզհետե վերացման համար:

6 Դատապարտյալների բնակարանային պայմանները բարելավելու և քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք ՀՀ չբնակեցված տարածքներում կառուցել նոր քրեակատարողական հիմնարկներ:

7.Առաջարկվում է շրջանառության մեջ դնել «վիկտիմալոգիական վիճակագրություն» հասկացությունը՝ տիրող հանցածին վիճակի մասին հավաստի և լրիվ տեղեկատվություն ստանալու համար: Վիկտիմալոգիական վիճակագրությունը պետք է դիտել որպես իրավական վիճակագրության մաս, որն ուսումնասիրում է զոհի անձի և վարքագծի քանակական բնութագիրը՝ հանցագործությունների կանխարգելման, կանխման և բացահայտման նպատակով:

Այս կապակցությամբ առաջարկվում է ՀՀ ԱՆ Քրեակատարողական

ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների Ներքին Կանոնակարգը համալրել «ՔԿՀ-ներում հանցագործության զոհերի մասին տվյալներ» բաժնով, որը կներառի տվյալներ զոհերի ժողովրդագրական հատկանիշների, վիկտիմիզացման պատճառ դարձած հանցագործության տեսակի, հասցված վնասի բնույթի և չափի, վնասը հասցնելու պահին զոհի վիճակի վերաբերյալ:

8. Կարևորելով զոհի դերը հանցավոր վարքագծի մեխանիզմում՝ դատապարտյալների վիկտիմիզացման կանխարգելման նպատակով, առաջարկվում է «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործեության կարգի» «Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացումը դատապարտյալների հետ» գլխի 42-րդ կետի 7-րդ ենթակետը խմբագրել հետևյալ կերպ՝ «... անհրաժեշտության դեպքում՝ դատապարտյալների շրջանում հնարավոր կոնֆլիկտային կամ վիկտիմային իրավիճակների կանխարգելման և լուծման ուղղությամբ անհատական և խմբային խորհրդատվություն տրամադրելը: Կոնֆլիկտների և վիկտիմային իրավիճակների կանխարգելման աշխատանքներն իրականացվում են պարբերաբար: Կոնֆլիկտների և վիկտիմային իրավիճակների կանխարգելումը ներառում է դատապարտյալների շրջանում միջանձնային լարված հարաբերությունների բացահայտում, որն իրականացվում է հետևողական դիտարկումների և անհատական զրույցների միջոցով...»:

9. Հանցավոր ենթամշակույթի բացասական ազդեցության չեզոքացման հիմնական միջոց կարող է լինել քրեակատարողական օրենսդրության հետագա մարդասիրացումը, ուստի անհրաժեշտ է խելամտորեն մեղմացնել պատժի կրման պայմանները և վերացնել անհիմն ու ոչնչով չարդարացված արգելքներն և սահմանափակումները, քանի որ վերջիններս դատապարտյալների շրջանում առաջացնում են ընդվզում, Ներքին Կանոնակարգին չենթարկվելու ցանկություն, ստիպում են նրանց արդարություն

փնտրելու ազատազրկման վայրերում գործող ոչ ֆորմալ կառույցներում, հանցավոր աշխարհի օրենքներում:

10. Անհրաժեշտ է դատապարտյալների նկատմամբ վարչակազմի ներկայացուցիչների բացասական վերաբերմունքի փոփոխություն՝ սովորեցնելով հարգել դատապարտյալների իրավունքները: Նույնպիսի վերաբերմունք պետք է ձևավորել նաև դատապարտյալների մեջ վարչակազմի ներկայացուցիչների նկատմամբ, ինչը հնարավոր է միայն վերջիններիս կողմից դատապարտյալների անձնական խնդիրները լուծելու փորձի, նրանց իրական օգնություն ցույց տալու, այլ դատապարտյալների ոտնձգություններից պաշտպանելու դեպքում:

11. Առաջարկվում է նաև «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործեության կարգի» «Դատապարտյալների ախտորոշումը, գնահատումը և բնութագրումը հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելիս» գլխում նախատեսել նաև միջոցառումներ՝ ուղղված այն դատապարտյալների բացահայտմանը, որոնց՝ պենիտենցիար հանցավորության զոհ դառնալու հավանականությունը մեծ է՝ ելնելով իրենց վարքագծային և անձնային առանձնահատկություններից:

12. Անհրաժեշտ է անհատական մակարդակում վիկտիմիզացման կանխարգելման հիմնական միջոցների թվին դասել դատապարտյալների հետ անհատական զրույցների անցկացումը, դատապարտյալի վրա բացասական ազդեցություն թողնող կապերից և պայմաններից նրա մեկուսացումը, նշված անձանց սոցիալական և հոգեբանական օգնության տրամադրումը:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ նպաստում է պենիտենցիար հանցավորության, դրա պատճառների և պայմանների մասին պատկերացումների համակարգմանը, խորացմանը, թույլ է տալիս բացահայտելու ազատազրկման վայրերում պատիժ կրող դատապարտյալների հանցավոր վարքագծի իրական մեխանիզմները:

Աշխատության մեջ արված առաջարկությունները ուղղված են հանցավորության նշված տեսակի կանխման տեսական և գործնական ուղիների կատարելագործմանը և կանխարգելիչ համակարգի ստեղծմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը այն է, որ դրանում ձևակերպված դրույթները, քրեական և քրեակատարողական օրենսդրության համապատասխան նորմերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները կարող են օգտագործվել իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև քրեական իրավունքի, քրեակատարողական իրավունքի, կրիմինալոգիա և վիկտիմալոգիա առարկաների դասավանդման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ անցկացվել են դրա քննարկումն ու գրախոսությունը: Ատենախոսության առավել կարևոր դրույթները տեղ են գտել հեղինակի հրապարակումներում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում ներկայացված զեկույցներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք պարունակում են վեց պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1.
ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 1 Պենիտենցիար հանցավորության հայկացությունը, շարժընթացը, կառուցվածքը, վիճակը ՀՀ-ում

Ազատազրկումն ամենախիստ և միաժամանակ ամենահակասական քրեական պատիժն է: Հակասական բնույթն արտահայտվում է նրանում, որ պետությունը ձգտում է հասնել պատժի նպատակների իրականացմանն ամենևին ոչ նպաստավոր պայմաններում, այն է՝ նախ՝ հասարակությունից խիստ մեկուսացում, ինչն օբյեկտիվորեն մարդու գոյության անբնական ձևն է, ապա՝ մեծ թվով միասեռ, «հանցածին սովորույթներով վարակված» անձանց կենտրոնացում մեկ վայրում, և պատժի կրման կացարանային պայմաններ: Հանցավոր աշխարհի հեղինակություններն արդյունավետորեն օգտագործում են նշված պայմանները՝ դատապարտյալներին հանցավոր աշխարհի գաղափարախոսությամբ վարակելու, հանցածին իրավիճակներ ստեղծելու, դատապարտյալների հակահասարակական ուղղվածությունը խորացնելու, ամրապնդելու նպատակով: Քրեակատարողական համակարգը ոչ միշտ է ունակ կանխելու նման ազդեցության հետևանքները: Այն արտահայտությունը, որ «բանտը հանցվորության դպրոց է»,[2] բավականին հիմնավոր է:

Պրոֆեսոր Վ.Գ. Գրոմովի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ազատազրկում կրող դատապարտյալների 51.5 %-ը նշում է, որ ժամանակակից քրեակատարողական հիմնարկները նպաստում են իրենց հանցավոր վարքագծին: Իսկ ազատազրկման դատապարտվածների 85 %-ը գտնում է, որ ազատազրկման ձևով պատժի կրումից հետո հանցագործությունների կատարման պատճառն ազատազրկման վայրում ինքնատիպ «հանցավոր հմտությունների կատարելագործման դասընթացներ» անցնելն է կամ ազատության

[2] Տե՛ս Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 132:

մեջ կյանքի պայմաններին չհարմարվելը[3]:

Պենիտենցիար հանցավորության հասկացության վերաբերյալ գիտնականների շրջանում չկա ձևավորված միասնական կարծիք: Նրանց մի մասը, մասնավորապես՝ Յու. Ի.Կալինինը, պենիտենցիար հանցավորությունը բնութագրում է որպես քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների կողմից կատարվող հանցագործությունների ամբողջություն:[4] Նման մոտեցումը վկայում է պենիտենցիար հանցավորության առնվազն երկու առանձնահատկությունների մասին. նախ՝ հանցագործությունը կատարվում է որոշակի տարածքում, որի սահմաններում գործում է քրեակատարողական հիմնարկը, և երկրորդ՝ նոր հանցանքը կատարում է նախկինում այլ հանցանքի կատարման համար դատապարտված և այժմ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը:

Հեղինակների մեկ այլ խումբ պենիտենցիար հանցավորություն ասելով հասկանում է ոչ միայն քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով, այլև ազատազրկման հետ չկապված պատիժների կրման ընթացքում կատարվող հանցագործությունները:[5]

Գիտնականների մի երրորդ խումբ էլ պենիտենցիար հանցավորությունը կապում է ազատազրկման վայրերում ինչպես դատապարտյալների, այնպես էլ ՔԿՀ-ների աշխատակիցների կողմից կատարվող հանցագործությունների հետ:[6]

Կարծում ենք, նպատակահարմար չէ պենիտենցիար հանցավորության մեջ ներառել այն դեպքերը, երբ հանցանքը կատարում են անձինք, որոնց նկատմամբ կալանքը ընտրված է որպես խափանման միջոց, որոնք գտնվում են նախնական կալանքի վայրերում, քանի որ պենիտենցիար հանցավորության մեջ պետք է

---

[3] Տե՛ս Громов В.Г. Криминогенность мест лишения свободы и ее нейтрализация: Автореф. дис. ... д-ра юрид. наук. Тамбов: Тамбовский государственный университет имени Г.Р. Державина, 2009, էջ 4:

[4] Տե՛ս Калинин Ю.И. К вопросу о понятии, сущности и основных чертах пенитенциарного преступления // Человек: преступление и наказание: Вест. Академии права и управления Минюста России. - 2004. - № 4 (48), էջ 13:

[5] Տե՛ս Пинчук Б.И.Рецидивисты. Глава пятая / Курс советского уголовного права/ Под. ред. Н.А. Беляева, М.Д. Шаргородского, Ленинград, 1970г. էջ 90:

[6] Տե՛ս Антонян Ю. М. Пресступмость в местах лишения свободы и ее причины / Уголовное право, 2002г. N 4, էջեր 101-104:

ընդգրկվեն միայն ազատազրկման ձևով պատիժը կրող դատարապտյալների կողմից կատարվող հանցագործությունները: Բանն այն է, որ պենիտենցիար հանցավորությանը նպաստող գործոններն ունեն իրենց առանձնահատկությունները՝ կապված ազատազրկման ձևով պատիժ կրելու սոցիալական և բարոյահոգեբանական մեխանիզմների հետ:

Կարծում ենք, անհիմն է նաև պենիտենցիար հանցավորության մեջ ՔԿՀ աշխատակիցների կողմից կատարվող հանցանքները ներառելը, քանի որ դրանք չունեն ազատազրկման վայրերում հանցավորությանը բնորոշ առանձնահատկությունները, հետևաբար չեն կարող դասվել պենիտենցիար հանցագործությունների թվին:

Այսպիսով, միանալով առաջին խումբ գիտնականների կարծիքին՝ նշենք, որ ազատազրկման վայրերում հանցավորություն ասելով պետք է հասկանալ պենիտենցիար հանցավորությունը՝ իր սկզբնական նշանակությամբ, այսինքն՝ դատապարտյալների՝ հասարակությունից հարկադիր մեկուսացման պայմաններում պատժի կրման ընթացքում կատարվող հանցագործությունները: Այստեղից հետևություն՝ պենիտենցիար հանցավորության տարանջատումն ընդհանուր հանցավորությունից պայմանավորվում է հետևյալ երկու չափանիշներով. նախ՝ նոր հանցանքը կատարում է նախկինում այլ հանցանքի կատարման համար ազատազրկման դատապարտված անձը, և երկրորդ՝ հանցանքը կատարվում է ազատազրկման վայրում՝ ազատազրկման ձևով պատժի կրման ընթացքում:

Ազատազրկման վայրերում դատապարտյալները հիմնականում կատարում են բռնության գործադրմամբ զուգորդված հանցագործություններ (սպանություն, առողջությանը դիտավորությամբ ծանր վնասի պատճառում, խուլիգանություն, սեռական ոտնձգություններ) և հանցանքներ, որոնք խախտում են պատժի կատարման սահմանված կարգը (փախուստն ազատազրկման վայրից, պատիժն ի կատար ածող հիմնարկի գործեությանը խոչընդոտել, ազատազրկման ձևով պատիժը կրելուց խուսափել):

Պենիտենցիար հանցավորության գոյությունը պայմանավորված է ինչպես ընդհանուր հանցավորությանը բնորոշ

տնտեսական, սոցիալական, այնպես էլ միայն ազատազրկմանը բնորոշ սոցիալ-հոգեբանական գործոններով: Այս առումով բացասական դեր են կատարում հանրային վտանգավորություն ներկայացնող անձանց կենտրոնացումը մեկ վայրում, հանցագործների բացասական ազդեցությունը միմյանց վրա, միջանձնային կոնֆլիկտները, բանտային ենթամշակույթի իշխող դերը, դատապարտյալների ներգրավումը հակահասարակական, հաճախ՝ նաև հանցավոր խմբավորումների մեջ: Նշված գործոնների թվին կարելի է դասել նաև ՔԿՀ-ներում կենցաղային ապահովման ցածր մակարդակը, դատապարտյալների անգործությունը և այլն:

Հետևապես, գտնում ենք, որ ազատազրկման հիմնախնդիրների ուսումնասիրությունը, նոր հանցանքների կատարման պատճառների բացահայտումը և համապատասխան կանխարգելիչ միջոցների կիրառումը, անկասկած, կնպաստեն ազատազրկման վայրերում գոյություն ունեցող բացասական երևույթների վերհանմանը և հետագա կանխմանը:

Պենիտենցիար հանցավորությունը առանձնանում է դատապարտյալների իրավական կարգավիճակի առանձնահատկություններով, պատժի կրման պայմաններով, նման հաստատությունների մեկուսացմամբ, ինչպես նաև դատապարտյալների կյանքի «մութ» կողմերին առնչվող որոշակի սոցիալ-հոգեբանական գործոններով պայմանավորված քրեաիրավական արարքների յուրահատուկ շրջանակով: Այստեղ կարևոր դեր են խաղում բռնությամբ կատարվող տարբեր, այդ թվում՝ անձի դեմ ուղղված ծանր հանցագործությունները: Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ պետք է նշել, որ ընդհանուր և պենիտենցիար հանցավորության աճի կամ նվազման միտումները ոչ միշտ են համընկնում: Միևնույն ժամանակ պենիտենցիար հանցավորությունն իր վրա կրում է ինչպես ՔԿՀ-ներում, այնպես էլ հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների, գործընթացների ազդեցությունը:

Պենիտենցիար հանցավորության ուսումնասիրությանը բազմաթիվ աշխատություններ է նվիրել պրոֆ. Յու. Անտոնյանը: Այսպես, հեղինակը գրում է. «իրավախախտումների հիմնական մասը

կազմում են բռնությամբ կատարվող արարքները ...քիչ չեն նաև շահադիտական դրդումներով կատարվող իրավախախտումները, սակայն դրանց առանձնահատկությունն այն է, որ դրանցից շատերը բռնության արդյունք են կամ ընդհակառակը՝ դրա պատճառ... ագրեսիայի դրսևորմամբ կատարվող հանցագործությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ բռնությամբ կատարվող հանցագործություններ և բռնությամբ կատարվող զանցանքներ, որոնք չեն հաշվառվել որպես հանցագործություն: Բնականաբար երկրորդ խումբը ոչ միայն ավելի մեծ է, այլև ..... սնում է առաջին խմբին...»[7]:

Ելնելով վերը նշվածից, կարելի է ասել, որ ազատազրկման վայրերում հանցավորությանը նպաստող գործոնները, այսպես թե այնպես, պայմանավորված են ինչպես դատապարտյալների, այնպես էլ դատապարտյալների և ՔԿՀ աշխատակիցների փոխհարաբերությունների բնույթով: ՔԿՀ-ներում հանցագործությունների կատարման օբյեկտիվ պատճռներն են հանցագործությունների կատարմանն ինչպես անմիջականորեն նպաստող հանգամանքները, այնպես էլ քրեաիրավական հետևանքներ առաջացնող երևույթները՝ ՔԿՀ վարչակազմի բացթողումները, թերացումները, դատապարտյալների միկրոմիջավայրի առանձնահատկությունները, արտաքին ազդեցությունները:

Ուսումնասիրելով ազատազրկման վայրերում հանցավորության շարժընթացը՝ պետք է նշել, որ 2000-2011թթ Հայաստանի բոլոր քրեակատարողական հիմնարկներում միջին հաշվով տարեկան կատարվել է 25 հանցագործություն: 2007թ.-ին գրանցվել է պենիտենցիար հանցավորության ամենացածր ցուցանիշը՝ 11 հանցագործություն՝ 12 դատապարտյալի կողմից: Արդեն իսկ 2003թ.-ից նկատվում է ազատազրկման վայրերում կատարվող հանցագործությունների թվի կտրուկ աճ, մասնավորապես՝ 2003 թ.՝ 19 (21 դատապարտյալի կողմից), 2004թ.՝ 13 (15 դատապարտյալի կողմից), 2005թ՝ 38 հանցագործություն (42 դատապարտյալի կողմից), 2006թ.՝ 44 (47դատապարտյալի կողմից), 2007թ. 11 (11 դատապարտյալի կողմից), 2008՝ 16 (21 դատապարտյալի կողմից),

[7]Տե՛ս Криминология / под.общ. ред. В.Н.Кудрявцева, В.Е. Эминова, М., 1995, էջ 421:

2009թ.՝ 15 (18 դատապարտյալի կողմից), 2010թ.-ին հասնելով 56-ի (58 դատապարտյալի կողմից): 2011թ-ին պենիտենցիար հանցագործությունների թիվը կազմել է 27:

Պարզ է, որ 2000թ.-ի համեմատությամբ 2010թ. քրեակատարողական հիմնարկներում կատարվող հանցագործությունների թիվը ավելացել է 4.5 անգամ, առավել ևս եթե հաշվի առնենք այն փաստը, որ 2000թ.-ին 13 հանցագործություն կատարվել է 6789 դատապարտյալներից 15-ի կողմից, իսկ 2010թ.-ին՝ 56 հանցագործություն կատարվել է 4402 դատապարտյալներից 58-ի կողմից:

Այսպիսով, պետք է փաստել, որ Հայաստանում պենիտենցիար հանցավորության շարժընթացը ընդհանուր առմամբ խիստմտահոգիչ է: Մասնավորապես, սկսած 2003թ.-ից՝ նկատվում է ազատազրկման վայրերում կատարվող հանցագործությունների թվի աճ: Այսպես 2000թ.-ի կատարված 13 պենիտենցիար հանցագործությունների համեմատությամբ հանցագործությունների քանակը կրել է հետևյալ փոփոխությունները (աճել կամ նվազել է %-ով)՝

աղյուսակ 1

տարի	Հանցավորությունը ազատազրկման վայրերում (դատապարտյալների կողմից)	Շարժընթացը 2000թ. համեմատ (տարբերությունը %-ով)	
2000	13		
2001	13	0%	
2002	12	-7.6%	
2003	19	46.1 %	
2004	13	0 %	
2005	39	200 %	
2006	75	476 %	
2007	11	-15.3 %	
2008	16	23 %	
2009	15	15.3 %	
2010	56	330.7 %	

2011	27	107.69 %	

Հաշվի առնելով այն փաստը, որ ազատազրկման վայրերում պատիժ կրող հանցագործների թվում քիչ չեն նաև կրկնահանցագործները, այնուամենայնիվ պետք է նշենք, որ Հայաստանում պենիտենցիար հանցավորությունը կազմում է շատ փոքր թիվ: Նշված հանգամանքը ակնհայտ է հետևյալ աղյուսակից.

աղյուսակ 2

տարի	Ընդհանուր հանցավորություն	Հանցավորությունը ազատազրկման վայրերում (դատապարտյալների կողմից)
2000	12048	13
2001	11483	13
2002	12074	12
2003	11073	19
2004	10083	13
2005	8875	39
2006	9757	75
2007	8428	11
2008	9271	16
2009	14339	15
2010	15477	56
2011	16572	27

Նշված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ մեր կողմից ուսումնասիրված ժամանակահատվածում Հայաստանում պենիտենցիար հանցավորությունը կազմում է ընդհանուր հանցավորության ընդամենը 0,4 %-ը:

Առաջին հայացքից այս իրավիճակը խիստ կասկածելի է թվում, քանի որ ազատազրկման վայրերում պատիժ են կրում իրենց «գործում հմտացած» դատապարտյալները, որոնցից կարելի է

սպասել նոր հանցանքների կատարում: Սակայն պետք է նշել, որ հանցանքների կատարումը խիստ մեկուսացման և վարչակազմի կողմից մշտական հսկողության պայմաններում շատ ավելի է դժվարանում, քան ազատության մեջ: Իհարկե, այստեղ մեծ դեր ունի նաև ազատազրկման վայրերում հանցագործությունների լատենտայնության բարձր մակարդակը: Բանն այն է, որ ինչքան մեծ է գրանցված հանցագործությունների թիվը, այնքան ցածր է գնահատվում ՔԿՀ վարչակազմի աշխատանքը: Ուստի, պենիտենցիար հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների հավաստի լինելը խիստկասկածելի է թվում:

«Հանցավորությունն ազատազրկման վայրերում մեծ է ոչ միայն իր ծավալներով, այլև՝ վտանգավոր իր բնույթով, առանձնանում է դաժանությամբ. գրանցվում է դրանց չնչին մասը միայն»: Խորհրդային տարիներին ազատազրկվածների թվի և վերջիններիս կողմից կատարվող հանցագործությունների քանակի վերաբերյալ վիճակագրությունը գաղտնի էր: Ազատազրկման վայրերում կատարվող հանցագործությունների մասին գրեթե ոչինչ հայտնի չէր: Սակայն այդպիսիք կատարվել են ու դեռ կկատարվեն[8]:

Ազատազրկման վայրերում հանցավորության լատենտայնության հիմնական պատճառներից է նաև բանտային ենթամշակույթը:

Լատենտայնության բարձր աստիճանը հատկապես բնութագրական է համեմատաբար ոչ շատ վտանգավոր հանցագործություններին՝ ծեծ, խոշտանգում, բռնությամբ կատարվող արվամոլություն, խուլիգանություն և այլն: Վերջիններս որոշ չափով ընկալվում են որպես բնական, «բանտային կյանքին» բնորոշ երևույթներ:

Նման իրավիճակում ՔԿՀ-ներում հանցանք կատարած անձանց մոտ ձևավորվում է հակահիրավական վարքագծի դրսևորմանը նպաստող անպատժելիության և ամենաթողության զգացում: Ա.Ի.Դոլգովան այս կապակցությամբ արտահայտում է իր դիրքորոշումը՝ նշելով. «այնտեղ, որտեղ հանցավոր գործունեությունը չի կանխվում, մեղավորները չեն պատժվում և նրանց նկատմամբ չեն կիրառվում

[8] Տե՛ս Стуканов А.П.Кресты. История побегов. СПБ., 2001, էջ 66:

քրեական օրենսգրքով նախատեսված միջոցները, հանցավորությունն աճում է, ընդ որում՝ աճում է դիտավորությամբ կատարվող հանցագործությունների թիվը, հանցավորությունը ստանում է կազմակերպված բնույթ, նրանում ներգրավվում են նորանոր մարդիկ»[9]:

Դա բացատրվում է դատապարտյալների միջանձնային հարաբերությունների առանձնահատկությամբ (ինքնադատաստանի վախ, «իշխանության» կայուն հիերարխիկ բնույթ և այլն): Դատապարտյալների վարքագծի վրա ազդող հիմնական գործոններն են «քրեական աշխարհում» ընդունված օրենքները, նորմերը, սովորությունները, որոնք ուղղակիորեն արգելում են ցանկացած բնույթի համագործակցություն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ: «Պետք է ենթադրել՝ քանի որ պատժի կրման սահմանված կարգի դեմ ուղղված ոտնձգությունները պայմանավորված են նշված գործոնների էական ազդեցությամբ, ապա հենց այդ հանցագործություններին էլ բնութագրական է բնական լատենտայնությունը»[10]:

Մյուս կողմից էլ լատենտայնության պատճառը հենց քրեակատարողական հիմնարկների աշխատանքն է. քրեակատարողական հիմնարկի նպատակն է դատապարտյալների ուղղումը և նոր հանցագործությունների կանխումը:

«Ազատազրկման արդյունավետության մասին կարելի է դատել ըստ նրա, թե քրեակատարողական հիմնարկներում ազատազրկվածները կատարում են արդյոք նոր հանցագործություններ, հնարավորություն ունեն արդյոք նոր հանցագործություն կատարել պատժի կրման ընթացքում և զսպում է արդյոք հանցագործությունների կատարումից այլ դատապարտյալների տխուր օրինակը»: Սա է պատճառը, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը հաշվառումից հաճախ թաքցնում է հենց այն հանցագործությունները, որոնք ուղղակիորեն ոտնձգում են պատժի կրման կարգի դեմ: Այստեղ խոսքը, փաստորեն, պենիտենցիար հանցավորության արհեստական

---

[9] Տե՛ս Долгова А.И. Преступность и стратегия борьбы. - М.: Криминолог, ассоц., 1998, էջ 60:

[10] Տե՛ս Каретников И.В. Обстоятельства, детерминирующие преступность в исправительно-трудовых колониях. Москва, 1986г, էջ 13:

լատենտայնության մասին է:[11]

Կատարված հանցագործությունները հաշվառումից թաքցնելը հիմնականում դրսևորվում է քրեական գործ հարուցելուց հրաժարվելու մասին անհիմն որոշում կայացնելու, հանրորեն վտանգավոր արարքները ոչ թե որպես հանցագործություն, այլ որպես պատժի կրման սահմանված կարգի խախտում հաշվառելու մեջ և այլն:

Թերևս, տեղին չէ խոսել հանցավորության դեմ պայքարի արդյունավետության մասին՝ հիմնվելով թիվ 2 աղյուսակում տրված վիճակագրական տվյալների վրա, առավել ևս այն դեպքում, երբ համաներման ակտերի կիրառման արդյունքում ազատազրկման վայրերից հիմնականում ազատ են արձակվում դրական բնութագրվող, հանրային քիչ վտանգավորություն ունեցող դատապարտյալները, ինչի հետևանքով քրեակատարողական հիմնարկներում ազատազրկվածների գերակշիռ մասը կազմում են ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված, հակասոցիալական կայուն դիրքորոշում ունեցող անձինք, որոնցից շատերն էլ պատժի կրման սահմանված կարգի չարամիտ խախտողներն են և «հանցավոր ավանդույթների» ակտիվ տարածողները:

Ազատազրկման վայրերում լատենտայնության բարձր աստիճանով հատկապես աչքի են ընկնում անձի սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները: Պատճառն այն է, որ բռնության ենթարկված դատապարտյալները, որպես կանոն, աշխատում են հնարավորինս թաքցնել կատարվածը, քանի որ նման անձինք՝ ըստ բանտային օրենքների, ինքնաբերաբար համալրում են «բարոյալքվածների» շարքը՝ բանտային հիերարխիայի ամենաստորին օղակը:

2000-2011թթ ընկած ժամանակահատվածում Հայաստանի ազատազրկման վայրերում կատարվող հանցագործություններից ամենատարածվածը փախուստն է, որը կազմում է պեիտենցիար հանցավորության 32%-ը: 2000թ.-ին գրանցվել է փախուստի 2 դեպք՝ 6 դատապարտյալի կողմից, 2003թ.-ին՝ 3 դեպք՝ 5 դատապարտյալի կողմից,

[11] Տե՛ս Милюков С.Ф. Классификация скрытых преступлений по степени их латентности // Латентная преступность: Познание, политика, стратегия. М., 1993, էջ 234; Акутаев Р.М. Латентная преступность: Актуальность проблемы и понятие // Государство и право. 1997. № 12, էջ 85:

2004թ.-ին 3 դեպք՝ 3 դատապարտյալի կողմից: Իսկ ահա 2005-2006թթ ընդհանուր հանցավորության հետ մեկտեղ մեծանում է նաև փախուստների քանակը՝ 2005թ.-ին հասնելով 38-ի՝ 43 դատապարտյալի կողմից, իսկ 2006թ.-ին՝ 44-ի՝ 47 դատապարտյալի կողմից: Սակայն հետագայում այս թիվը կտրուկ նվազում է, մասնավորապես՝ 2007թ.-ին գրանցվել է փախուստի 2, 2008թ.-ին՝ 1, 2009թ.ին՝ 5, 2010թ.-ին՝ 1 դեպք: 2001-2002թթ և 2011թ.-ին Հայաստանի ազատազրկման վայրերից չի գրանցվել փախուստի և ոչ մի դեպք: /Տե՛ս աղյուսակ թիվ 3/:

աղյուսակ 3

Տարեթիվ	Դատապարտյալների կող-մից կատարված հանցագ. քանակ	այդ թվում՝ փախուստ	*Տոկոսը*
2000	13	2	*15.4%*
2001	13	0	*0%*
2002	12	0	*0%*
2003	19	3	*15.8%*
2004	13	3	*23%*
2005	39	38	*97.4%*
2006	75	43	*57.3%*
2007	11	2	*18.18%*
2008	16	1	*6.25%*
2009	15	5	*33.3%*
2010	56	1	*1.78%*
2011	27	0	*0 %*

Ազատազրկման վայրերից դատապարտյալների փախուստը իրենից հանրային մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործություն է, քանի որ դրա հետևանքով ընդհատվում է դատավճռի կատարումը, խափանվում է քրեակատարողական հիմնարկի բնականոն աշխատանքը, պահանջվում են մեծ ջանքեր և միջոցներ փախուստի դիմած դատապարտյալին բռնելու համար, և բացի այդ՝ ստեղծվում է անձի կողմից նոր հանցանք կատարելու վտանգ:

Փախուստի դիմած դատապարտյալներն ապրում են քողարկված կյանքով և հաճախ կատարում են ավելի ծանր հանցանքներ, քան այն,

որի համար պատիժ էին կրում ազատազրկման վայրերում: Փախուստի դիմած յուրաքանչյուր երրորդ դատապարտյալ կրկին դիմում է փախուստի, կարելի է ասել՝ «հակված է փախուստի»:[12]

Պենիտենցիար հանցավորության մեջ Հայաստանում երկրորդ տեղն է զբաղեցնում թմրանյութերի և հոգեներգործունեությունների ապօրինի շրջանառությունը: Այն կազմում պենիտենցիար հանցավորության 29.7%-ը:

Այս հանցագործության կատարման առավել շատ դեպքեր գրանցվել են 2010թ.՝ 39 հանցագործություն, որոնք կատարվել են 39 դատապարտյալների կողմից, իսկ առավել քիչ՝ 2006թ.-ին՝ 18 դեպք՝ 18 դատապարտյալի կողմից: 2007թ.-ին գրանցվել է այս հանցագործության 7 դեպք՝ 7 դատապարտյալի կողմից, 2008թ.-ին՝ 7 դեպք՝ 7 դատապարտյալի կողմից, 2009թ.-ին՝ 4 դեպք՝ 4 դատապարտյալի կողմից, 2011թ.-ին՝ 12 դեպք՝ 12 դատապարտյալի կողմից: 2000թ. և 2004-2005թթ. թմրանյութերի և հոգեներգործունեությունների ապօրինի շրջանառության դեպք չի գրանցվել: /Տե՛ս աղյուսակ թիվ 4/:

աղյուսակ 4

Տարեթիվ	Դատապարտյալների կողմից կատարված հանցագ. քանակ	այդ թվում՝ թմրանյութերի և հոգեներգործունեությունների ապօրինի շրջանառություն	Տոկոսը
2000	13	0	0 %
2001	13	2	15.4%
2002	12	1	8.33 %
2003	19	2	10.5 %
2004	13	0	0 %
2005	39	0	0 %
2006	75	18	24%
2007	11	7	63.63%
2008	16	7	43.75%

[12] Տե՛ս Ткачевский Ю.М., Прогрессивная система исполнения уголовных наказаний, Москва, 1997г. էջ 80:

2009	15	4	26.66%
2010	56	39	69.64%
2011	27	12	44.44 %

Այս կապակցությամբ պետք է նշել, որ թմրանյութերը և հոգեներգործուն նյութերը մշտապես մեծ տեղ են զբաղեցրել ազատազրկվածներից շատերի կյանքում, քանի որ հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում թմրանյութը լարվածությունը, տագնապայնությունը նվազեցնելու գրեթե միակ միջոցն է: Մյուս կողմից էլ դրանք բանտային ենթամշակույթի անբաժան տարրերն են: Հետևապես, կարելի է ենթադրել՝ որքան շատ են թմրանյութերի և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեպքերը պենիտենցիար հանցավորության մեջ, այնքան մեծ է «քրեական աշխարհում» ընդունված օրենքների, ավանդույթների ազդեցությունը բանտային կյանքում[13]:

Պենիտենցիար հանցավորության մեջ հաջորդ տեղը իրենց ծավալներով զբաղեցնում են բռնությամբ կատարվող հանցագործությունները՝ 25.5%: Սրանք առավել վտանգավոր հանցագործություններն են, որոնք, որպես կանոն, կատարվում են բացահայտ: Դրանց հետևանքները գրեթե հնարավոր չէ թաքցնել, հետևապես դրանց լատենտայնության մակարդակը բավականին ցածր է: Այս կապակցությամբ պետք է նշել, որ բռնությամբ կատարվող հանցագործությունների թվին է դասվում հանրային վտանգավորությամբ օժտված հակահրավական ցանկացած արարք, որը կատարվում է ֆիզիկական կամ հոգեկան բռնության գործադրմամբ:[14]

Ըստ վերը նշված չափանիշների 2000-2011թթ. ժամանակահատվածում կարելի է առանձնացնել բռնությամբ կատարվող հետևյալ հանցագործությունները՝ սպանություն, դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության

[13] Տե՛ս Старков О.В. Криминопенология: Учебное пособие. Москва, 2003г. էջ 150:
[14] Տե՛ս Гаухман Л.Д. Проблемы уголовно-правовой борьбы с насильственными преступлениями в СССР. Саратов, 1981, էջ 30: Сардюк Л.В. Психическое насилие как предмет уголовно-правовой оценки следователем. Волгоград, 1981, էջեր 4-15:

վնասի պատճառում, դիմադրություն իշխանության ներկայացուցիչներին, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործեությանը խոչընդոտելը, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, խուլիգանություն: Բռնությամբ կատարվող այլ հանցագործություններ նշված ժամանակահատվածում Հայաստանի ազատազրկման վայրերում չեն գրանցվել:

Քրեակատարողական հիմնարկներում բռնությամբ կատարվող հանցագործությունների թվում ամենատարածվածը պատիժն ի կատար ածող հիմնարկի գործեությանը խոչընդոտելու հետ կապված հանցագործություններն են: Մասնավորապես՝ դրանք կազմում են բռնությամբ կատարվող /ազատազրկման վայրերում/ հանցագործությունների 62%-ը և պենիտենցիար հանցավորության 5.8 %-ը: Այս հանցագործությունների առավել մեծ թիվ գրանցվել է 2000թ.-ին՝ 9 դեպք՝ 9 դատապարտյալի կողմից, իսկ ամենաքիչը՝ 2008թ.-ին՝ 1 դեպք՝ 1 դատապարտյալի կողմից: Պետք է նշել, որ 2007թ.-ին պատիժն ի կատար ածող հիմնարկի գործեությանը խոչընդոտելու դեպք չի գրանցվել:

Պենիտենցիար հանցավորության մեջ բռնությամբ կատարվող հանցագործությունների շարքում հաջորդ տեղն է զբաղեցնում դիտավորությամբ առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնասի պատճառումը: Այն կազմում է պենիտենցիար հանցավորության 15.8%-ը, իսկ բռնությամբ կատարվողների /ազատազրկման վայրերում/՝ 22.7%-ը: Մասնավորապես 2006թ.-ին գրանցվել է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու 7 դեպք՝ 7 դատապարտյալի կողմից, իսկ 2007թ.-ին՝ 1 դեպք՝ 1 դատապարտյալի կողմից: 2010թ.-ին գրանցվել է դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու 2 դեպք՝ 2 դատապարտյալի կողմից, 2011թ.-ին՝ 4 դեպք՝ 4 դատապարտյալի կողմից և դիտավորությամբ առողջութանը միջին ծանրության վնաս պատճառելու 2 դեպք՝ 2 դատապարտյալի կողմից: Պետք է նշել, որ 2000-2002թթ և 2008-2009թթ. Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում չի գրանցվել դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու և ոչ մի դեպք:

Բռնությամբ կատարվող հանցագործությունների շարքում՝ ըստ 2000-2011թթ. վիճակագրական տվյալների, հաջորդ տեղն է զբաղեցնում խուլիգանությունը: Այն կազմում է բռնությամբ կատարվող հանցագործությունների 13.9%-ը և պենիտենցիար հանցավորության 3.5%-ը: 2001-2006թթ. և 2010թ Հայաստանի ազատազրկման վայրերում գրանցվել է խուլիգանության տարեկան 1-ական դեպք, 2008թ.-ին՝ 2 դեպք՝ 2 դատապարտյալների կողմից, և 2011թ.-ին՝ 3 դեպք՝ 3 դատապարտյալների կողմից: 2000թ., 2003թ., 2007թ. և 2009թ. խուլիգանության դեպք ՀՀ ՔԿՀ-ներում չի գրանցվել:

Նշենք, որ խուլիգանության կատարումը հող է նախապատրաստում բռնության համար. հաճախ նախկինում հենց խուլիգանություն կատարելու համար դատապարտված անձինք են հետագայում դառնում բռնությամբ զուգորդված հանցագործությունների կատարողներ:[15]

2000-2011թթ ՀՀ ՔԿՀ-ներում գրանցվել է սպանության ընդամենը մեկ դեպք՝ 2000թ.-ին, ինչը շատ հուսադրող է՝ համեմատած 20-րդ դարի 90-ական թվականների հետ, երբ ազատազրկման վայրերում գրանցված սպանությունների թիվը կազմում էր բռնությամբ կատարվող հանցագործությունների 11.1%-ը և պենիտենցիար հանցավորության 2.7 %-ը:

Բռնությամբ կատարվող այլ հանցագործություններ Հայաստանի ազատազրկման վայրերում նշված ժամանակահատվածում չեն գրանցվել:

Մեր կողմից ուսումնասիրված ժամանակահատվածում Հայաստանի ազատազրկման վայրերում հանցավորության մեջ հաջորդ տեղը զբաղեցնում են շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունները: Դրանք կազմում են պենիտենցիար հանցավորության 58%-ը: Ընդ որում, Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում շահադիտական դրդումներով կատարվող հանցագործություններից գրանցվել են միայն խարդախությունը և գողությունը: Այս կապակցությամբ պետք է նշել, որ շահադիտական դրդումներով կատարվող

[15] Տե՛ս Кузнецова Н.Ф. Преступление и преступность. Москва, 1969, էջ 36:

հանցագործությունները օժտված են լատենտայնության բարձր աստիճանով: Ընդ որում, վերջինս շատ ավելի բարձր է՝ համեմատած այլ հանցագործությունների լատենտայնության հետ: Նշված հանգամանքը պայմանավորվում է մի շարք պատճառներով: Մասնավորապես, հաճախ տուժողները իրենք են խուսափում գողության մասին հայտնել համապատասխան մարմիններին՝ վախենալով բանտային ենթամշակույթի նորմերը խախտելու համար նախատեսված հաշվեհարդարից, իսկ երբեմն նույնիսկ չեն հասկանում, թե ինչպես են կորցրել իրենց իրերը (առավել հաճախ նման դեպքերը պատահում են այն անձանց հետ, ովքեր գտնվել են ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ): Այսինքն, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ ազատազրկման վայրերում շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունները շատ ավելի են, քան այդ մասին է վկայում պաշտոնական վիճակագրությունը:

Ազատազրկման վայրերում շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունների շարքում առավել տարածվածը գողությունն է: Այն կազմում է շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունների 70%-ը, և ընդհանուր պենիտենցիար հանցավորության 3.8%-ը: Այս հանցագործության առավել մեծ թիվ գրանցվել է 2006թ.-ին՝ 5 դեպք՝ 5 դատապարտյալի կողմից:. Նշված հանցագործության կատարման տարեկան 1-ական դեպք է գրանցվել 2009-2011թթ: Մնացած տարիներին Հայաստանի ազատազրկման վայրերում չի գրանցվել գողության և ոչ մի դեպք:

Շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունների ցանկում հաջորդը, ինչպես արդեն վերը նշվեց, խարդախությունն է, որը կազմում է շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունների 30%-ը և պենիտենցիար հանցավորության 1.9%-ը:

Հայաստանի ազատազրկման վայրերում կատարվող այլ հանցագործությունները կազմում են պենիտենցիար հանցավորության չնչին մասը (7.1%-ը), ուստի աննպատակահարմար ենք գտնում դրանց առանձին վերլուծությունը:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ուսումնասիրված ժամանակահատվածում՝ 2000-2011թթ, ՀՀ ազատազրկման վայրերում նկատվում է բռնությամբ կատարվող հանցագործությունների թվի նվազում և ազատազրկման վայրերին հատուկ այնպիսի հանցագործության աճ, ինչպիսին է փախուստը: Հայաստանում պենիտենցիար հանցավորության ընդհանուր պատկերը արտացոլված է հետևյալ աղյուսակում.

աղյուսակ 5

ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ_ՈՒՄ	%
Փախուստ	32
Թմրանյութերի և հոգեմետնյութերի ապօրինի շրջ.	29.7
Բռնությամբ կատարվող հանցագործություններ Որոնցից ՔԿՀ վարչակազմի գործեությանը խոչընդոտելը Դիտ. առողջ. թեթև, ծանր և միջին վնասի պատճառում Խուլիգանություն	25.5 15.8 5.8 3.5
Ծահադիտական դրդումներով կատարվող հանց. Որոնցից. Գողություն Խարդախություն	5.8 3.8 1.9
Պենիտենցիար այլ հանց.	7.1
Ընդամենը	100

Ստեղծված իրավիճակը վկայում է պատժի նպատակների իրականացման, պատժի կրման բարենպաստ պայմանների ապահովման ուղղությամբ ՔԿՀ-ների վարչակազմի կողմից տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտության մասին: Աշխատանքի հաջորդ պարագրաֆներում կփորձենք վերհանել պենիտենցիար հանցավորությանը նպաստող

պատճառները, գտնել դրանց կանխման ուղիներ:

§ 2 Պենիտենցիար հանցավորության զոհ[16] - դատապարտյալների կրիմինալոգիական բնութագիրը

Կրիմինոլոգիական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբ խոսքը վերաբերում է հանցագործությունների կանխման կամ հանցավոր արարքներից հասարակության և պետության շահերը պաշտպանելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներին, ապա առաջին հերթին ուշադրությունը սևեռվում է հանցագործի անձի, նրա վարքագծի վրա: Հաճախ հաշվի չի առնվում այն, որ թեև հանցագործը հակահիրավական գործընթացում գլխավոր դերակատարն է, սակայն ոչ պակաս դերակատարություն է ունենում նաև զոհը: Ինչպես իրավացիորեն նշում են Վ.Ի.Պոլուբինսկին և Ա.Լ.Սիտկովսկին, հանցագործությունը մեծ մասամբ համակարգային երևույթ է, որը ձևավորվում է երեք փոխկապակցված տարրերով՝ իրավախախտում, հանրորեն վտանգավոր արարք և տուժող[17]:

Ազատազրկման վայրերում բավականին հեշտ է որոշել հանցագործության պոտենցիալ զոհերի շրջանակը, ովքեր պետք է դառնան կանխարգելիչ միջոցառումների իրականացման օբյեկտ: Այդ իսկ պատճառով անչափ կարևոր է ազատազրկման վայրերում հանցագործության զոհերի՝ քրեաիրավական առումով «առավել

---

[16] Ըստ 1985թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 40/34 բանաձևով ընդունված «Հանցագործությունների և զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրի»՝

1. «Զոհեր» տերմինի տակ հասկացվում են անձինք, որոնց անհատապես կամ կոլեկտիվ կերպով անդամ պետությունների գործող ազգային քրեական օրենքների, ներառյալ իշխանության հանցավոր չարաշահումը արգելող օրենքների խախտմանը հանգեցնող գործողության կամ գործողության բացակայության հետևանքով վնաս է հասցվել, ներառյալ մարմնական վնասվածքները, բարոյական և նյութական վնասները, հոգեկան տանջանքները կամ նրանց հիմնարար իրավունքների էական կրճատումը:

2. Սույն Հռչակագրին համապատասխան, այս կամ այն անձը կարող է «զոհ» համարվել անկախ նրանից, թե իրավախախտը եղել է բացահայտված, բանտարկված, դատի հանձնված կամ դատապարտված, նաև անկախ իրավախախտի և զոհի միջև եղած բարեկամական հարաբերություններից: «Զոհ» տերմինը համապատասխան դեպքերում ներառում է նաև մերձավոր բարեկամներին, զոհի անմիջական խնամակալներին, նաև անձանց, որոնց վնաս է հասցվել աղետալի վիճակում գտնվող զոհերին պաշտպանելու կամ վիկտիմիզացիան կանխելու փորձ կատարելիս:

[17] Տե՛ս Полубинский В. И., Ситковский А. Л. Теоретические и практические основы криминальной виктимологии: моногр. М. 2006, էջ 4:

խոցելի» դարձնող անձնային առանձնահատկությունների բացահայտումը: Տվյալ դեպքում խոսքը անձի վիկտիմայնության մասին է, ինչը տարբեր գիտնականների կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում[18]:

Պետք է նշել, որ ոչ միայն վիկտիմայնությունը, այլև անձի վարքագիծը կարող է հանցագործության զոհ դառնալու պատճառ հանդիսանալ: Այդ դեպքում տեղին է խոսել վիկտիմային վարքագծի մասին: Օրինակ, բանտային ենթամշակույթը, ավելի կոնկրետ՝ նրա օրենքները խախտող թեկուզ անզգույշ մի խոսքը, կարող է դրդել հանցանքի, ընդ որում՝ բռնությամբ զուգորդված:

Վիկտիմայնություն ասելով հասկանում ենք հարաբերականորեն կայուն ֆիզիոլոգիական, հոգեբանական և /կամ/ սոցիալական հատկանիշների ամբողջություն, որը արտաքին գործոնների ազդեցության հետևանքով պայմանավորում է անհատի՝ որպես կանոն, որոշակի տեսակի՝ տվյալ դեպքում ազատազրկման վայրերում կատարվող պենիտենցիար հանցագործություններից զոհ դառնալու հավանականությունը[19]:

Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման համար անհրաժեշտ է, որ ՔԿՀ-ների աշխատակիցները ժամանակին կարողանան առանձնացնել վիկտիմայնությամբ աչքի ընկնող դատապարտյալներին: Հարկ է, որ քրեակատարողական համակարգի աշխատակիցները հատուկ մասնագիտական գիտելիքների կիրառմամբ կարողանան առանձնացնել նշված անձանց վիկտիմայնության ձևավորմանը նպաստող գործոնները կամ դրանց ամբողջությունը, տիրապետեն պենիտենցիար հանցագործության զոհերի անձնային առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների: Միայն այս դեպքում է հնարավոր վիկտիմալոգիական առումով հետաքրքրություն ներկայացնող կոնկրետ անձանց նկատմամբ ձեռնարկվող կոնկրետ միջոցառումների արդյունավետ

---

[18] Տե՛ս Франк Л. В. Виктимология и виктимность: Учебное пособие. - Душанбе, 1972. էջ 22; Ривман Д. В. Виктимологические факторы и профилактика преступлений. Л., 1975. էջ 13; В.Я.Рыбальская, Виктимологические исследования в системе криминологической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. Вып.33.-М.: «Юрид. лит-ра», 1980. էջ 33:

[19] Տե՛ս Репецкая А. Л. Виновное поведение потерпевшего и принцип справедливости в уголовной политике. Иркутск, 1994. էջ 14:

կազմակերպումը[20]:

Վիկտիմալոգիայի տեսանկյունից դատապարտյալների վիկտիմային առանձնահատկությունների տիպաբանությունը պետք է նպաստի նախ՝ ազատազրկման վայրերում պենիտենցիար հանցավոր վարքագծի մեխանիզմում տուժողի դերի և տեղի որոշմանը, երկրորդ՝ ազատազրկման դատապարտված անձանց վիկտիմային առանձնահատկությունների ուսումնասիրմանը և երրորդ՝ անհատական և խմբակային վիկտիմային վարքագծի դրսևորման պատճառների և պայմանների շրջանակի հստակեցմանը:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի խնդիրն է տուժողի անձնային առանձնահատկությունների իմացությունը և կանխարգելիչ աշխատանքների իրականացման ընթացքում դրանք հաշվի առնելը:

Ուսումնասիրելով զոհի վիկտիմային վարքագծի առանձնահատկությունները՝ Վ.Ի.Զադորոժնին առանձնացնում է հետևյալները՝ սոցիալ-ժողովրդագրական, կրթամշակութային, բարոյական, հոգեբանական, քրեաիրավական[21]: Կարծում ենք, սակայն, նշվածները ամբողջությամբ չեն կարող արտացոլել պենիտենցիար հանցագործությունների զոհ դարձած դատապարտյալների անձնային բոլոր առանձնահատկությունները, ուստի առաջարկում ենք այդ շարքը համալրել հետևյալներով՝

1. Հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական /տարիք, առողջական վիճակ, ալկոհոլային, թմրանյութային հարբածություն և այլն/,
2. դատապարտյալի անձնային սոցիալ–հոգեբանական առանձնահատկություններ,
3. դատապարտյալի կարգավիճակը բանտային հիերարխիայում
4. քրեաիրավական առանձնահատկություններ /դատվածություն, հանցագործության բնույթ/,
5. պենիտենցիար կամ քրեակատարողական հատկանիշներ /անձի վերաբերմունքը պատժի կրմանը/,
6. նյութական վիճակով պայմանավորված հատկանիշներ

[20] Տե՛ս Минская В. С. Индивидуализация уголовной ответственности с учетом неправомерного или безнравственного поведения потерпевшего // Сов. юстиция-1970. №20, էջ 11:

[21] Տե՛ս Задорожный В. И. Концептуальные основы виктимологической профилактики преступлений: Дис. ... д-ра юрид. наук. М: Академия управления МВД России, 2006, էջեր 54-55:

7. բարոյա-հոգեբանական հատկանիշներ:

Դատապարտյալ զոհի անձը բնութագրող նշված հատկանիշների ուսումնասիրությունը կօգնի կանխատեսել կոնկրետ անձի կողմից վիկտիմային վարքագիծ դրսևորելու հնարավոր գրեթե բոլոր իրավիճակները, ինչպես նաև՝ ձեռնարկել միջոցառումներ դրանց կանխման ուղղությամբ:

Այսպես, ուսումնասիրելով պենիտենցիար հանցագործության զոհ դարձած դատապարտյալի հոգեկան և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ պետք է նշել, որ տարիքային առանձնահատկություններն իրենցից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում առաջին հերթին այն առումով, որ զարգացման յուրաքանչյուր փուլում անձը և՛ սոցիալապես, և՛ ֆիզիկապես ենթարկվում է որոշակի փոփոխությունների: Ստորև ներկայացված են ՀՀ քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների շրջանում մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները, մասնավորապես՝ առավել բարձր վիկտիմայնությամբ աչքի է ընկնում 25-29 տարիքային խումբը /38.4%/, ինչպես նաև 29-39-ը /28.7%/, այնուհետև վիկտիմայնության աստիճանը նվազում է 18-24՝ 18,4% և 40 և ավելի տարիքային խումբը կազմող անձանց մեջ՝ 14,5%:[22]

Ըստ պենիտենցիար վիկտիմիզացման տեսակների՝ տարիքային վիկտիմայնությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարման դեպքում առավել վիկտիմային » են 18-24 տարեկանները /34.7%/: Նրանք կազմում են առավել ռիսկային տարիքային խումբը: Նրանք, որպես կանոն, առաջին անգամ են դատապարտված ազատազրկման, չունեն կյանքի մեծ փորձ, աչքի չեն ընկնում զգուշավորությամբ և ֆիզիկական ուժով, բայց, այդուհանդերձ, բավականին ակտիվ են, ինչի պատճառով էլ առավել հաճախ են հայտնվում անձի դեմ ուղղված տարաբնույթ հանցագործությունների զոհի դերում: Բռնությամբ կատարվող ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման դեպքում /սպանություն, առողջությանը ծանր վնասի պատճառում և այլն/ վիկտիմային

[22] https://books.google.am

առումով առավել վտանգավոր են 29-39 տարեկանները /28%/, իսկ 50-ից բարձր տարիք ունեցող անձինք օժտված են վիկտիմայնության ցածր ցուցանիշով՝ 9.2%:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների զոհերի տարիքային առանձնահատկությունները ևս ունեն որոշակի յուրահատկություններ: Այսպես, 30-39 տարեկաններն առավել բարձր վիկտիմայնություն ունեն /40%/: Նշված հանցագործությունների դեպքում վիկտիմայնության առավել ցածր աստիճանով օժտված են 18-24 տարեկանները/ 8.5%/: Դա պայմանավորված է առավելապես նրանով, որ այս տարիքում անձը տնօրինում է ավելի քիչ նյութական բարիքներ, քան տարիքային այլ խմբերին պատկանող դատապարտյալները, բացի այդ, երևի հետաքրքրությունների շրջանակն է այլ:[23]

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատազրկման վայրերում կատարվող հանցագործություններից զոհ են դառնում հիմնականում ակտիվ համարվող՝ երիտասարդ և միջին տարիք ունեցող անձինք: Հանցագործությունների կատարման պահին զոհերի 76.5%-ն են կազմում լիովին առողջ անձինք՝ առանց տեսանելի որևէ շեղումների: Իսկ հաշմադամ կամ առողջական որոշակի խնդիրներ ունեցող անձինք կազմում են 23.5%-ը: Ազատազրկման դատապարտվածների շարքում քիչ չեն նաև հոգեկան խանգարումներով տառապողները: Նման իրավիճակների առաջացմանը նպաստում են, առաջին հերթին, անձի օրգանիզմում առկա տարբեր ախտահարումներ՝ վնասվածքներ, հիվանդություններ /սոմատիկ/, ալկոհոլային թունավորում և այլն: Հոգեկան խանգարումների սրմանը նպաստում են նաև որոշակի սոցիալական գործոններ, մասնավորապես՝ ազատազրկման վայրում գտնվելը, ինչպես նաև՝ հակասոցիալական կենսաձևը: Տ. Ն. Ժուրավլյովան գտնում է, որ հանցավոր գործեությամբ երկարատև զբաղվելը կամ հակահասարակական կենսաձև վարելը և այդ կապակցությամբ տարիներ շարունակ ազատազրկման վայրերում գտնվելը նպաստում են հոգեկան խանգարումների առաջացմանը և զարգացմանը[24]:

---

[23] Տե՛ս նույն տեղում:

[24] Տե՛ս Журавлева Т.Н. Институт принудительных мер медицинского характера в законодательстве Российской Федерации: Дис. ... канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2002, էջ 29:

Տեսության մեջ, ինչպես նաև պրակտիկայում մեծ տարածում է գտել այն կարծիքը, ըստ որի՝ հոգեկան խանգարումներով տառապող անձինք առավել հաճախ են դառնում հանցագործության զոհ, քան հոգեպես առողջները, այսինքն՝ անառողջների վիկտիմայնությունը շատավելի բարձր է[25]:

Անխոս, մարդու վիկտիմային վարքագիծը կախված է նրա հոգեկան վիճակից: Հոգեկան խանգարումները նպաստում են անձի վիկտիմիզացմանը, խթանում վիկտիմային հայացքների, սովորությունների և պահանջմունքների ձևավորումը: Հոգեկան խանգարմամբ տառապող մարդուն բնորոշ են տագնապայնությունը, ինչպես նաև ագրեսիվությունը և դաժանությունը, որոնք հանգեցնում են ինքնազգացողության կտրուկ վատթարացման, սեփական վարքագիծը վերահսկելու անկարողության և որպես հետևանք՝ վիկտիմային արարքների կատարման: Ուսումնասիրելով բռնությամբ զուգորդված հանցագործության զոհի հոգեկան շեղումները՝ Ս. Ա Պոտապովը իրավացիորեն նշում է, որ «հոգեկան խանգարումներով տառապող անձինք, որոնց մեջ խաթարված է իրականությունը ճիշտ ընկալելու և արտացոլելու ունակությունը, հաճախ դառնում են խոցելի իրավախախտումների նկատմամբ, ընդ որում՝ նման հատկանիշի ձևավորման գործում որոշակի դեր ունեն հենց հոգեկան հիվանդության առկայությամբ պայմանավորված գործոնները[26]: Հոգեպես անառողջ անձանց վիկտիմայնության ձևավորման մեջ կարևոր դերակատարություն ունեն հոգեպաթոլոգիական այնպիսի գործոններ, ինչպիսիք են զառանցային համախտանիշները, հալյուցինացիաները, շարժողական գրգռվածությունը: Նշված վիճակներն են հիմնականում պայմանավորում հոգեպես անառողջ անձանց պենիտենցիար վիկտիմիզացմանը նպաստող ոչ ադեկվատ և ագրեսիվ

[25] Տե՛ս Рыбальская В.Я. Виктимологическое исследование в системе криминологической разработки проблем профилактики преступлений есовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. М., 1980, էջ 33; Schafer S. The victim and his criminal. - New York: Random House publ., 1968, էջեր 43-44; Минская В.С., Чечелъ Г.И. Виктимологические факторы и механизм преступного поведения. - Иркутск: Изд. Иркутского ун-та, 1988, էջեր 80-84, 85:

[26] Տե՛ս Потапов С. А., Психические аномальные жертвы насильственных преступлений // Человек против человека. Преступное насилие / Сб. ст. под общ. ред. Ю.М. Антоняна, С.Ф. Милюкова. - СПб., 1994, էջ 120:

գործողությունների կատարումը:[27]

Որոշակի հոգեկան խանգարումներով տառապող անձինք ունակ են կիրառելու իրենց ունեցած հմտությունները, գիտելիքները, պահպանելու սոցիալական կապերը և սոցիալական միջավայրին հարմարվելու ունակությունը: Այդպիսի անձանց հոգեկան ոլորտը լիովին ախտահարված չէ, ինչը կարող է նպաստել անձի սոցիալական ադապտացմանը:

Այսպիսով, գտնում ենք, որ ճիշտ չեր լինի բացառել հոգեկան շեղումներ ունեցող մեղսունակ զոհերի դերը հանցագործության կատարման մեխանիզմում: Միաժամանակ շատ դժվար է տալ այդ դերի գնահատականը, քանի որ հոգեկան խանգարումն ինքնին ունակ չէ ծնելու վիկտիմային կամ հանցավոր վարքագիծ: Յու.Մ.Անտոնյանը և Ս.Վ.Բորոդինը այս կապակցությամբ ուղղակիորեն նշում են. «եթե հոգեկան խանգարումը հանրորեն վտանգավոր գործողության պատճառ է՝ հանցանք չկա»[28]:

Հոգեկան խանգարումը ոչ մի կերպ չի կարող լինել վիկտիմիզացման պատճառ կամ շարժառիթ. այն ունակ է միայն անհրաժեշտ պայմաններ ստեղծելու վերջիններիս իրականացման համար: Այսպիսով, կարելի է ասել, որ հոգեկան խանգարումը անձի՝ սեփական վարքագիծը վերահսկելու կարողությունը թուլացնող և դրանով իսկ վերջինիս վիկտիմայնության ձևավորմանը նպաստող գործոն է:

Անձի հոգեկան և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները վերջինիս վիկտիմիզացման գործընթացում «կատալիզատորի» դեր են խաղում: Դրանք կարող են ինչպես նպաստել, այնպես էլ խոչընդոտել անձի պենիտենցիար վիկտիմիզացմանը, ինչպես արագացնել, այնպես էլ դանդաղեցնել մոտիվացիայի ձևավորումը, նպաստել մոտիվացիայի իրագործմանը անհապաղ կամ հետաձգել դրա իրականացումը որոշակի ժամկետով: Այսպիսով, անձի հոգեկան և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝

[27] Տե՛ս Жариков Н.М.., Морозов Г.В., Хритинин Д.Ф. Судебная психиатрия. - М.: Изд. группа ИНФРА М - НОРМА, 2006, էջ 53:
[28] Տե՛ս Антонян Ю. М., Бородин С. В. Преступность и психические аномалии. - М.: Наука, 1987, էջ 29:

1. ներգործում են ֆիզիոլոգիական և հոգեբանական գործընթացների, իսկ դրանց միջոցով նաև մոտիվացիայի ձևավորման վրա,

2. ազդում են ինչպես սեփական հնարավորությունները, այնպես էլ ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները ադեկվատգնահատելու ունակության վրա,

3. ինքնատիպ «կատալիզատորի» դեր են խաղում վիկտիմայնության ձևավորման գործում:

Անձի վիկտիմայնությունը ենթադրում է վերջինիս՝ հանցագործության զոհ դառնալու առավել մեծ հնարավորություն, որի իրագործումը, սակայն, կախված է նաև մի շարք այլ հանգամանքներից:

Ազատազրկման պայմաններին հարմարվելու կապակցությամբ դատապարտյալի անձնային սոցիալ-հոգեբանական որակների ուսումնասիրությունը ևս մեծ նշանակություն կարող է ունենալ պենիտանցիար հանցավորության զոհ -դատապարտյալների վիկտիմային վարքագծի գնահատման համար:

Մարդու վարքագիծը, այդ թվում՝ վիկտիմային, պայմանավորված է վերջինիս արժեքային համակարգով, պատկերացումներով, սովորություններով, որոնք կրում են տվյալ մարդու՝ միջավայրում ձևավորված բարքերի ազդեցությունը[29]: Սակայն, պետք է նշել, որ սոցիալական միջավայրն ազատության և անազատության պայմաններում էապես տարբեր է:

Այսպես, ազատության մեջ անձի՝ նախկինում ունեցած սոցիալական կապերը, կյանքի մասին պատկերացումները անազատության պայմաններում չեն կարող լիովին ընկալվել, և ավելին՝ իրականացվել: Դրանք ուղղակի կորցնում են իրենց արդիականությունը:

Միջավայրին հարմավելու ունակությունը հատուկ է ցանկացած կենդանի էակի: Սակայն մարդու՝ հարմարվելու գործընթացում կենսաբանական մեխանիզմների հետ մեկտեղ մեծ դեր են խաղում նաև սոցիալական գործոնները[30]: Ժամանակի ընթացքում

[29] Տե՛ս Кудрявцев В. Н. Преступность и нравы переходного общества. М.: Юристъ, 2002, էջ 19:
[30] Տե՛ս Буева Л. П.. Проблемы деятельности личности в марксистской и буржуазной социологии // Исторический материализм как теория социального познания и деятельности. М., 1972, էջեր 44-45:

անհատի մեջ ձևավորվում է ադապտացիոն մեխանիզմ՝ հիմնված ոչ միայն ֆիզիոլոգիական հարմարվողականության, այլև միջանձնային հարաբերությունների վերափոխման վրա: Այսպիսով, ուսումնասիրվող երևույթի էությունը անձի կանսաբանական և սոցիալական ադապտացումն է նոր կենսապայմաններին, կանոնակարգին, սոցիալական նոր միջավայրին[31]:

Ադապտացման գործընթացի առանձնահատկությունը կապված է ենթամշակույթի պահանջներին ազատազրկվածների հարմարվելու հետ: Բանտային ենթամշակույթը հիմնվում է դատապարտյալների դասակարգման վրա, ինչը ենթադրում է անձի՝ բանտային հիերարխիայում որոշակի կարգավիճակ և դրանով իսկ պայմանավորված որոշակի իրավունքներ և պարտականություններ: Դատապարտյալի ընտրության ազատությունը, որպես կանոն, սահմանափակվում է բանտային օրենքներով, որոնց խախտումը պատժելի է ազատազրկվածների հանրության կողմից[32]:

Հաճախ կարող է թվալ, թե դատապարտյալը լիովին հարմարվել է քրեակատարողական հիմնարկի միջավայրին, բայց իրականությունն այլ է: Այս դեպքում խոսքը կեղծ, թվացյալ հարմարվողականության, դրա ձևացման մասին է[33]: Դատապարտյալների հիմնական մասը բացասաբար է վերաբերվում կեղծ ադապտացված դատապարտյալներին, քանի որ վերջիններս համագործակցում են վարչակազմի հետ՝ ելնելով իրենց նեղ անձնական շահերից: Հենց նրանք էլ հաճախ խախտում են պատժի կրման պայմանները, իրենց վարքագծով դառնում խմբակային ընդհարումների և զանգվածային անկարգությունների պատճառ[34]:

Չադապտացված դատապարտյալները շրջահայաց չեն, հակված են ալկոհոլամոլության և թմրամոլության, կոնֆլիկտային են և չհարմարվող: Հարմարվելու անընդունակությունը, բանտային հիերարխիայում գրաված ցածր դիրքը դառնում են հաճախակի ընդհարումների պատճառ[35]: Մեր կողմից կատարված

[31] Տե՛ս Тюгаева Н. А. Понятие адаптации личности осужденного к условиям отбывания наказания в ИТК // Личность преступника: криминологический и исправительно-трудовой аспекты: Труды PBUI МВД СССР. Рязань, 1977. Вып. 6, էջ 222:
[32] Տե՛ս Кудрявцев В. Н. Стратегии борьбы с преступностью. М.: Юристъ, 2003, էջ 274:
[33] Տե՛ս Корелъ.Л. В Социология адаптаций: Вопросы теории, методологии и методики. Новосибирск: Наука, 2005, էջ 398:
[34] http://lawtoday.ru/razdel/biblo/yur-psix/077.php
[35] Տե՛ս Усс В. А., Лишение свободы. М.: 1985, էջ 54:

ուսումնասիրությունները թույլ են տալիս ըստ ադապտացման մակարդակի և որակի առանձնացնել առավել վիկտիմային դատապարտյալների հետևյալ խմբերը՝

• Բացարձակապես չադապտացված և նույնիսկ հակահասարակական վարքագիծ դրսևորող դատապարտյալներ: Որպես կանոն, նրանք տարիքով մեծ, հաշմանդամ և հոգեկան խանգարումներով տառապող անձինք են: Այդպիսի մարդիկ սովորաբար չեն հետևում իրենց անձնական հիգիենային, ինչն ինքնին ունի վիկտիմային նշանակություն: Այս խմբին կարելի է դասել նաև «բարոյալքվածների» դասը կազմող դատապարտյալներին՝ պասիվ համասեռամոլներ, սեռական հանցագործությունների համար դատապարտված անձինք, «բանտային օրենքները» խախտած դատապարտյալներ:

• Կեղծ ադապտացված դատապարտյալներ: Այս խումբն են կազմում ուղղման գործընթացի նկատմամբ դրականորեն տրամադրված դատապարտյալները: Վերջիններս՝ չնայած նրան, որ համագործակցում են վարչակազմի հետ, այնուամենայնիվ, որոշակի անձնական նպատակների հասնելու համար թույլ են տալիս կանոնակարգի խախտումներ, ինչով էլ առաջ են բերում մյուս դատապարտյալների դժգոհությունը:

Դատապարտյալների ադապտացիոն գործընթացն իր հիմքում ունի հստակ չափանիշներ և պայմանականորեն կարող է բաժանվել փուլերի[36]: Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ զոհերի զգալի մասը /23.4%/ ենթարկվել են հանցավոր ոտնձգության ադապտացիայի հենց սկզբնական փուլում /1-4 ամիս/: Այս ընթացքում դատապարտյալը սկսում է գիտակցել, որ «բանտը» ոչ թե վերացական հասկացություն է, այլ՝ իրականություն: Ուստի, դատապարտյալը պետք է ունակ լինի արագ կողմնորոշվելու ստեղծված իրավիճակում և ընտրելու վարքագծի՝ իր համար ընդունելի և առավել անվտանգ տարբերակ[37]:

Ուրեմն, անհրաժեշտ է, որ ադապտացման սկզբնական փուլում դատապարտյալները գտնվեն վարչակազմի ուշադրության

[36] Տե՛ս Исправительно-трудовая психология / Под ред. Глоточкина А. Д., Пирожкова В. Ф.. Рязань, 1985, էջ 176:
[37] Տե՛ս Пенитенциарная криминология: Учебник / Под ред. Ю. М. Антоняна, А. Я. Гришко, А. П. Фильченко. - Рязань: Академия ФСИН России, 2009, էջ 121:

կենտրոնում: Անհրաժեշտ է նաև հստակ պլանավորել և կազմակերպել ՔԿՀ-ների տարբեր ստորաբաժանումների համագործակցությունը դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման ուղղությամբ:

Պենիտենցիար հանցագործության զոհի անձը ուսումնասիրելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել նաև բանտային հիերարխիայում նրա զբաղեցրած դիրքին: Ինչպես հայտնի է, դատապարտյալների սոցիալական միջավայրում որոշակի կարգավիճակի ձեռքբերումը կախված է անձի ինքնահաստատման փաստից: Ինքնահաստատման հիմնական միջոցն է բռնությունը և այն, որպես կանոն, գործադրվում է պենիտենցիար հիմնարկներում գտնվելու ոչ մեծ փորձ ունեցող դատապարտյալների նկատմամբ, ուստի նման անձինք առավել հաճախ են հայտնվում պենիտենցիար հանցագործությունների զոհի դերում:

Բանտային հիերարխիայում դատապարտյալի կարգավիճակը հանցագործության զոհի անձը բնութագրող կարևորագույն ցուցանիշն է: Զոհի կարգավիճակի մասին տվյալները խոսում են այն մասին, թե դատապարտյալների որ խմբերն են առավել հաճախ ենթարկվում պենիտենցիար վիկտիմիզացման: Աղյուսակ թիվ 6-ում կներկայացնենք այս կապակցությամբ մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները.

Աղյուսակ 6

Պենիտենցիար հանցագործությունների զոհի դերում առավել հաճախհանդես եկող դատապարտյալների խմբերը

Դատապարտյալների խմբեր	Զոհերի ընդհանուր քանակից %
Դրականորեն տրամադրված դատապարտյալներ / վարչակազմի հետ համագործակցող դատապարտյալներ/	42.4
Բացասականորեն տրամադրված դատապարտյալներ /«հեղինակություններ»/	_____
Չեզոք վարքագիծ դրսևորող դատապարտյալներ / «պատահական հանցագործներ»/	20.6
Հանցավոր աշխարհի կողմից արհամարված	37

անձինք /բարոյալքվածներ/	

Առավել մեծ թիվ են կազմում /42%/ պանիտենցիար հիմնարկի վարչակազմի հետ բացահայտ համագործակցող դատապարտյալները: Անձինք, ովքեր համաձայնել են կատարել որոշակի գործառույթներ, օրինակ՝ ճաշարանի, բուժկետի սպասարկում: Նրանց հիմնական մասը հետապնդում է զուտ անձնական շահ / կանոնակարգի հետ կապված պահանջների մեղմացում, կողմնակի բարիքների ստացում, հավելյալ կարճատև և երկարատև տեսակցությունների ստացում/, ինչն է՛լ ավելի է սրում մյուս դատապարտյալների բացասական վերաբերմունքն իրենց նկատմամբ:

«Բարոյալքված» դատապարտյալները ևս վիկտիմայնության առումով վտանգավոր խումբ են կազմում/ 37%/: Այդ խմբում են պասիվ համասեռամոլները, սեռական հանցագործություններ, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկում գողություն կատարած կամ իրավապահ մարմինների հետ համագործակցող դատապարտյալները: Այս խմբի մեջ են մտնում նաև իրենց խոստումը դրժած՝ օրինակ, պարտքը ժամանակին չվերադարձրած դատապարտյալները: Հաճախ վերջիններս ստիպված են լինում տարիներ շարունակ «աշխատել» այլ դատապարտյալների համար, նրանց տալ ստացած ծանրոցները,նյութական միջոցները և այլն:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ինքնին այդ կարգավիճակի ձեռքբերումը մեծ մասամբ ուղեկցվում է նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնի գործողությունների կատարմամբ կամ ծեծով,ինչը մեծ ազդեցություն է թողնում զոհի վիկտիմիզացման գործընթացի վրա, ավելին՝ նման անձանց պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելումը դարձնում է ուղղակի անհնարին:

Հանցավոր միջավայրը «բարոյալքվածների» համար սահմանել է վարքագծի որոշակի կանոններ՝ քնել առանձնացված այլ դատապարտյալներից, ճաշարանում օգտվել միայն այդ «խավի» ներկայացուցիչների համար նախատեսված սեղաններից, սպասքից: «Նրանք հայտնվում են կարծես կրկնակի մեկուսացման մեջ հենց ազատազրկման վայրում: Դատապարտյալների հանրությունը «բարոյալքվածների» նկատմամբ կիրառում է այն նույն միջոցները, ինչ հասարակությունը հանցագործների նկատմամբ՝

մեկուսացում»[38]:

Հանցավոր միջավայրը խիստ բացասաբար է արձագանքում «բարոյալքվածների» համար սահմանված կանոնների խախտումներին: Նման դեպքերում հաշվեհարդարը և հետապնդումները վերջիններիս նկատմամբ անխուսափելի են: Հանցավոր ավանդույթները արգելում են շփումը «բարոյալքվածների» հետ[39]: Սակայն, միևնույն ժամանակ, չգիտես ինչու, ընդունելի է «բարոյալքված» դատապարտյալների հագուստը կամ նրանց հասցեագրված ծանրոցները խլելը:

Ազատազրկման վայրերում չեզոք վարքագիծ դրսևորող դատապարտյալները /«պատահական հանցագործներ»/ կազմում են հանցավոր վիկտիմիզացման զոհերի 20.6 %-ը: Իսկ հանցավոր աշխարհում հեղինակություն վայելող դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման վերաբերյալ տվյալներ մեր ուսումնասիրության ընթացքում չեն գրանցվել:

Պենիտենցիար հանցագործությունների զոհերի քրեաիրավական հատկանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց 42.1%-ը ենթարկվել է քրեական պատասխանատվության սեփականության, իսկ 23.6% -ը՝ կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար: Պենիտենցիար հանցագործությունների զոհերի մնացած 34,3%-ը պատիժ է կրում քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցագործությունների կատարման համար:

Ըստ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների շրջանում անցկացված անանուն հարցումների արդյունքների՝ վիկտիմայնության բարձր աստիճանով են օժտված հատկապես այն դատապարտյալները, ովքեր պատիժ են կրում հետևյալ հանցագործությունների համար: Տե՛ս աղյուսակ թիվ 7:

Աղյուսակ 7

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ	
Սպանություն, առողջությանը տարբեր աստիճանի վնասի պատճառում, ծեծ և այլ	47%

[38] Տե՛ս Хохряков Г. Ф. Социальная среда и личность (значение элементов социальной среды в процессе достижения целей исполнения наказания, исправления и перевоспитания осужденных в ИТУ). М.: ВНИИ МВД, 1982, էջեր 51-52:
[39] http://lurkmore.to/

դիտավորյալ բռնի գործողություններ	
Բռնաբարություն /քր.օր.հոդվ 138/	83%
Անչափահասի բռնաբարություն քր.օր.հոդվ 138 2-րդ մաս, կետ 3/	100%
Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ /քր.օր.հոդվ 139/	45%
Անչափահասի նկատմամբ կատարված սեքսուալ բնույթի բռնի գործողություններ /քր.Օր.հոդվ. 139, մաս 2–րդ, կետ 3/	100%
Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ /քր.օր.հոդվ 141/	85.4%
Անառակաբարո գործողություններ քր.օր.հոդվ 142/	54.7%
Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը քր.օր.հոդվ 140/	24.6%
Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը քր.օր.հոդվ 265/	19.8%

Անհրաժեշտ է նշել, որ այս դատապարտյալների բարձր վիկտիմայնությունը պայմանավորված է նրանով, որ վերջիններիս կատարած հանցանքները անընդունելի են բանտային ենթամշակույթի համար: Ներկայումս, սակայն, նման դատապարտյալների վիկտիմիզացումը առավելապես կախված է նրանց անձնային հատկանիշներից և ազատազրկման վայրում դրսևորած վարքագծից, քանի որ հաշվի են առնվում հանցագործության կատարմանը նպաստող բոլոր հանգամանքները:

Առավել բարձր վիկտիմայնությամբ օժտված են անչափահասների և կանանց սեռական ազատության դեմ ոտնձգություն կատարած դատապարտյալները: Ազատազրկման վայրերում նրանք պարտադիր ենթարկվում են ծեծի, արժանապատվությունը նվաստացնող դաժան վերաբերմունքի և ապա՝ համալրում «բարոյալքվածների» շարքերը: Ընդորում, ամենևին էլ պարտադիր չէ, որ նման դատապարտյալները ազատազրկման

վայրերում ենթարկվեն սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարման, ինչպես ընդունված էր խորհրդային ժամանակաշրջանում: Դատապարտյալների հիմնական մասը զերծ է սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարումից, քանի որ ըստ բանտային էթիկայի՝ հարգված է միայն նա, ով կողմնակից է ընտանեկան կայուն հարաբերությունների, ընդունում է բարոյական արժեքները: «Ազատազրկման վայրերում սեռական բռնություն գործադրող անձանցից հնարավոր է վախենում են, սակայն չեն հարգում, իսկ հաճախ՝ նաև ատում՝ որպես այլասերվածների, որոնք ոչնչով չեն տարբերվում իրենց զոհերից»[40]:

Զոհերի անձնային առանձնահատկությունների քրեաիրավական վերլուծության համար պակաս կարևոր չեն ինչպես նախկինում դատվածություններ, այնպես էլ ազատազրկման ձևով պատժի կրման փորձ ունենալու մասին տեղեկությունները: Դրանք օգնում են որոշելու, թե հանցագործության զոհերի պենիտենցիար վիկտիմայնության մակարդակը որքանով է պայմանավորված վերջիններիս հանցավոր անցյալով:

Ըստ կատարված հետազոտությունների արդյունքների՝ զոհերի 48.7%/–ը նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած անձինք են, իսկ 51.3%/-ը՝ առաջին անգամ ազատազրկման դատապարտվածներ: Վերջիններիս վիկտիմայնության մակարդակը առավել բարձր է ադապտացիոն շրջանում, քանի որ նրանք ծանոթ չեն բանտային ենթամշակույթին և հաճախ են դառնում ծիծաղի առարկա կամ ծեծի ենթարկվում «բանտային օրենքները» խախտելու համար:

Ըստ կատարված ուսումնասիրության արդյունքների՝ պենիտենցիար հանցագործությունների զոհ դարձած դատապարտյալների մեծ մասը /74.2%/ ոտնձգության կատարման պահին աշխատանքնով ապահովված չի եղել: Զոհերի գրեթե կեսը /47.3%/ աչքի է ընկնում բացասական վարքագծով, ունի կարգապահական տույժեր: Բացասականորեն տրամադրված դատապարտյալների 79.1%- ը հայտնվել է պատժախցում /1 անգամ՝ 26.8%, 2 անգամ՝ 20.5%, 3 անգամ՝23.4%, 4 անգամ՝ 7.4%, 5 և ավելի անգամ՝ 6.3%/: Զոհերի 15.6 %-ը

[40] Տե՛ս Сердюченко И.Н. Пенитенциарная виктимизация осужденных и ее предупреждение. диссертация, канд. юрид. наук, Рязань, 2011, էջ 102:

հաշվառված են որպես հանցագործության կատարման հակված դատապարտյալներ:

Դատապարտյալ զոհերի մնացած 51.3%-ը աչքի է ընկնում դրական կամ չեզոք վարքագծով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ դրական կամ չեզոք վարքագիծ դրսևորող դատապարտյալների՝ զոհ դառնալու հավանականությունն ավելի մեծ է:

Վիկտիմայնության ուսումնասիրության համար պակաս կարևոր չէ զոհերի նյութական վիճակի ուսումնասիրությունը: Ընդունված է համարել, որ վիկտիմիզացման դեպքերի քանակը աճում է նյութական բարիքների ավելացմամբ[41]: Անկետավորման արդյունքները ցույց են տալիս, որ ազատազրկման վայրերում շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունների զոհ-դատապարտյալների 36%–ը իրեն դասում է նյութապես ապահովվածների շարքը: Նրանց մեծ մասը նյութական օգնություն է ստանում հարազատներից և ընկերներից:

Իրենից հետաքրքրություն է ներկայացնում պենիտենցիար հանցագործության զոհ-դատապարտյալների բարոյահոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Պետք է նշել նաև, որ նման բարոյական որակների առանձնացումը իրենից որոշակի բարդություն է ներկայացնում, քանի որ թ՛ե հանցագործը, թ՛ե հանցագործության զոհը, ըստ էության, նախկինում հանցանք՝ հակաբարոյական արարք կատարած անձինք են:

Գաղտնիք չէ, որ մարդու բարոյահոգեբանական բնութագիրը պայմանավորված է նրա կրթական և ընդհանրապես գրագիտության մակարդակով: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցագործության զոհ-դատապարտյալների մեծ մասը /81%/ունի միջնակարգ կամ թերի միջնակարգ կրթություն, և միայն 19%-ն է բարձրագույն կրթությամբ: Նեղ աշխարհայացքը, կրթության և մշակույթի ցածր մակարդակը հաճախթույլ չեն տալիս անձին ճիշտ գնահատելու ստեղծված իրավիճակը և կանխատեսելու հնարավոր անբարենպաստհետևանքները:

Հարցումների արդյունքները վկայում են, որ զոհերի մեծ մասին բնորոշ է նեղացկոտությունը /5,3%/,

[41]Տե՛ս Курн Г. Международное сравнительное исследование виктимизации населения // Латентная преступность: познание, политика, стратегия: Сб. материалов в межд. семинаре. - М., 1993, էջ 90:

անբարյացկամությունը /8.3%/, ագրեսիվությունը 36.2%/, անհարմարվողականությունը /7.8%/, ալկոհոլամոլությունը /11.4%/:

Նրանց մեծ մասը /71%/ հենց իր մեղքով է ենթարկվում տարբեր ոտնձգությունների, ավելին՝ որոշակի հանգամանքների առկայության դեպքում կարող է հայտվել հանցագործության սուբյեկտի դերում:

Ասվածից հետևում է, որ ազատազրկման վայրերում զոհի դրսևորած վարքագիծը սերտ կապված է նրա անձնային առանձնահատկությունների հետ, քանի որ անձը և նրա հոգեբանական որակները միաժամանակ հանդես են գալիս որպես վերջինիս արարքների և՛ պատճառ, և՛ հատևանք: Անձի՝ կոնկրետ իրավիճակում դրսևորած վարքագծի ներքին հոգեբանական բովանդակությունը վերափոխվում է անձի՝ հարաբերականորեն կայուն որակների, իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, ազդում են նրա վարքագծի վրա[42]:

Շատ դեպքերում հանցագործի գործողությունները ուղղակիորեն պայմանավորված են կոնկրետ իրավիճակում հանցագործության կատարմանը նպաստող և նույնիսկ պրովոկացիոն բնույթ կրող՝ հենց զոհի դրսևորած վարքագծով[43]: Իսկ զոհի անձնային որակները էական դեր են խաղում ինչպես իր վարքագծի ընտրության հարցում, այնպես էլ պոտենցիալ հանցագործի հետ ունեցած փոխհարաբերություններում[44]:

Հայտնի գիտնական Գ. Ի. Չեչելը այս կապակցությամբ գրում է. «եթե ընդհանուր առմամբ մարդկանց վարքագիծը պայմանավորվում է սոցիալական պատճառներով և դրանցով էլ բացատրվում, ապա յուրաքանչյուր անհատի դրսևորած վարքագծում էական դեր են խաղում վերջինիս անկրկնելի, միայն իրեն հատուկ, այդ թվում՝ հոգեֆիզիոլոգիական որակները և առանձնահատկությունները»[45]:

Կարծում ենք՝ առանց ուսումնասիրելու հանցագործի և տուժողի փոխհարաբերությունները, վերջինիս վարքագիծը՝

---

[42] Տե՛ս Рубинштейн Л. С. Основы общей психологии.- М., 1946, էջ 513:

[43] Տե՛ս Минская В. С. Криминологическое и уголовно-правовое значение поведения потерпевших // Вопросы борьбы с преступностью. Вып. 16.-М., 1972, էջ 11:

[44] Տե՛ս Конышева Л. П. Опыт психологического исследования взаимодействия потерпевшего и преступника в криминальной ситуации // Проблемы борьбы с изнасилованием. - М., 1983, էջ 64:

[45] Տե՛ս Чечелъ Г. И. Виктимологические вопросы особо опасных преступлений против личности // Правовые вопросы борьбы с преступностью. - Томск, 1985, էջ 184:

հնարավոր չի լինի լրիվ ծավալով բացահայտել ազատազրկման վայրերում կատարված հանցագործությունների համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները և կազմել դրանց ամբողջական պատկերը, ինչն առաջին հերթին անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցառումների մշակման, հանցագործությունների բացահայտման, հետաքննության անցկացման, պատժի և պատասխանատվության անհատականացման համար:

Հանցագործը, տուժողը և հանցածին իրավիճակը սերտ փոխկապակցված են և կազմում են մեկ ամբողջական համակարգ, որը կարող է գոյություն ունենալ նշված բոլոր տարրերի առկայության դեպքում միայն: Ազատազրկման պայմաններում դատապարտյալների վարքագիծը կարգավորվում է ոչ միայն և ոչ այնքան կանոնակարգի պայմաններով, որքան բանտային ենթամշակույթով, ավանդույթներով, ինչի արդյունքում զոհի վարքագիծը էական դերակատարում է ունենում հանցանքի կատարման մեխանիզմում:

ԳԼՈՒԽ2.
ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏՆԵՐԸ

§ 1 Պենիտենցիար հանցավորությանը նպաստող գործոնները

Կրիմինալոգիական գրականության մեջ կարելի է առանձնացնել մի շարք աշխատություններ՝ նվիրված ինչպես ընդհանուր, այնպես էլ պենիտենցիար հանցավորությանը նպաստող գործոնների ուսումնասիրությանը: Այս խնդրին են անդրադարձել մասնավորապես՝ Յու. Ա. Ալֆերովան, Վ.Մ.Անիսիմկովան, Յու.Մ.Անտոնյանը, Մ.Պ.Ժուրավլյովան, Ի.Վ. Կարետնիկովը, Ա.Յ. Մարկովան և այլոք: Հանցավորությանը նպաստող գործոնների հիմնախնդիրը կարևոր տեղ է զբաղեցնում կրիմինալոգիայում, որի շուրջ ձևավորվել են բազմաթիվ, այդ թվում՝ միմյանց հակասող տեսակետներ վկայելով վերջինիս բարդության և միաժամանակ խոր ուսումնասիրության անհրաժեշտության մասին, որի արդյունավետ և բազմակողմանի իրականացումը պայմանավորված է ինչպես փիլիսոփայության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի, սոցիալական և ընդհանուր հոգեբանության, վիճակագրության, ժողովրդագրության և այլ հումանիտար, այնպես էլ որոշ բնական գիտությունների, մասնավորապես՝ գենետիկայի մի շարք ելակետային դրույթների և օրենքների իմացությամբ:

Ազատազրկման վայրերում հանցավորությանը նպաստող գործոններ ասելով հասկանում ենք որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ երևույթներ, որոնց փոխազդեցությունը ծնում է հանցավորություն կամ նպաստում հանցագործությունների կատարմանը:

Հանցավորությանը նպաստող գործոնները կարելի է բաժանել սուբյեկտիվի և օբյեկտիվի: Առաջինը ամբողջությամբ կախված է անձի կամքից, գիտակցությունից, հույզերից, իսկ երկրորդի գոյությունը պայմանավորված է ոչ թե հանցագործի անձով, այլ՝ օբյեկտիվ իրականությամբ:

Հանցավորությանը (պենիտենցիար) նպաստող սուբյեկտիվ

գործոններից են այն բոլոր հանգամանքները, որոնք ողղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում են հանցանքների կատարմանը: Դրանք են՝ քրեածին ուղղվածություն ունեցող անձի (դատապարտյալի) սուբյեկտիվ ոլորտը կազմող կենսաբանական և հոգեբանական հատկանիշները (տարիք, սեռ, հոգեկան, ֆիզիոլոգիական, հոգեբանական և այլ յուրահատկություններ), ինչպես նաև հանցագործության կատարմանը հրահրող, դրդող երևույթներ՝ հակասոցիալական ուղղվածություն, իրավագիտակցության ցածր մակարդակ, հանցավոր մոտիվացիա, բացասական հույզեր, արժեքային համակարգում առկա բացասական երևույթներ:

Հանցավորությանը նպաստող օբյեկտիվ գործոններից է հանցանքի կատարման իրական վտանգ ստեղծող նախահանցածին իրավիճակը՝ սթրեսային, ֆրուստրացնող, կոնֆլիկտային:

Հանցագործության կատարմանը (այդ թվում ազատազրկման վայրերում) նպաստող գործոնները կրիմինալոգիական գրականության մեջ ընդունված է բաժանել անմիջականորեն հանցագործության կատարմանը և հանցավոր հետևանքների առաջացմանը նպաստող գործոնների [46]:

Մինչ ազատազրկման վայրերում հանցավորության դետերմինանտների ուսումնասիրությանն անցնելը, պետք է նշել, որ հանցանքների կատարումը պայմանավորված է ինչպես ընդհանուր, այնպես էլ միայն պենիտենցիար հանցավորությանը նպաստող հատուկ գործոնների ազդեցությամբ: Վերջիններիս թվին կարելի է դասել դատապարտյալների բացասական ազդեցությունը միմյանց վրա, դատապարտյալների ենթակայությունը բանտային ենթամշակույթին և այլն[47]:

Հետևաբար, պենիտենցիար հանցավորությանը նպաստող գործոնները ուսումնասիրելիս պետք է փաստել, որ դրանք, առաջին հերթին, պայմանավորված են «ազատազրկում» պատժատեսակի բնույթով, այն է՝ միասեռ դատապարտյալների կենտրոնացումը մեկ

[46] Տե՛ս Абаджян А.В. Проблемы пенитенциарной преступности. М., 2001, էջ 31:
[47] Տե՛ս Аброськин С.Н. Задачи предупреждения и пресечения пецидива преступлений в местах лишения свободы: Современные криминологические проблемы борьбы с преступностью / Труды академии управления МВД Росии. М., 2000, էջ 101:

վայրում, անձինք, ում կյանքում հանցագործությունն արդեն իսկ կատարված փաստ է, միջոց, որի օգնությամբ վերջիններս «լուծել» են իրենց խնդիրները, իսկ ոմանք նույնիսկ՝ բազմիցս:

Հարկ ենք համարում ներկայացնել Հայաստանի ազատազրկման վայրերում հանցանք կատարած դատապարտյալների հանցածին ուղղվածության ուսումնասիրության արդյունքները: Այսպես, նշված անձանց հանցավոր վարքագիծը դետերմինացնող, ինչպես նաև հանցանքի կատարմանը դրդող հիմնական պատճառներից է դատապարտյալների շրջանում հեղինակություն ձեռք բերելու, հարգված լինելու, ինչպես նաև սեփական պատվի և արժանապատվության պաշտպանության ձգտումը: Եվ դա բնական է, քանի որ անազատության պայմաններում գրեթե ամեն ինչ՝ ընդհուպ ապրելու իրավունքը, կախված է բանտային ենթակայության համակարգում դատապարտյալի կարգավիճակից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պենիտենցիար հանցավորությանը նպաստող լուրջ գործոն է ծագած վեճը հարթելու փորձը, սեփական անվտանգությունն ապահովելու ցանկությունը (որպես կանոն ուժի գործադրմամբ), բանտային ենթամշակույթին, պատժի կրման պայմաններին հնարավորինս շուտ հարմարվելու ցանկությունը, «անարդար» դատավճռի դեմ քողարկված կամ բացահայտ բողոքի արտահայտումը, սեռական պահանջմունքները բավարարելու, ալկոհոլ, թմրանյութեր, հոգեներգործող այլ նյութեր ձեռք բերելու, ինչպես նաև ընտանիքին օգնելու, հարազատներին, ընկերներին տեսնելու ցանկությունը:

Դատապարտյալների բացասական տրամադրվածությունը, շատ դեպքերում, կարելի է ընկալել որպես պատասխան հակազդեցություն միջավայրի կողմից իրենց նկատմամբ դրսևորած թշնամական վերաբերմունքին կամ ճնշված, բռնության ենթարկված լինելու վախին: Նշված երևույթները անձի մոտ կարող են ձևավորել անհանդուրժողական վերաբերմունք շրջապատի նկատմամբ, միշտ հակահարված տալու պատրաստակամություն, նույնիսկ այն դեպքում, երբ իրականում վտանգը բացակայում է, երբ այն թվացյալ է: Ենթադրում ենք՝ սրանով էլ պայմանավորված է

այն հանգամանքը, որ ծեծը, վիրավորանքը, սպառնալիքը ազատազրկման վայրերում դառնում են «ընդունելի» վարքագիծ:

Այս առումով քիչ դեր չեն խաղում նաև դատապարտյալների հանցավոր վարքագծի կարծրատիպերը, ՔԿՀ-ների աշխատակիցների ոչ մասնագիտական, անբարյացկամ վերաբերմունքը, հասարակության կողմից ընդունված արժեքների անտեսումը, ՔԿՀ-ում հանցավոր ավանդույթների և դրա հետ կապված «ստվերային արդարադատության» գոյությունը[48]:

Պենիտենցիար հանցավորությանը նպաստող սուբյեկտիվ գործոնների շարքում մեծ նշանակություն ունի նաև ՔԿՀ-ներում հանցանք կատարած դատապարտյալների հանցածին ուղղվածության կայունությունը: Այդ մասին են վկայում նշված անձանց՝ նախկինում ունեցած դատվածությունների մասին տվյալները:

Մեր կողմից ուսումնասիրված անձանց գրեթե կեսը (45%) կազմում են նախկինում երկու և ավելի դատվածություն ունեցող անձինք: Ընդ որում՝ նրանցից 49.8%-ը ուներ երկու, 27.1 %-ը՝ երեք, իսկ 23.1 %-ը՝ չորս և ավելի դատվածություն:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ նախկինում ունեցած երկու և ավելի դատվածությունները վկայում են նշված անձանց հանցավոր ուղղվածության կայունության մասին: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց մոտ 53%-ը ազատազրկման վայրերում կատարել է գրեթե միաբնույթ հանցագործություններ (որպես կանոն՝ բռնությամբ կամ շահադիտական դրդումներով կամ բռնությամբ և շահադիտական դրդումներով զուգորդված):

Հայաստանի ազատազրկման վայրերում հանցավոր վարքագծի դրսևորմանը նպաստող սուբյեկտիվ գործոններից առանձնանում են՝

1. Հոգեպես անհավասարակշիռ, եսակենտրոն, դյուրագրգիռ, ագրեսիվ լինելը: Այդպիսի անձինք, հաճախ ընկնելով հեղինակությունների բացասական ազդեցության տակ, դառնում են հանգամանքների զոհ: Իսկ ահա հանցավոր աշխարհի «առաջնորդները» կամ ուղղակի «բանտային հեղինակությունները»,

[48] Տե՛ս Олейник А.Н. Тюремьная субкультура в России: от повседневной жизни до государственной власти. М., 2001, էջեր 184-194:

լինելով հանցագործներ, չեն հայտնվում վարչակազմի տեսադաշտում: Նրանք առավել հաճախ աշխատում են անձամբ չգործել, այլ մնալով ստվերում՝ կազմակերպել և ղեկավարել հանցագործությունները:

2. Դատապարտյալների երիտասարդ տարիքը /21-25/, ինչն անուղղակիորեն, բայց անկասկած ունի հանցածին նշանակություն: Այդ մասին է վկայում նշված տարիքային խմբի հանցավոր ակտիվության ամենաբարձր աստիճանը: Զարմանալի չէ, որ հանցագործությունների կատարման ընթացքում նրանք առավել հաճախ ղեկավարվում են հույզերով և ո'չ բանականությամբ:

3. Հանցանք կատարելիս դատապարտյալների հարբածությունը: Հանցագործությունների կատարման պահին դատապարտյալների որոշակի մասը գտնվում է ալկոհոլի ազդեցության տակ: Իսկ ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրության արդյունքները, հենց հարբածությունն է հաճախ դառնում հանցագործության կատարման դրդիչ, մղիչ ուժ: Բացի այդ, հարբած վիճակում պենիտենցիար հանցագործություններ կատարած անձանց մեծ մասը վկայում է ՔԿՀ-ում անվտանգության և պաշտպանության ապահովման ուղղությամբ վարչակազմի կողմից տարվող աշխատանքների լուրջ թերացումների մասին:

4. Բացասական վերաբերմունքը պատժի կրման պայմաններին (դատապարտյալների մոտ 2/3-ը պատժի կրման պայմանների խախտողներն են, ընդորում մեծ մասը՝ չարամիտ):

5. Բացասական վերաբերմունքը ուսումնական գործընթացին, քանի որ այն առաջին հերթին կապված է ազատության հետ, հետևապես՝ արժեզրկվում անազատության պայմաններում:

6. Դաստիարակչական բոլոր տեսակի աշխատանքների հերքումը՝ կապված դրանց ձևական և ոչ մասնագիտական անցկացման հետ:

7. Հանցավոր ենթամշակույթին հետևելը:

8. Անձի այլասերված պահանջմունքները: Անազատության մեջ ևս անձի մոտ շարունակում է գործել սեռական հարաբերությունների մեջ մտնելու բնական պահանջմունքը: Բայց, քանի որ այդ պահանջմունքի բավարարումը սահմանափակված է

մեկուսացման պայմաններով, դատապարտյալների միասեռ զանգվածով, երկարատև տեսակցությունների սահմանափակ քանակով (ինչն էլ, ի դեպ, քրեակատարողական հիմնարկներում սեռական այլասերվածության պատճառն է), ապա անձը, ունենալով բացասական արժեքային կողմնորոշվածություն, լինելով ծայրաստիճան պարզունակ և զուրկ հոգևոր արժեքներից, բնական այդ պահանջմունքը վերածում է անոմալիայի և հանգեցնում սեռական էքսցեսների:

Այսպիսով, պենիտենցիար հանցավորությանը նպաստող սուբյեկտիվ գործոնները կատալիզատորի դեր են կատարում հանցագործությունների կատարման մեխանիզմում: Ընդ որում, դրանք կարող են ինչպես նպաստել հանցագործությունների կատարմանը, այնպես էլ արագացնել կամ դանդաղեցնել այդ գործընթացը, նպաստել հանցավոր վարքագծի մոտիվացիայի անմիջական իրականացմանը կամ հետաձգել այն որոշակի ժամկետով:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ պենիտենցիար հանցավոր վարքագծի վերը թվարկված սուբյեկտիվ գործոնները պետք է հաշվի առնվեն ՀՀ ՔԿՀ-ներում անհատական կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման և անցկացման ընթացքում:

Ինչպես արդեն վերը նշվեց, հանցավորությանը (այդ թվում պենիտենցիար) նպաստող օբյկտիվ գործոններից է քրեորեն պատժելի արարքի կատարման սպառնալիք ստեղծող նախահանցածին իրավիճակը: Այս կապակցությամբ, նախ և առաջ, պետք է որոշել նախահանցածին համարվող իրավիճակների կառուցվածքը:

Այսպես, նշված իրավիճակները տարբեր հեղինակներ տարբեր կերպ են մեկնաբանում: Մասնավորապես, Յու. Մ.Անտոնյանի և Վ.Ն.Կուդրյավցևի կարծիքով կոնկրետ իրավիճակը բաղկացած է երկու մասից՝

•Դրա հիմքը կազմող օբյեկտիվ հանգամանքների ամբողջություն

•Այդ հանգամանքների սուբյեկտիվ ընկալման համակարգը և դրան արձագանքելը [49]

[49] Տե՛ս Антонян Ю.М. Роль конкретной жизненной ситуации в совершении преступления. М., 1973, Кудрявцев В.Н. Генезис преступления. Опыт криминологического моделирования. Учебное пособие. М., 1998:

Այլ հեղինակներ, օրինակ Ս.Ֆ.Միլյուկովը, Է.Ա.Օրլովան, Օ.Վ.Ստարկովը, Լ.Բ.Ֆիլոնովը այլ տեսակետի կողմնակիցներ են[50]: Նրանց կարծիքով հանցածին իրավիճակը կազմված է 5 մասից՝ սուբյեկտ, օբյեկտ, բովանդակություն, մեթոդներ և փուլեր:

Նշված իրավիճակների սուբյեկտները առանձին անձինք են կամ խմբեր, որոնց փոխհարաբերությունները էապես կանխորոշում են նախահանցածին իրավիճակների առաջացումը, դրանց վերածվելը հանցածին իրավիճակների և, վերջապես, հանցագործության կատարման:

Հանցածին իրավիճակների օբյեկտները հետևյալ երեք արժեքներն են՝

1. Ընդհանուր կամ մեկանգամյա (արժեքներ, որոնց պատճառով ընդհանրապես ծագում են այդ իրավիճակները),

2. Կենտրոնացնող (արժեքներ, որոնց շուրջ կենտրոնանում է հանցածին իրավիճակը),

3. Սահմանային (արժեքներ, որոնց պատճառով, ի վերջո, կատարվում է հանցագործությունը):

Հանցածին իրավիճակի բովանդակությունը սուբյեկտների փոխհարաբերություններն են:

Հանցածին իրավիճակի մեթոդներն այն միջոցներն են, որոնց օգնությամբ սուբյեկտները ազդում են մեկը մյուսի վրա:

Հանցածին իրավիճակի փուլերը սուբյեկտների միջև զարգացող հարաբերությունների մասերն են:

Ըստ սուբյեկտիվ հիմնավորման՝ այս փուլերում իրենց հերթին կարելի է առանձնացնել

1. Իրավիճակի բնորոշումը, ընկալումը՝ որպես հանցածին,

2. փոխհարաբերությունների հետագա զարգացումը կանխորոշող մեթոդի, վարքագծի «ռազմավարության» ընտրություն,

3. ընդհանուր «ռազմավարության» շրջանակներում արարքի ընտրություն:

Ըստ օբյեկտիվ հիմնավորման առանձնացվում է ևս երեք փուլ՝

1. Նախահանցածին իրավիճակի ստեղծում (գոյացում),

[50] Տե՛ս Орлова Э.А., Филонов Л.Б. Взаимодействие в конфликтной ситуации. Некоторые факторы, определяющие ход взаимодействия //Психологические проблемы социальной регуляции поведения. М., 1976, էջ 321:

2. նախահանցածին իրավիճակի վերաճումը հանցածինի,

3. իրավիճակի վերաճումը հանցանքի կատարման[51]:

Ենթադրվում է, որ երկրորդ խումբ հեղինակների մոտեցումը հնարավորություն է տալիս առավել ամբողջական, բազմակողմանիորեն ուսումնասիրելու նախահանցածին իրավիճակներ կազմող բոլոր տարրերը:

Ազատազրկման վայրերում տիրող հանցածին իրավիճակների ստեղծման արտաքին գործոնների շարքում կարևոր նշանակություն ունեն հետևյալները՝ պարտություն թղթախաղում, սեռական բնույթի բռնի գործողություններ, նվաստացում և այլն: Այլ կերպ ասած՝ հենց նշված երևույթների շուրջ են ծագում կոնֆլիկտները, սրվում լարվածությունը, առաջանում սթրեսային իրավիճակներ, և դրանց պատճառով են, ի վերջո, կատարվում պենիտենցիար հանցագործությունները:

Այժմ անդրադառնանք ՀՀ-ում պենիտենցիար հանցավորությանը նպաստող օբյեկտիվ գործոնների ուսումնասիրմանը:

Ըստ մեր ունեցած տվյալների, Հայաստանի ազատազրկման վայրերում հանցանք կատարած անձանց շրջանում նախահանցածին իրավիճակների սուբյեկտների միջև տեղի ունեցող կոնֆլիկտների պատճառները հետևյալ արժեքներն են՝ ազատություն (23%), հեղինակություն դատապարտյալների շրջանում (17,4%), դատապարտյալների իրավունքների պաշտպանություն (13.5%), պատիվ, արժանապատվություն (12.9%), թղթախաղի պարտք (12.5%), հանցավոր ավանդույթներ (12.3%), կյանք և առողջություն (4.2%), փող և նյութական այլ բարիքներ (2.3%), այլ արժեքներ (1.9%):

Ինչ վերաբերում է ազատազրկման վայրերում հանցածին իրավիճակների բովանդակությանը, ապա պետք է նշենք, որ «ազատազրկում» պատժատեսակի կրման ընթացքում ծագած հանցածին իրավիճակների սուբյեկտների միջև փոխհարաբերությունները հաճախ լարված են և ժամանակի ընթացքում է՛լ ավելի են սրվում: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանցագործությունների կատարմանը անմիջապես նախորդած հանցածին իրավիճակները մեծամասամբ բնութագրվում

[51] Տե՛ս Абаджян А.В. Проблемы пенитенциарной преступности. М., 2001, էջեր 47-48:

են որպես բարդ կոնֆլիկտային հարաբերություններ դատապարտյալների կամ ՔԿՀ վարչակազմի միջև: Ընդ որում, կոնֆլիկտային իրավիճակը նախորդում է ոչ միայն բռնությամբ զուգորդված և շահադիտական դրդումներով կատարվող պենիտենցիար հանցագործություններին, այլև՝ փախուստներին:

Այսպես, ինչպես ազատազրկման վայրերում հանցանք կատարած դատապարտյալների, այնպես էլ վարչակազմի աշխատակիցների հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ կատարված պենիտենցիար հանցագործությունների գրեթե 80%-ի կատարմանը նախորդել են կոնֆլիկտները, ընդ որում՝ միջանձնային կամ կենցաղային բնույթի: Նման իրավիճակների տևողությունը 1-10 օր է: Պետք է ընդունել, որ նշված ժամանակահատվածը շատ կարճ է վարչակազմի կողմից համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ ձեռք առնելու համար: Այնուամենայնիվ, նրանք պարտավոր են լինել աչալուրջ և ստեղծված արտակարգ իրավիճակներում ձեռնարկել արագ արձագանքման միջոցներ:

Հարկ է նշել նաև, որ հանրավտանգ իրավիճակների բնույթի և զարգացման վրա լուրջ ազդեցություն են թողնում, այսպես կոչված, ֆրուստրացիոն գործընթացները: Մասնավորապես, ըստ Հայաստանի ազատազրկման վայրերում հանցանք կատարած անձանց հարցման արդյունքների՝ վերը նշված իրավիճակների սուբյեկտների փոխհարաբերությունների վրա ազդող ֆրուստրացիոն գործոններից կարելի է առանձնացնել հետևյալները՝ դատապարտյալների ոչ ֆորմալ դասակարգման ազդեցությունը (35%), հարազատի մահ (22.4%), պայմանական–վաղաժամկետ ազատումը բացառող, դժվարեցնող հանգամանքներ (16.2%), ամուսնական դավաճանություն (8.3%), ամուսնալուծություն (3.8%), այլ հանգամանքներ (14.2):

Հանցածին բնույթ կարող է ունենալ նաև որոշակի կոնֆլիկտային իրավիճակը կամ անհապաղ լուծում կամ որոշակի գործողությունների կատարում պահանջող կենսական կարևոր նշանակություն ունեցող որևէ հարց: Այս կապակցությամբ պետք է նշել, որ Հայաստանում պենիտենցիար հանցագործություն կատարած դատապարտյալներն իրենց արարքի կատարման

դրդապատճառների շարքն են դասում հետևյալները՝ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների և այլ դատապարտյալների արհամարհական վերաբերմունքը իրենց անձին (32.5%), մերձավորի վարքագիծը (օրինակ՝ ամուսնական դավաճանություն) (14.2%), հարազատի հիվանդություն (8.3%), քրեակատարողական հիմնարկում ընկերների բացակայություն (6.8%), այլ դատապարտյալների կողմից դատապարտյալ-ընկերոջը հասցված վիրավորանք (4.2%), կարգապահական տույժեր (2.1%), այլ պատճառներ (31.9%):

Ինչպես արդարացիորեն նշում է Ա.Վ.Աբաջյանը, միջոցները, որոնց օգնությամբ հանցածին իրավիճակների սուբյեկտները ղեկավարում են մեկը մյուսին, ազդում միմյանց վրա, կարող են լինել.

1. Ակտիվ-բացասական. բռնություն, շանտաժ, կաշառք, խաբեություն, սպառնալիք:

2. Ակտիվ-դրական.բանակցություններ, ուժերի կենտրոնացում, օգնության խնդրանքով դիմելը (հաճախ հեղինակություններին և հազվադեպ՝ ՔԿՀ վարչակազմին), բռնության գործադրումը կանխելու նպատակով միջամտություն, կոնֆլիկտի լուծում:

3. Պասիվ-անտարբերություն. դատապարտյալների կողմից նախաձեռնության բացակայություն, վարչակազմի անփույթ վերաբերմունք, այլ կերպ ասած՝ իրավիճակը շտկելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը[52]:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի ազատազրկման վայրերում վերը նշված միջոցներից առավել հաճախհանդիպում են դատապարտյալների իրավունքների խախտումներ (18.3%), ֆիզիկական բռնություն (14.2%), ամենաթողություն, ինչպես բանտային հեղինակությունների, այնպես էլ վարչակազմի չարաշահումներ (9.1%), վիրավորանք, զրպարտություն (8.5%), խաբեություն, վստահության չարաշահում (7.3%), շանտաժ(6.1%), սպառնալիք (5.3%), հանասեռամոլության հարկադրում (4.1%), կաշառք (2.5%): Ազդեցության այլ միջոցները, օրինակ՝ օգնության խնդրանքով

[52] Տե՛ս Абаджян А.В. Проблемы пенитенциарной преступности. М., 2001, էջ 31:

վարչակազմին կամ այլ դատապարտյալների դիմելը, հանդիպում են բավականին հազվադեպ, որի պատճառը, կարծում ենք, անվստահությունն է վերջիններիս նկատմամբ:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև ազատազրկման վայրերում ծագող բոլոր նախահանցածին իրավիճակների կառուցվածքային տարր հանդիսացող՝ բանտային ենթամշակույթի առանձնահատկություններին:

Ինչպես հայտնի է, բանտային ենթամշակույթը ներառում է քրեակատարողական օրենսդրությամբ, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնադրությամբ սահմանված նորմերից՝ սկզբունքորեն տարբերվող նորմեր, ավանդույթներ, բառապաշար: Խոսքը վերաբերում է մասնավորապես այն նորմերին, որոնք ստեղծված են և ինքնակամ կիրառվում են դատապարտյալների կողմից, ուղղված են ՔԿՀ-ներում իրենց կենցաղն ավելի տանելի դարձնելուն: Այս առումով բանտային ենթամշակույթը կարելի է դիտել որպես դատապարտյալների անհատականության դրսևորում, նույնիսկ խիստ հսկողության և սահմանափակումների պայմաններում իրենց փոխհարաբերությունները ինքնուրույն կարգավորելու ցանկություն[53]: Հետևաբար, ազատազրկման վայրերում ցանկացած հանցածին իրավիճակի զարգացման պարտադիր տարրն է հանցավոր միջավայրում ընդունված նորմերը, օրենքները, ավանդույթները, սովորույթները կատարելը կամ չկատարելը: Պենիտենցիար հանցավորությանը նպաստող արտաքին գործոնները, ինչպես վերը նշվեց, քրեակատարողական հիմնարկներում կատարվող հանցագործությունների պարտադիր ուղեկիցներն են, որոնք բաժանվում են անմիջականորեն հանցանքի կատարմանը և հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացմանը նպաստող գործոնների:

Պենիտենցիար հանցավորության ուսումնասիրությամբ զբաղվող որոշ գիտնականներ այդ գործոնները բաժանում են՝

1. Պենիտենցիար հանցագործության կատարման համար ֆիզիկական հնարավորություն ստեղծող գործոնների,

2. Դատապարտյալների ուղղման գործընթացի թերացումների

[53] Տե՛ս Олейник А.Н. Тюремьная субкультура в России: от повседневной жизни до государственной власти. М., 2001, էջ 13:

հետևանք հանդիսացող գործոնների[54]:

Ազատազրկման վայրերում հանցանքների կատարման ֆիզիկական հնարավորություն ստեղծող արտաքին պայմաններն են օպերատիվ աշխատանքների, անվտանգության ապահովման, հսկողության անբավարարությունը: Այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը քրեակատարողական հիմնարկում անվտանգության ապահովման և պաշտպանության համար պատասխանատու համապատասխան ստորաբաժանումների կողմից ոչ լիարժեք աշխատանք կատարելու մասին է: Նշված թերացումները նպաստում են կանոնակարգի խախտմանը, ինչն էլ ի վերջո կարող է հանգեցնել հանցագործության կատարման: Խոսքը, մասնավորապես, արգելված նյութերի և առարկաների շրջանառության մասին է: Այս առումով առավել անհանգստացնող է թմրանյութերի, ալկոհոլի, ծակող-կտրող առարկաների և նույնիսկ զենքի թափանցումը քրեակատարողական հիմնարկ: Բացի այդ, թերի աշխատանքի արդյունք են դատապարտյալների շրջանում ալկոհոլամոլությունը, թղթախաղը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետունեցած ոչ օրինական փոխհարաբերությունները և այլն:

Այլ հեղինակների կարծիքով ավելի նպատակահարմար կլինի օբյեկտիվ գործոնները բաժանել տեխնիկականի և կազմակերպակառավարչականի[55]:

Տեխնիկական գործոններն են ազդանշանային համակարգերի տեխնիկական անկատարությունը, ինժեներատեխնիկական սարքավորումների, դատապարտյալների նկատմամբ շուրջօրյա հսկողության իրականացման համար նախատեսված սարքավորումների, քրեակատարողական հիմնարկի տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների ստուգման, անձնական խուզարկության, ինչպես նաև բնակելի տարածքների և աշխատանքային տարածքների խուզարկության համար նախատեսված

[54] Տե՛ս Забровский В. А. Криминалагическая характеристика и предупреждение пенитенциарной преступности. Диссертация, канд. юрид. наук, СПб., 2005, էջ 55:

[55] Տե՛ս Старков О.В., Милюков С.Ф. Наказание: Уголовно-правовой и криминопенологический анализ. СПб., 2001, էջեր 182-183:

հատուկ սարքերի բացակայությունը: Կազմակերպակառավարչական թերությունները հանգում են հետևյալին՝

1. Սահմանված առավելագույն քանակից ավելի դատապարտյալների պահելը մեկ ՔԿՀ-ում, որը հանգեցնում է կենցաղային դժվարությունների,

2. Վարչակազմի համալրումը ոչ արհեստավարժ կադրերով,

3. Առանձին աշխատակիցների թերացումները՝ կապված իրենց պարտականությունների պատշաճ կատարման հետ,

4. Քրեակատարողական հիմնարկներում բացասական երևույթների, դատապարտյալների միջև կոնֆլիկտային հարաբերությունների վերաբերյալ վարչակազմի անիրազեկությունը:

5. Դատապարտյալների շրջանում հեղինակություն վայելող դատապարտյալների, հանցավոր խմբավորումների ոչ ժամանակին բացահայտումը և նախապատրաստվող կամ արդեն կատարվող հանցագործությունները չկանխելը:

Այս կապակցությամբ պետք է նշել նաև, որ ազատազրկման վայրերում հոգեբանական լարվածությունը, մշտական բնույթ կրող կոնֆլիկտային իրավիճակները, պենիտենցիար հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնները նաև դատապարտյալների վատ կենսապահովման հետևանք են. վերջիններս գտնվում են կենցաղային շատ ավելի վատ պայմաններում, քան ընդհանուր բնակչությունը /սնունդ, բուժսպասարկում, սանիտարահիգիենիկ ապահովում և այլն/: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ ազատազրկման վայրերի կենսապայմաններն արդեն իսկ պատճառ են պենիտենցիար հանցավոր վարքագիծ ծնող էմոցիոնալ, միջանձնային և միջխմբային հարաբերությունների սրման, լարվածության, դյուրագրգռության առաջացման[56]:

Գիտնականների մի երրորդ խումբ էլ պենիտենցիար հանցավորության նպաստող գործոնները բաժանում է ընդհանուրի և հատուկի[57]:

---

[56] Տե՛ս Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М., 2004, էջ 402:

[57] Տե՛ս Каретников И.В. Обстоятельства, детерминирующие преступность в исправительно-трудовых колониях. М., 1986, էջեր 40-45:

Ընդհանուր գործոնների շարքում առանձնացվում են՝

•Համապատասխան պաշտոնատար անձանց կողմից քրեական, քրեակատարողական, քրեադատավարական, վարչական օրենսդրության և այլ իրավական ակտերի ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը,

•Դատապարտյալների կազմի քանակական և որակական փոփոխությունները,

•Հոգեբուժական, հոգեբանական, թմրամոլությունից բուժման և այլ հատուկ օգնության կարիք ունեցող դատապարտյալներին համապատասխան օգնության ոչ պատշաճ տրամադրումը:

Հատուկ են համարվում այն գործոնները, որոնք անմիջականորեն նպաստում են հանցագործությունների առանձին տեսակների կատարմանը /փախուստ ազատազրկման վայրից, սպանություններ, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ և այլն/: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերը նշված բոլոր թերացումները նպաստում են Հայաստանի ազատազրկման վայրերում պենիտենցիար հանցագործությունների կատարմանը:

Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների գործնեությունը պենիտենցիար հանցավորության կանխարգելման ուղղությամբ առաջին հերթին ենթադրում է դրանց կատարմանը նպաստող պայմանների բացահայտում և հետագա կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, մշակում և կիրառում: Բացի այդ, աշխատակիցների նշված գործնեությունը ներառում է նաև այն անձանց բացահայտումը, որոնցից կարելի է սպասել պատժի կրման պայմանների խախտումներ և, հետևապես, նրանց նկատմամբ դաստիարակչական և նախազգուշողական միջոցների կիրառում: Իհարկե, այն ենթադրում է դատապարտյալների կողմից նախապատրաստվող իրավախախտումների ժամանակին հայտնաբերում և կանխում:

Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների պարտականությունը պետք է լինի պենիտենցիար հանցագործությունների կատարմանը նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների բացահայտումը և օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը՝ դրանց վերացման

ուղղությամբ: Ընդ որում, դրանք պետք է իրականացվեն հանցագործությունների ծրագրման կամ նախապատրաստության փուլում: Այս փուլում պետք է իրականացվեն նաև անհատական-կանխարգելիչ աշխատանքները այն դատապարտյալների հետ, որոնցից սպասելի է հանրորեն վտանգավոր արարքների կատարում: Օրինակ, ծրագրելով կամ նախապատրաստելով որևէ հանցանքի կատարումը, անձը փնտրում է հանցակիցների և հատկապես՝ բացասաբար բնութագրվող դատապարտյալների շրջանում:

Տվյալ իրավիճակում անհրաժեշտ է օպերատիվ միջոցառումների իրականացում, որպեսզի նախապատրաստությունը չանցնի կոնկրետ հանցագործության կատարման փուլ: Միաժամանակ, նման աշխատանքներ պետք է տարվեն նաև այն անձանց հետ, ում հանցագործը փորձում է ներքաշել հանցանքի կատարմանը:

Նմանատիպ անհատական օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումներ տարվում են նաև դատապարտյալների խմբի կողմից նախապատրաստվող և կատարվող հանցագործությունների դեպքում: Որպես կանոն, խմբի շուրջն են համախմբվում նաև այլ դատապարտյալներ, և նման դեպքերում անհատական -կանխարգելիչ միջոցառումները վերաբերում են ոչ միայն հանցագործության նախապատրաստությանը կամ կատարմանը անմիջական մասնակցություն, այլև՝ երկրորդային դերակատարում ունեցող դատապարտյալներին:

Պենիտենցիար հանցավորությանը նպաստող օբյեկտիվ գործոններից են

•դատապարտյալների հետ տարվող դաստիարակչական բնույթի աշխատանքերի ցածր մակարդակը,

•դատապարտյալների անգործությունը,

•դատապարտյալների ոչ ճիշտ տեղաբաշխումը. վարչակազմը հաճախ անտեսում է նրանցից յուրաքանչյուրի անցած հանցավոր ուղին, տարիքային առանձնահատկությունները, ինչը հաճախ հանգեցնում է նրան, որ «փորձառու» և ագրեսիվ տրամադրված հանցագործները բնակեցվում են դրական բնութագրվող, նաև առաջին անգամ դատապարտված անձանց հետ, որն էլ տեղիք է տալիս առաջինների կողմից վերջիններիս նկատմամբ ճնշումների և

բռնության գործադրման՝ ներառելով նաև սեռական բռնությունը:

• պատժի կրման պայմանների ոլորտում վարչակազմի թերացումները, դատապարտյալների նկատմամբ թույլ հսկողությունը, մոլախաղերով զբաղվելու, թմրանյութեր ձեռք բերելու, ինչպես նաև այլ բնույթի պենիտենցիար հանցանքներ կատարելու հնարավորությունը,

• անբավարար հսկողությունը գիշերային ժամերին,

• ազդանշանային համակարգի անկատարությունը,

• վատլուսավորությունը՝ հատկապես օրվամութ ժամերին,

• դատապարտյալների հետ տարվող դաստիարակչական բնույթի աշխատանքների անբավարար մակարդակը: Նշված թերությունը առավել հաճախ արտահայտվում է նրանում, որ սեռական կյանքի խնդիրներին առնչվող դասախոսություններ և զրույցներ դատապարտյալների հետ գրեթե չեն տարվում: Ոչ միշտ է դատապարտյալներին հիշեցվում այն մասին, որ արվամությունը կարող է հանգեցնել տարաբնույթ սեռավարակների: Բացի այդ, բժշկական անձնակազմը կանոնավոր կերպով չի հետազոտում դատապարտյալներին՝ արվամոլներին առանձնացնելու, հաշվառելու և նրանց հետ անհատական հոգեբանական աշխատանքներ տանելու համար[58],

• օպերատիվ-հետախուզական գործեության թերացումները՝ կապված օպերատիվ տեղեկատվության ցածր մակարդակի հետ / դատապարտյալների մտադրությունների, ծրագրերի մասին անտեղյակությունը/,

• թմրանյութերի ապօրինի դեպքերի ոչ ժամանակին բացահայտումը և կանխումը, դատապարտյալների նկատմամբ ոչ բավարար հսկողությունը, դատապարտյալների շրջանում թմրամոլների ոչ ժամանակին հայտնաբերման և վերջիններիս հարկադիր բուժման կազմակերպումը:

Պենիտենցիար հանցավորության վրա ազդող արտաքին գործոններից են վարչակազմի ներկայացուցիչների թերացումները, իրենց վրա դրված պարտականությունների ոչ բարեխիղճ կատարումը: Սակայն դրանք ևս ունեն իրենց օբյեկտիվ պատճառները, մասնավորապես՝

[58] Տե՛ս Некрасов А.П. Профилактика пенитенциарной преступности Автореферат: Дис.... канд. юрид. наук. СПб., 2000, էջ 71:

աշխատակիցների ցածր վարձատրություն, քրեակատարողական հիմնարկներում աշխատելու համար առաջադրվող պահանջներին չհամապատասխանող կադրերի ընդունում, նրանց մասնագիտական պատրաստվածության ոչ բավարար մակարդակ /դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն կանոնների խախտում, բուժ. սպասարկման ոչ պատշաճ վիճակ/:

Պատժի կրման պայմանների խախտումները կապված են նաև արտաքին աշխարհից ՔԿՀ- ի տարածք արգելված առարկաների ներթափանցման հետ՝ գումար, ալկոհոլ, թմրանյութ, հոգեմետ նյութեր:

Այսպիսով, ազատազրկման վայրերում դատապարտյալների կողմից հանցագործությունների կատարմանը նպաստող սուբյեկտիվ գործոնները, մեր կարծիքով, անձի անձնային-հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններն են, նրա հանցածին մոտիվացիոն ոլորտը, հասարակությունից մեկուսացումը, հանցավոր միջավայրի ազդեցությամբ պայմանավորված հոգեկան տառապանքները, դատապարտյալների միջանձնային և միջխմբային լարված փոխհարաբերությունները:

Իսկ հիմնական օբյեկտիվ գործոններն են ՔԿՀ-ներում ինչպես դատապարտյալների, այնպես էլ դատապարտյալների և վարչակազմի ներկայացուցիչների փոխհարաբերություններում կոնֆլիկտային հանցածին իրավիճակների ամենատարբեր դրսևորումները: Այսպիսով, ազատազրկման վայրերում հանցավոր վարքագծի դրսևորմանը նպաստող արտաքին պայմաններն են «ազատազրկում» պատժատեսակի կատարման առանձնահատկությունները, ինչպես նաև ՔԿՀ-ի վարչակազմի բազմաթիվ թերացումները, որոնց շարքում հարկ է առանձնացնել տեխնիկական և կազմակերպակառավարչական գործառույթները: Տեխնիկական գործառույթների իրականացման թերացումները հետևյալում են՝ ձայնաազդանշանային համակարգերի, ինժեներատեխնիկական սարքավորումների բացակայություն, ծանրոցների ստուգման, ՔԿՀ տարածք մուտք գործող մեքենաների, դատապարտյալների անձնական և բնակելի կացարանների լիարժեք զննության, ինչպես նաև դատապարտյալների նկատմամբ շուրջօրյա հսկողության համար

նախատեսված հատուկ սարքերի բացակայությունը:

Կազմակերպական-կառավարչական թերացումներն են մասնավորապես՝ ՔԿՀ-ների գերծանրաբեռվածությունը նախատեսվածից անհամեմատ շատ դատապարտյալներով, որը հանգեցնում է աշխատանքային ոչ լրիվ զբաղվածության, կենցաղային դժվարությունների, ինչպես նաև անհնարին է դարձնում բոլոր դատապարտյալների ներառումը ուղղման աշխատանքներում, վարչակազմի որոշ ներկայացուցիչների կարգապահական ցածր մակարդակը, անբարեխիղճ վերաբերմունքը աշխատանքին, հանցածին իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը կամ ոչ լրիվությունը[59]:

Օբյեկտիվ գործոնների մեջ կարելի է առանձնացնել նրանք, որոնք նպաստում են փախուստներին, որն ինչպես արդեն նշվել է, ամենատարածվածն է պենիտենցիար հանցագործությունների շարքում:

Դրանք են՝

- անվտանգությունն ապահովող տեխնիկական միջոցների ոչ բավարար վիճակը,
- դատապարտյալների նկատմամբ հսկողության իրականացման ցածր մակարդակը,
- ստուգումների միանման անցկացումները,
- զննության ոչ պարբերաբար և ոչ լրիվ անցկացումը:

§ 2 «Հանցավոր ենթամշակույթի» ազդեցությունը պենիտենցիար հանցավորության վրա

Ընդհանուր մշակույթի մաս հանդիսացող ենթամշակույթը այս կամ այն սոցիալական խմբի, ավանդույթների, արժեքների սովորույթների ամբողջությունն է: «Հանցավոր ենթամշակույթը» հակասոցիալական, քրեածին ենթամշակույթն է, որը ոչ միայն տարբերվում, այլև հակադրվում է ընդհանուր մշակույթին, նրանում գերիշխող արժեքներին: Հանցավոր ենթամշակույթի

[59] Տե՛ս Тангиев Б.Б. Предупреждение преступлений в учреждениях, исполняющих наказаниев виде лишения свободы: Автореф. дис.канд. юрид. наук. СПб., 2004, էջ 12:

տարրն է կազմում դատապարտյալների ենթամշակույթը, որը, ձևավորվելով ազատազրկման վայրերում, պահպանվում է հանցավոր միջավայրում հեղինակություն վայելող անձանց շնորհիվ: Յուրաքանչյուր ենթամշակույթ, այդ թվում նաև բանտային, ձևավորում է իր լեզուն, բարքերը, կենսակերպը, վարքագծի կարծրատիպերը[60]:

Վ. Միլլերի կարծիքով, հակասոցիալական ենթամշակույթը ավելի հաճախ ձևավորվում է հասարակության ստորին խավերում, հատկապես այլ երկրներից միգրացիայի, գյուղական բնակավայրերից քաղաքներ կամ մեկ սոցիալական խմբից մեկ այլ խումբ տեղափոխվելու հետևանքով, երբ անձը չի կարողանում (կամ չի ցանկանում) անմիջապես ընդունել նոր միջավայրի արժեքները: Ենթամշակույթի ձևավորման հիմնական պատճառներից է այլ մշակույթին հարմարվելու խնդիրը: Այսինքն՝ ենթամշակույթի ձևավորումը պայմանավորվում է նոր միջավայրին անձի ընտելանալու պահանջմունքով[61]:

Կրիմինալոգիայում բազմաթիվ վարկածներ են առաջադրվել բանտային ենթամշակույթի առաջացման պատճառների վերաբերյալ: Կրիմինոլոգների մի մասը ենթամշակույթի առաջացումը բացատրում է անձանց սեռական մեկուսացմամբ, ակտիվ և պասիվ համասեռամոլների տարանջատմամբ՝ բարոյապես արդարացնելով պասիվների շահագործումը ակտիվների կողմից: Այստեղից կարելի հետևություն անել, որ սեռական մեկուսացումը պետք է առաջացնի հակասոցիալական ենթամշակույթ այնտեղ, որտեղ սահմանափակված են տարբեր սեռերի միջև սեռական բնույթի շփումները:

Կրիմինոլոգների մյուս խումբը քննադատում է այս կարծիքը՝ համարելով այն սահմանափակ և ոչ հիմնավոր[62]: Իսկապես, սեռական մեկուսացումը ոչ միշտ է հանգեցնում ենթամշակույթի առաջացման (օրինակ՝ բանակում):

Ենթամշակույթի ձևավորման պատճառները պայմանավորված են ազատազրկման վայրում հայտնված անձի հոգեբանությամբ, նրա

---

[60] Տե՛ս Ефимов Е. С. Современная тюрьма. Быт, традиции и фольклор. М., 2004, էջ 57:
[61] Տե՛ս Хачикян А. М. Лищение свободы: криминологические и уголовно-исполнительные проблемы. Ереван, 2008, էջ 100:
[61] Տե՛ս Подгурецкий А. Очерк социологии права. М., 1974, էջ 206:
[62] Տե՛ս Подгурецкий А. Очерк социологии права. М., 1974, էջ 206:

հոգեկան վիճակով: Դատապարտյալը գտնվում է ֆրուստրացված վիճակում, ինչը դառնում է վերջինիս խոցելիության, լարվածության, ագրեսիվության պատճառ: Անձը, գիտակցելով, որ ագրեսիվ գործողությունների դիմելը իր հիմնական «թշնամիների»՝ վարչակազմի ներկայացուցիչների կամ բանտային «հեղինակությունների» նկատմամբ վտանգավոր է, զսպում է իրեն, ինչի հետևանքով կուտակված բացասական հույզերը վերածվում են թաքնված ագրեսիայի: Նման իրավիճակներում նույնիսկ ամենաչնչին առիթն իսկ կարող է հանգեցնել կոնֆլիկտային իրավիճակների:

Կրիմինոլոգների երրորդ խմբի կարծիքով, դատապարտյալների ենթամշակույթի առաջացման պատճառ է ոչ այնքան անձի հոգեբանական վիճակը, որքան ազատազրկման վայրերում վերջինիս կենսագործունեության բնույթի փոփոխությունը[63]: Բանտային ենթամշակույթի բնույթը պայմանավորված է ազատազրկում պատժատեսակի առանձնահատկությամբ՝ մարդկանց հարկադրական մեկուսացում, նրանց ներառում միասեռ խմբերում, կենսագործունեության բոլոր ոլորտներում վարքագծի խիստ կանոնակարգում: Դրանք զրկում կամ սահմանափակում են անձի տարրական պահանջմունքները բավարարելու հնարավորությունը, կյանքը դարձնում են միապաղաղ և անհետաքրքիր: Քրեական ենթամշակույթի պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ սովորույթները հարմարեցվում են փոփոխվող միկրոմիջավայրին, այսինքն՝ դրանք կառավարելի են, դրանց վրա կարելի է ներազդել, թեև դաշատբարդ և երկարատև գործընթաց է [64]:

Վ. Ն. Կուդրյավցևը նշում է. «հանցավոր միջավայրի բարքերը հենց այդ միջավայրի ենթամշակույթն են, որը, դժբախտաբար, կազմում է բնակչության ընդհանուր մշակույթի մաս: Հանցավոր աշխարհի նորմերը և օրենքները մի կողմից պաշտպանում են հանցավոր միջավայրը, իսկ մյուս կողմից՝ այլասերում երիտասարդությանը, խեղաթյուրում հանրության

[63] Տե՛ս Хохряков Г. Ф. Социальная среда и личность. М., 1982, էջ 12-17, Б. Холыст, Криминология. Основные проблемы. М., 1980, էջ 205:
[64] http://cyberleninka.ru/article/n/tyuremnaya-subkultura-ponyatie-harakteristika-osobennosti

գիտակցությունը»[65]:

Այսպիսով, հակասոցիալական ենթամշակույթի առաջացման պատճառը անազատության նոր կենսապայմաններին հարմարվելու ձգտումն է, սոցիալական առաջնային պահանջմունքները բավարարելու ցանկությունը:

Վերը թվարկվածները օբյեկտիվ բնույթի են և համարվում են ենթամշակույթի առաջացման արտաքին գործոնները:

Գոյություն ունեն նաև ենթամշակույթի վրա ազդող ներքին, սոցիալ-հոգեբանական գործոններ: Հասարակությունը դատապարտում և մեկուսացնում է դատապարտյալներին՝ հակադրելով նրանց օրինապահ քաղաքացիներին: Դատապարտյալները առանձնանում են որպես հասարակության առանձին միավոր՝ հակադրելով «իրենց» ազատության մեջ ապրող «նրանց»: Նրանք մշակում են նորմեր՝ «իրենց» արժեքները և շահերը պաշտպանելու, «իրենց» համախմբվածությունն ամրապնդելու նպատակով: Նորմերի նշված համակարգը ունի վառ արտահայտված խմբային բնույթ (մի՛ խաբիր յուրայիններին, մի՛ գողացիր յուրայիններից): Իսկ նորմերը խախտողների համար նախատեսվում է սոցիալական պիտակավորում՝ հատուկ դաջվածքներ, կեղծանուններ, սոցիալական մեկուսացում՝ «բարոյալքվածների խմբի անցում»[66]:

Անհնար է պատկերացնել դատապարտյալների ենթամշակույթն առանց այն նորմերի, որոնք ապահովում են այդ ենթամշակույթի՝ որպես հակասոցիալական օրգանիզմի ներքին ամբողջականությունը: Նշյալ նորմերը, ներթափանցելով դատապարտյալների և հատկապես երիտասարդ դատապարտյալների գիտակցական ոլորտ և վառ արտացոլվելով նրանց վարքագծում՝ ապահովում են հակասոցիալական խմբերի կենսունակությունը: «Այլ կյանքի» պայմանների ազդեցությամբ՝ ազատազրկման վայրերում տեղի է ունենում դատապարտյալների փոխադարձ կրիմինալացում, այսինքն՝ «վարակում» հանցածին հոգեբանությամբ, գաղափարախոսությամբ, ավանդույթներով և սովորույթներով: Այսպիսով, հանցավոր ենթամշակույթի

[65] Տե՛ս Кудрявцев В. Н. Проблема мотивации в криминологии. М., 1986. էջեր 5-7:
[66] http://www.strana-oz.ru/2008/2/tyuremnaya-subkultura

արժեքները կրող դատապարտյալների համախմբումը և մեկուսացումը մեկ վայրում բացասաբար են անդրադառնում նրանցից յուրաքանչյուրի վարքագծի վրա: Դատապարտյալների հակաօրինական կենսաձևը (ավանդույթներ, սովորույթներ, դաջվածքներ, թղթախաղ, ալկոհոլամոլություն և թմրամոլություն) ևս նպաստում է նրանց փոխադարձ կրիմինալացմանը: Բանտային կյանքում գերակշռում են դատապարտյալների հակաօրինական վարքագիծը խստորեն կարգավորող հակասոցիալական ավանդույթներն ու սովորույթները, որոնցից ցանկացած շեղում կարող է հանգեցնել անձի համար բացասական լուրջ հետևանքների: Հանցավոր ավանդույթները դատապարտյալների վարքագծի կայուն և հստակ կարգավորիչներն են, իսկ դրանց երաշխիքներն են ոչ միայն հանցավոր գաղափարախոսությունը, այլև այդ ավանդույթների խախտման համար նախատեսված որոշակի պատժամիջոցները: Հանցավոր ավանդույթների և սովորույթների պահպանությունը կախված է կոնկրետ իրավիճակից, անձի տարիքից, հարմարվողականությունից, դատապարտյալների աստիճանակարգում զբաղեցրած դիրքից, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի առանձնահատկություններից և վարչակազմի գործելաոճից: [67]

Դատապարտյալների հանցավոր ավանդույթները և սովորույթները արտացոլում են ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների կենսակերպը, կարգավորում են նրանց փոխհարաբերությունները: Դատապարտյալների վարքագծի հիմնական սկզբունքները տասնամյակներ շարունակ չեն փոխվում: Սակայն ժամանակի թելադրանքով դրանք, այսպես թե այնպես, կրում են որոշակի, հաճախ էական փոփոխություններ. ձևավորվում են տվյալ ժամանակահատվածում հանցավոր աշխարհում տիրող իրավիճակին համապատասխան նոր սկզբունքներ և բարքեր:

Հանցավոր աշխարհի օրենքները նախատեսում են դատապարտյալների խիստ դասակարգում «յուրայինների» և «օտարների», ինչպես նաև յուրաքանչյուր դատապարտյալի դերի և կարգավիճակի հստակեցում: Նման շերտավորման պատճառը առավել

[67] http://cyberleninka.ru/article/n/tyuremnaya-subkultura-ponyatie-harakteristika-osobennosti

վտանգավոր հանցագործների՝ հատկապես կրկնահանցագործների ձգտումն է պատժի կրման ընթացքում ձեռք բերել արտոնություններ այլոց (դատապարտյալների) իրավունքները ոտնահարելու միջոցով: Դա անխուսափելիորեն հանգեցնում է կոնֆլիկտային իրավիճակների, բացասական կողմնորոշում ունեցող դատապարտյալների կողմիցագրեսիվ վարքագծի դրսևորման: Այստեղից ենթադրվում է, որ հանցավոր ավանդույթների, սովորույթների և օրենքների պահպանությունը հնարավոր է ապահովել միայն բռնի միջոցներով[68]:

Դատապարտյալների ավանդույթները և սովորույթները նույնքան բազմազան են, որքան և նրանց միջավայրը: Դրանց առաջին խումբը, այսպես կոչված, «օրենք- պատվիրաններն» են: Դրանք մի կողմից հիմնված են ընդհանուր քրեական ենթամշակույթի անխախտ օրենքների վրա, մյուս կողմից արտացոլում են քրեակատարողական հիմնարկներում պատժի կրման պայմանների յուրահատկությունը: Ըստ իրենց գործառութային նշանակության՝ դրանք կարող են ունենալ ինչպես բացասական, այնպես էլ դրական ուղղվածություն: Այսպես, դատապարտյալների շրջանում տասնամյակներով պահպանվում է դատապարտյալների վարքագծի հիմնական սկզբունքը. «Մի՛ արա այն, ինչը կարող է վնասել մեզ, քանի որ կտուժի յուրաքանչյուրս»: Այստեղից էլ՝ «մի՛ գողացիր յուրայիններից», «մի՛ մատնիր», «կոնֆլիկտային իրավիճակը հարթելու համար մի՛ դիմիր վարչակազմի ներկայացուցիչների օգնությանը», «մի՛ կրիր դանակ կամ նմանատիպ որևէ իր, քանի որ յուրաքանչյուրն ունի անձնական անձեռնմխելիության իրավունք», «հարբած վիճակում մի՛ վիճիր», «ավելորդ հարցեր մի՛ տուր և քի՛չ խոսիր» և այլն[69]:

Նշված օրենքները բոլորի համար են. կարգավորում են դատապարտյալների փոխհարաբերությունները՝ անկախ կարգավիճակից և ցանկացած խախտում կարող է հանգեցնել բացասական լուրջ հետևանքների:

Հաջորդ պատվիրանը հետևյալն է՝ «պահպանի՛ր արժանապատվությունդ», «մի՛ դարձիր համասեռամոլ» (բայց,

[68] http://www.strana-oz.ru/2008/2/tyuremnaya-subkultura
[69] http://cyberleninka.ru/article/n/tyuremnaya-subkultura-ponyatie-harakteristika-osobennosti

միաժամանակ, թույլատրվում է «օգտագործել» պասիվ համասեռամոլներին կամ նրանց, որոնց ստիպողաբար դարձրել են այդպիսին), «կարողացի՛ր պաշտպանել ինքդ քեզ»: Եթե լուրեր տարածվեն այն մասին, որ դատապարտյալը համագործակցում է ՔԿՀ վարչակազմի հետ կամ, օրինակ, չի վճարել թղթախաղի պարտքը, ապա, ըստ բանտային «օրենք-պատվիրանների», նա պարտավոր է պաշտպանել իրեն. «Ապացուցի՛ր, որ դա այդպես չէ՝ ծեծի՛ր կամ սպանի՛ր քեզ զրպարտողին, այլապես այն ամենը, ինչ ասում են քո մասին, ճշմարտություն է»[70]:

Ֆիզիկապես ուժեղ և կամային անձինք, որպես կանոն, ավելի լավ են հարմարվում ազատազրկման վայրերի կենսապայմաններին: Նրանք են ստեղծում և պահպանում նշված նորմերը:

Միաժամանակ, ազատազրկման վայրերում դեռևս պահպանվում և գործում են հնից եկած օրենքներ, որոնք պարտավորեցնում են դատապարտյալներին պահպանել անձնական հիգիենայի կանոնները, վնաս չպատճառել հիվանդ և ծեր դատապարտյալներին[71]:

Թվարկված նորմերի գոյության մասին են վկայում ինչպես առանձին գիտական ուսումնասիրություններ[72], այնպես էլ իրենք՝ ազատազրկման դատապարտվածները:

«Կոշ» ՔԿՀ-ում մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում այն հարցադրմանը, թե ինչ կանոնների պետք է հետևի յուրաքանչյուր դատապարտյալ, վերջիններիս պատասխանը գրեթե միատեսակ է՝ «արգելվում է մատնել ընկերոջը, արգելվում է դառնալ համասեռամոլ, արգելվում է գողանալ յուրայիններից, թղթախաղում պարտքն արգելվում է» և այլն:

Նշված նորմ-սովորույթները և ավանդույթները վերազգային են. գոյություն ունեն բազմաթիվ այլ երկրների պենիտենցիար համակարգերում:

Ավանդույթների և սովորույթների հաջորդ խումբը վերաբերում է բացառապես քրեական աշխարհի «հեղինակություններին»: Այդ օրենքները ձևավորվում են

---

[70] Տե՛ս նույն տեղում:
[71] Տե՛ս Абрамкин В. Ф. Чижов Ю. В. Как выжить в советской тюрьме. М., 1996:
[72] Տե՛ս Хохряков Г. Ф., Саркисов Г. С. Преступление осужденнык, причины и предупреждение. Ереван, 1988:

քրեական աշխարհի պարագլուխների հրավիրած, այսպես կոչված, «հավաքների», «համագումարների» ընթացքում, իսկ դրանց կատարումը երաշխավորվում է ոչ միայն «քրեական հեղինակությունների» ազդեցությամբ, այլև բռնության գործադրմամբ:

Գոյություն ունի «օրենքների» մի քանի խումբ: Առաջին խումբը կարգավորում է փոխհարաբերությունները հասարակության, իրավապահ մարմինների, ՔԿՀ վարչակազմի հետ. «Մի՛ աշխատիր, ապրի՛ր քո հանցավոր «հմտությունների» հաշվին», «Մի՛ համագործակցիր իրավապահ մարմինների հետ», «Ոստիկանության, ՔԿՀ վարչակազմի, դատարանի և դատախազության յուրաքանչյուր սխալը ծառայեցրո՛ւ քո շահերին, օրինակ՝ իրավունքներիդ ընդլայնմանը ազատազրկման վայրում», «Զրպարտի՛ր քեզ վնաս պատճառող ՔԿՀ ներկայացուցիչներին»: Թվարկվածները գլխավոր, ամենակայուն «օրենքներն» են, որոնք ինքնին անհանդուրժողականություն, թշնամական վերաբերմունք են ձևավորում իրավապահ մարմինների և ընդհանրապես ամբողջ օրինապահ հասարակության նկատմամբ:

Երկրորդ խումբ «օրենքները» կարգավորում են դատապարտյալների միջև փոխհարաբերությունները: Այսպես, դատապարտյալների դասակարգումը նախատեսված է այս «օրենքներով»՝

1. հեղինակություններ
2. առաջնորդներ
3. ակտիվիստներ
4. բարոյալքվածներ

Եվ վերջապես, նշված «բնական օրենքների» ներգործության երրորդ ոլորտը ինքնին հանցավոր աշխարհն է: «Քրեական հեղինակության» յուրաքանչյուր քայլը ենթարկվում է այնպիսի խիստ կարգավորման, որ «ենթամշակութային իրավունքի» այս ճյուղը կարելի է բաժանել առանձին «ինստիտուտների»:

Իրավաչափ է համարվում այն, որ մարդկային ցանկացած գործունեություն, այդ թվում՝ հակահասարակական, ունի իր հերոսները, որոնց անունները մտնում են պատմության մեջ, որոնց

փորձում են նմանակել սերունդները: Նույնը տեղի է ունենում նաև հանցավոր աշխարհում. տարբեր ժամանակաշրջաններում քրեածին տարրերը ազատազրկման վայրերում ձևավորել են իրենց գաղափարախոսությունը: Իդեալական հանցագործի դերում 20-րդ դարի 30-ական թվականներից հանդես էր գալիս «օրենքով գողը»: Նրանում դատապարտյալները տեսնում էին իր կյանքում տարբեր զրկանքներ կրած, շատ փորձությունների միջով անցած և հետևապես փորձառու ու վստահելի մարդու, «բյուրեղյա մաքրության հոգու տեր անձնավորության», «հանցավոր օրենքներին» անշեղորեն հետևող և իրեն ու իր կյանքը «հանցավոր գաղափարախոսության» նվիրած մարդու: Նմանատիպ մարդկանց օրինակի վրա են դաստիարակվում պատիժը կրող երիտասարդները: Ազատազրկման վայրերում երիտասարդությունը յուրացնում է «հանցածին կյանքի» օրենքները: Նրանց հրապուրում է այդ աշխարհի թվացյալ անկախությունը: «Իսկական բանտարկյալ» դառնալու համար սահմանված է որոշակի փորձաշրջան, որի ընթացքում երիտասարդ դատապարտյալը պարտավոր է անցնել մի շարք փորձություններ:

Խմբավորման անդամները պետք է լինեն ազնիվ, միմյանց նկատմամբ արդար, չպետք է ստեն, պարտավոր են օգնել «նեղն ընկած» (պատժախուց, հիվանդանոց) դատապարտյալներին, ինչի համար էլ դատապարտյալների շրջանում գոյություն ունի «հանգանակելու» սովորույթ:

«Բոլորը պարտավոր են ցանկացած հարցում օգնել յուրայիններին», ինչը պարտավորեցնում է հետապնդել «հանցախմբին» վնաս հասցրած անձանց: Եթե նույնիսկ վնասը պատճառել են ոչ թե քեզ, այլ յուրայիններից որևէ մեկին, ապա պարտավոր ես օգնել վրեժխնդիր լինելու:

Ըստ իրենց նշանակության՝ հանցավոր ենթամշակույթի նորմերը լինում են դատավարական, որոնք կարգավորում են դատապարտյալների միջև կոնֆլիկտային հարաբերությունները. արարողակարգային, որոնցով կարգավորվում է, օրինակ, նորեկի մուտքը «հանցավոր հանրություն»՝ այսպես կոչված «գրանցումը». ընթացակարգային՝ ծագած վեճերի լուծման ուղիները և այլն:

Նկարագրված ավանդույթները և սովորույթները տասնամյակների ընթացքում ձևավորել և պահպանել են քրեական աշխարհի «հեղինակությունները». դրանք ժամանակի ընթացքում փոփոխությունների գրեթե չեն ենթարկվել:

Ազատազրկման վայրերում հանցագործությունների մեծ մասի կատարումը պայմանավորված է հանցավոր աշխարհի ավանդույթներով և սովորույթներով: Քրեակատարողական հիմնարկներում կատարվող հանցագործությունների կեսից ավելին, այսպես թե այնպես, պայմանավորված է պատիժ կրող դատապարտյալների շրջանում պաշտամունքային նշանակություն ունեցող ավանդույթներին և սովորույթներին անշեղորեն հետևելով[73]:

Հանցավոր ենթամշակույթի հաջորդ կարևոր տարրերից է «հանցաշխարհի դրամարկղը»: Այն ռուսաստանյան բանտերում գոյություն է ունեցել դեռևս մինչև 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Թող որ ոչ այնքան ազնիվ մեթոդներով, սակայն ի սկզբանե այն ստեղծվել է ազնիվ նպատակով, այն է՝ ազատազրկման վայրերում հայտնված դատապարտյալներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին նյութապես օգնելը: Սակայն վերջին տասնամյակներում «հանցաշխարհի դրամարկղը» կրել է նպատակային և գործառութային լուրջ փոփոխություններ:

Ներկայումս գործող սկզբունքներն են՝

• քրեական հեղինակություններին և նրանց ընտանիքի անդամներին օգնություն ցույց տալը,

• դատապարտյալներին և նրանց ընտանիքի անդամներին օգնություն ցույց տալը,

• հանցավոր գործունեության ընդլայնումը,

• գործադիր և օրենսդիր մարմինների ներկայացուցիչներին կաշառելը (հանցավոր աշխարհի կողմից ղեկավարվող կազմակերպությունների, ֆոնդերի և բանկերի գործունեության համար արտոնություններ ստանալու նպատակով),

• իրավապահ և դատական մարմինների կաշառումը,

[73] Տե՛ս Каретников В. И. Характеристика преступлений, совершеннын осужденными в ИТК. 1986, էջ 85:

• հանցավոր գործունեության օրինականացումը,

• հանցավոր միավորումների արդյունավետ գործունեության համար նյութական և ֆինանսական հենարանի ստեղծումը,

• հանցավոր ենթամշակույթի տարածումը,

• ՔԿՀ ներկայացուցիչներին դիմադրելու հնարավորության ստեղծումը,

• բազմապիսի կազմակերպչական խնդիրների լուծումը (հաշվեհարդարների կազմակերպում, հանցավոր աշխարհի պարագլուխների միջև հանդիպումների կամ նրանց հանգստի կազմակերպում և այլն):

Այսպիսով, հանցավոր աշխարհի ներկայիս գործունեությունը կարելի է անվանել հանցավոր բիզնես, որը ամենևին չի համապատասխանում ավանդական, «դասական» հանցավոր աշխարհի էությանը:

Նշենք, որ «հանցաշխարհի դրամարկղի» շնորհիվ ապօրինի հանձնուքների տեսքով ազատազրկման վայրեր է փոխանցվում այսպես կոչված «օգնություն», որը հաճախ պարունակում է նաև թմրանյութեր կամ արգելված այլ նյութեր: Դժվար չէ ենթադրել, որ հանցավոր աշխարհի ներկայացուցիչների թմրանյութային կախվածությունը կարող է ունենալ խիստ բացասական հետևանքներ: Ընդ որում, իրավիճակը բարդանում է, երբ թմրանյութային կախվածություն ունեցող նախկին դատապարտյալը պատիժը կրելուց հետո հայտնվում է ազատության մեջ. չունենալով այլևս «ընդհանուր կաթսայից» թմրամիջոցներ ձեռք բերելու հնարավորություն՝ անձը հաճախ վերադառնում է գումար հայթայթելու իր հանցավոր «արհեստին»:

«Հանցաշխարհի դրամարկղի» պահպանության համար նշանակվում են հանցավոր աշխարհի պարագլուխների շրջանում վստահություն վայելող անձինք, ովքեր ունեն լիազորությունների լայն շրջանակ. կարող են մահապատժի դատապարտելու որոշում կայացնել այն անձանց նկատմամբ, ովքեր խախտել են այսպես կոչված «ֆինանսական կարգապահությունը»: Նմանատիպ սխեմա գործում է նաև ՔԿՀ-ներում՝ իհարկե առավել քողարկված ձևով:

20-րդ դարի 80-90-ական թթ.՝ վերակառուցման տարիներին, «օրենքով գողերը» բաժանվեցին «հին սերնդի» և «նոր սերնդի գողերի», որոնց միջև սկսվեց հակամարտություն: Այժմ այն վերածվել է պատերազմի՝ միմյանց ֆիզիկապես ոչնչացնելու նպատակով: Ընդ որում, այսպես կոչված «նոր սերնդի գողերը» ի հայտեն եկել Կովկասում, ունեն առավելապես վրացական ծագում: Ըստ ռուս գիտնական Վ. Ա. Զաբորսկիի՝[74] «Նոր սերնդի գողերի» և «հին սերնդի գողերի» սովորությունները տարբերվում են հետևյալով.

• Եթե նախկինում «օրենքով գող» ճանաչվելու համար պարտադիր պայման էր, որ անձը ունենար ազատազրկման ձևով պատժի կրման փորձ, ցուցադրած լիներ իր «ունակությունները» և «չկոտրվեր» դժվարություններից, ապա «նոր սերնդի գողերի» համար այդ ամենը պարտադիր չէ: Ավելին՝ այժմ ավելի հարգի է, որ անձը արդարադատության հետերբևէ խնդիր ունեցած չլինի:

• «Նոր գողերը» կարող են գնել «գող» կոչվելու իրավունքը «օրենքով գողերի» հավաքների ժամանակ: Նախկինում դա ընդունելի չէր. «գողը» պիտի ապրեր «գողի» նման, այսինքն՝ նաչէր կարող ապրել շքեղ կյանքով, ունենալ մեծ թվով թանկարժեք մեքենաներ, դղյակներ և այլն: Ներկայումս դա թույլատրելի է: «Նոր գողը» կարող է ընդհանրապես չանդամագրվել հանցավոր համագործակցությանը, որպեսզի խուսափի հանցավոր աշխարհում ընդունված ավանդույթները պահպանելուց, օրինակ՝ եկամտի հիմնական մասը նվիրաբերելու հանցավոր «դրամարկղին», չհայտնվի իրավապահ մարմինների տեսադաշտում, իր թեկնածությունը ընտրություններին առաջադրելու հնարավորություն ունենա և այլն: Հասկանալի է, որ այս սովորույթների առաջացումը պայմանավորած է քաղաքական և տնտեսական նոր համակարգերի ձևավորմամբ:

• «Նոր սերնդի գողերը», ինչպես և «հները» կատարում են իշխանական մարմինների գործառույթներ (միայն թե «հները» հանդես էին գալիս «տիրոջ» դերում ազատազրկման վայրերում, իսկ «նորերը»՝ ազատության մեջ), ինչպես նաև օժտված են դատավորի

[74] Տե՛ս Заборский В.А. Криминологическая характеристика и предупреждение пенитенциарной преступности. СпБ 2005г., էջեր 55-57:

գործառույթներով, մասնավորապես՝ դատապարտյալները, վերջիններիս հարազատները նրանցից են խորհուրդ հարցնում, օգնություն խնդրում, այդ թվում՝ նյութական, ծագած վեճերը հարթելու համար նրանց են դիմում և այլն: «Նորերի» հանցավոր գործնեության ոլորտն ավելի լայն է՝ սպանություններ, այդ թվում՝ «պատվերով», ահաբեկում, շանտաժ և շորթում, զոհերի խոշտանգումներ, բանկային գործարքներին վերաբերող խարդախություններ, թմրաբիզնես և այլն: Մինչդեռ «հին գողերի» համար հանցավոր գործնեության հիմնական տեսակներն էին գրպանահատությունը, խարդախությունը, գույքի հափշտակությունը:

• ՔԿՀ-ներում պատիժ կրող «լիդերներին», «հեղինակություններին» պարտադիր օգնություն՝ դրամի, թմրանյութերի, սննդամթերքի և այլ կենցաղային պարագաների տեսքով: Նախկինում ևս ընդունված է եղել նման օգնությունը, սակայն ոչ ներկայիս ծավալներով:

• Ինքնազոհաբերումը՝ հանուն հանցավոր խմբավորման շահերի, հատկապես սկզբնական շրջանում, երբ պետք է ապացուցել «ազնիվ բանտարկյալ» լինելը: Ի դեպ սա առավելապես բնութագրական է «հին գողերին», ընդ որում՝ «ամբողջ հանցավոր կյանքի» համար, իսկ «նորերի» համար՝ միայն սկզբնական շրջանում, երբ անձը հանցավոր խմբավորման կողմից կարող է ենթարկվել որոշակի փորձությունների:

• «Նոր գողերի» համար թույլատրելի է և նույնիսկ ցանկալի որոշակի խնդիր լուծելու համար իրավապահ մարմինների հետ համագործակցությունը: Իսկ «հներին» իրավապահ մարմինների հետհամագործակցությունը սպառնում էր «մահապատժով»:

• Օրինական բիզնեսի ստեղծում, որի միջոցով «լվացվում են» հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները, այդ միջոցների հաշվին ապրելը: Իսկ ահա «հների» համար անթույլատրելի էր նման ապրելակերպը. նրանք կարող էին օգտվել միայն հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցներից:

Այս վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ «հին գողերի» սովորությունները առաջին հերթին նպաստում էին

պենիտենցիար հանցավորության, իսկ «նոր սերնդի գողերի» սովորությունները՝ նախ՝ պրոֆեսիոնալ, ապա՝ տնտեսական և նոր միայն՝ պենիտենցիար հանցավորության զարգացմանը:

Բանտային ենթամշակույթի յուրահատուկ տարրերից է հանցաշխարհի մետալեզուն՝ ժարգոնը, որը այդ ենթամշակույթի յուրահատկությունը, հանցավոր միջավայրի կազմակերպվածությունն ու համախմբվածությունն արտացոլող իրավաչափ երևույթ է: Ժարգոնը կամ մասնագիտական տերմինաբանությունը ցանկացած ոլորտի բաղկացուցիչ տարրն է, հետևապես հանցավոր ժարգոնի գոյությունը պայմանավորված է հանցավորության գոյությամբ:

Փակ տարածության մեջ ձևավորված բանտային լեզուն դատապարտյալների առօրյայի անբաժան մասն է, հետևաբար, կամաթե ակամա, յուրաքանչյուր դատապարտյալ սովորում և օգտագործում է այն իր ամենօրյա շփումներում: Դատապարտյալների խոսակցական լեզվում ժարգոնի առկայությունը և դրա քրեածին նշանակությունը ամենևին մտացածին չեն: Սկզբնական շրջանում ժարգոնի ցինիկ արտահայտությունները ներթափանցում են անձի խոսակցական լեզու, այնուհետև սկսում են ներազդել նրա գիտակցության, հոգեբանության վրա: Յուրահատուկ բառապաշարի աստիճանական ազդեցության ներքո տեղի է ունենում արժեքային կողմնորոշումների բացասական վերադասավորում: Դատապարտյալը, կորցնելով իր բնական խոսելաձևը, լեզուն, ավելի ու ավելի է հեռանում բարոյական նորմերից և առավել խորը ընկալում հանցավոր միջավայրի բացասական երևույթներն ու սովորությունները: Դրանով իսկ դատապարտյալը նպաստում է ազատազրկման վայրերում ենթամշակութային փոխհարաբերությունների կայունացմանը:

Այսպիսով, ազատազրկման վայրերում բանտային ժարգոնը բանտային ենթամշակույթի անքակտելի և ինքնուրույն գոյություն ունեցող մասն է, որը միտում ունի ավելի կատարելագործվելու[75]: Դրա իմացությունը կհեշտացնի ՔԿՀ վարչակազմի ներկայացուցիչների աշխատանքը իրենց առջև դրված

[75] http://coollib.com/b/115139/read

օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների կատարման հարցում: Իսկ ինչ վերաբերում է պենիտենցիար հիմնարկներում նշված երևույթի չեզոքացմանը, ապա այն պետք է իրականացվի ընդհանուր ուսուցողական ծրագրերի ընդլայնման, ինչպես նաև ազատազրկվածների և տարբեր հասարակական, կրոնական ու այլ կազմակերպությունների միջև բարոյահոգեբանական մշտական կապ հաստատելու միջոցով:

Ըստ ժարգոնային փոփոխությունների՝ կարելի է դատել հանցավոր աշխարհում տեղի ունեցող զարգացումների մասին: Օրինակ՝ անգլերենից փոխառված «քիլեր» բառի ներթափանցումը հանցավոր ժարգոն վկայում է, որ հանցավոր աշխարհում ի հայտ եկել նոր «մասնագիտություն»՝ «վարձու մարդասպան», անձնական սեփականությունը բնորոշվում է նոր հասկացությամբ՝ «տանիք» և այլն:

Դատապարտյալների ենթամշակույթի պարտադիր տարրերից է դաջվածքը: Մեր կողմից արված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դաջվածքների մեծ մասը ոչ թե նախորդել, այլ հաջորդել է հանցագործությանը, ավելի կոնկրետ՝ դաջվել է ազատազրկման վայրում: Դատվածությունների քանակի աճի հետ մեկտեղ ավելանում է նաև դաջվածքների թիվը[76]:

Կրիմինալոգիայի տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում դաջվածքների դասակարգումը ըստ իմաստային նշանակության, քանի որ ազատազրկման վայրերում դրանք դաջվում են ոչ թե գեղագիտական նկատառումներով, այլ ունեն սիմվոլիկ նշանակություն, որոշակի իմաստ:

Դաջվածքի բնույթից կարելի է պարզել, թե ինչ կյանքով է ապրել դատապարտյալը մինչև ազատազրկման վայրում հայտնվելը, պատկերացում կազմել նրա կենսակերպի վերաբերյալ: Օրինակ՝ թմրամոլները իրենց ձեռքին դաջում են կակաչ, սիրտկամ ասեղ: Ֆիզիկապես ուժեղ դատապարտյալները իրենց մարմինը զարդարում են «թռչունների արքայի»՝ արծվի պատկերով[77]:

Բացի այդ, տարաբնույթ դաջվածքների իմաստային նշանակության իմացությունը և վերծանումը օգնում են

[76] Տե՛ս Коган Ю. М. Татуировки преступников. Одесса, 1928, էջ 12:
[77] http://coollib.com/b/115139/read

բնութագրել անձին առանց համապատասխան հարցաքննության (օրինակ՝ որոշակի դաջվածքներից կարելի է պարզել անձի կարգավիճակը հանցավոր աստիճանակարգում, ինչպես նաև կանխատեսումներ անել ազատազրկման վայրում նրա վարքագծի վերաբերյալ):

Դաջվածքների իմաստային նկարագրությունը որոշակիորեն բացահայտում է դատապարտյալների շրջանում դրանց զանգվածային կիրառման պատճառները, թեպետ գիտական գրականության մեջ այս խնդրի վերաբերյալ ձևավորված միասնական կարծիք չկա:

Այսպես, հայտնի գինական Գ. Տարդը հրաժարվում է դաջվածքների մեջ որևէ իմաստ տեսնելուց: Նրա կարծիքով, բանականության տեսանկյունից հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում կարող է լինել դաջման երկու պատճառ՝ նմանակում և ձանձրույթ[78]:

Դրանում, իհարկե, կա ճշմարտություն: Իրոք, եթե ուշադիր ուսումնասիրենք անչափահաս և երիտասարդ դատապարտյալների միջավայրը[79], ապա կհամոզվենք դրանում: Հասարակությունից երկարատև մեկուսացումը, միապաղաղ կյանքը, միջավայրում հեղինակություն ձեռք բերելու ձգտումը երիտասարդ տարիքի դատապարտյալներին մղում են հետևելու «բանտային կյանքի» սովորույթներին:

Այնուամենայնիվ, նշված հանգամանքները չեն կարող ամբողջությամբ բացատրել զանգվածաբար դաջվածքներ անելու պատճառները: Դրանք, կարծում ենք, լիովին կախված չեն անձի կամքից կամ նախասիրություններից: Կան որոշակի օբյեկտիվ հանգամանքներ, որոնց անտեսումը ուղղակի անհնարին է ազատազրկման վայրում հայտնված անձանց համար:

Այսինքն՝ «ձանձրույթից» չէ անձը դիմում ցավոտև վտանգավոր այդ փորձությանը: Իրական պատճառները ավելի խորն են: Ազատազրկման մեջ հայտնված դատապարտյալները չեն կարող չենթարկվել բանտային ենթամշակույթի սովորույթներին, չյուրացնել դրա արժեքները: Իհարկե չի կարելի հերքել նաև այն

---

[78] Տե՛ս Тард Г. Законы подражания. СПб, 1982, էջ »ñ 50-52:

[79] Ø»çµ»ñáõÙÁ Ï³ï³ñí³Í ¿ Áëï՝ Анисимков В. М. Россия в зеркале уголовных традиции тюрьмы. СПб, 2003, էջ 90:

փաստը, որ մարդուն բնությունից տրված է իրենից ավելի ուժեղին նմանակելու ձգտումը, ինչն ազատազրկման վայրում առավել ցայտուն է դրսևորվում: Կարծում ենք, նաև սա է դատապարտյալների շրջանում զանգվածաբար դաջվածքներ անելու պատճառը:

Այսպիսով, ազատազրկման վայրերում դաջվածքները կատարում են մի շարք գործառույթներ, այդ թվում՝ ճանաչողական (հնարավորություն են տալիս որոշելու դատապարտյալի կարգավիճակը), ազդանշանային (պիտակավորում է անձին, ամրապնդում նրա՝ «բարոյալքված» կամ «քրեական հեղինակության» կարգավիճակը) և վկայում անձի արժեքային կողմնորոշումների մասին:

Այստեղից հետևում է, որ դաջվածքի «պաշտամունքը» կարելի է հաղթահարել այն ծնող պատճառների դեմ պայքարելով միայն: Իսկ դրանց իմաստային նշանակության իմացությունը պետք է կիրառել օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելիս, կրիմինալիստիկական պրակտիկայում, ինչպես նաև դատապարտյալների շրջանում դաջվածքներ անելը կանխարգելելու ուղղությամբ տարվող դաստիարակչական աշխատանքների ընթացքում[80]:

Պատիժ կրող անձանց կենցաղի անբաժան մասն է թղթախաղը, ինչի մասին են վկայում ՀՀ ՔԿՀ-ներում դատապարտյալների շրջանում անցկացված հարցման արդյունքները:

Մ. Ն. Գերնետը, Ս. Վ. Մաքսիմովը, Դ. Ս. Լիխաչյովը իրենց աշխատություններում մանրամասն նկարագրում են մինչ այժմ պահպանված՝ թղթախաղին վերաբերող սովորույթ-օրենքները[81]: Այն շատ հաճախ կարող է ճակատագրական նշանակություն ունենալ անձի համար: Խաղի ելքով կարող է պայմանավորվել անձի կարգավիճակը բանտային աստիճանակարգում, նրա նյութական դրությունը, կյանքը և արժանապատվությունը: Խաղադրույքի դերում են փողը, հագուստը, սննդամթերքը և այլն, ընդ որում՝ և՛ սեփական, և՛ այլոց: Նախորդ դարի 40-50-ական

[80] Տե՛ս Гернет М. Н. Татуировки в местах заключения г. Москвы. Преступный мир Москвы. М., 1924, էջ 218:
[81] Տե՛ս Анисимков В. М. Россия в зеркале уголовных традиции тюрьмы. СПб, 2003, էջ 92:

թվականներին սովորական երևույթ էր մարդու կյանքի վրա խաղադրույք կատարելը: Դա տեղի էր ունենում հիմնականում այն ժամանակ, երբ անհաջող խաղի ընթացքում անձը կորցնում էր իր ողջ ունեցվածքը, բայց, այնուամենայնիվ, ցանկանում էր շարունակել խաղը: Անձը առաջարկում կամ ընդունում էր պայմանը՝ պարտվելու դեպքում սպանել որևէ կոնկրետ անձի: Թղթախաղում պարտվածը շատ հաճախ պարտավորվում է կատարել որոշակի հանցագործություն կամ իր վրա վերցնել ուրիշի մեղքը, ինչպես նաև պարտքը մարել հարազատի սեռական ազատության նկատմամբ ոտնձգությամբ և այլն: Վերջին իրավիճակը առավել քան պատկերավոր ներկայացված է Դ. Կեսայանցի «Անիծվածները» գեղարվեստական ֆիլմում:

Թղթախաղի հետևանքով գոյացած պարտքը չմարելը հանցավոր ավանդույթների և սովորույթների էական խախտումներից է համարվում, այն մեծագույն խայտառակություն է դատապարտյալի համար. վերջինս ենթարկվում է ստորացուցիչ բռնության, ապա՝ համալրում «բարոյալքվածների» շարքերը:

Այսպիսով, թղթախաղը ՔԿՀ-ներում կոնֆլիկտային իրավիճակների առաջացման հիմնական պատճառներից է: Այն ենթադրում է դատապարտյալի անձի նկատմամբ ֆիզիկական, համասեռ և հոգեկան բռնության գործադրում: Կարծում ենք, որ դրա դեմ պայքարը և կանխարգելումը կնպաստեն ՔԿՀ-ներում տիրող մթնոլորտի առողջացմանը:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է ասել, որ բանտային ժարգոնը, դաջվածքները և թղթախաղը բանտային ենթամշակույթի ինքնուրույն տարրերն են: Դրանց պահպանումը և կատարելագործումը պայմանավորվում է դատապարտյալների արժեքային կողմորոշումներով, ինչպես նաև պենիտենցիար հիմնարկների գործունեության յուրահատուկ պայմաններով:

Հանցավոր ենթամշակույթի վտանգն այն է, որ ժառանգաբար սերունդներին են փոխանցվում հանցածին սովորույթներ, բարքեր, որոնք նպաստում են նորանոր հանցագործությունների կատարմանը:

Կարծում ենք՝ հանցավոր ենթամշակույթի բացասական ազդեցության չեզոքացման հիմնական միջոց կարող է լինել

քրեակատարողական օրենսդրության հետագա հումանիզացումը: Դրան կարելի է հասնել հետևյալ միջոցներով՝ 1) պատժի կրման պայմանների խելամիտ մեղմացում և անհիմն ու ոչնչով չարդարացված արգելքների և սահմանափակումների վերացում, քանի որ վերջիններս դատապարտյալների շրջանում առաջացնում են բողոքի տրամադրություն, կանոնակարգին չենթարկվելու բուռն ցանկություն, ստիպում նրանց արդարություն փնտրելու ազատազրկման վայրերում գործող ոչ ձևական կառույցներում, հանցավոր աշխարհի օրենքներում, 2) արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապերը պահպանելուն ուղղված միջոցառումների իրականացում, 3) դատապարտյալների հստակ դասակարգում՝ ըստ յուրաքանչյուրի անձնային հատկանիշների և իհարկե՝ կատարված հանցագործության շարժառիթների, 4) բացասականորեն տրամադրված դատապարտյալների խմբավորումների խարխլում՝ առաջնորդներին «գահընկեց» անելու և բանտային աստիճանակարգը վերացնելու միջոցով: Միաժամանակ պետք է սատարել դրական վարքագիծ դրսևորող դատապարտյալների խմբավորումներին՝ հետագայում նրանց ընդհանուր շահին ծառայեցնելու նպատակով, 5) դաստիարակչական բնույթի աշխատանքների կատարելագործում ինչպես ընդհանուր, այնպես էլ անհատական մակարդակում՝ օգտագործելով հոգեբանական, բժշկական տարբեր հնարքներ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է դատապարտյալների մեջ ձևավորել միմյանց հետ շփվելու նոր մշակույթ: 6) դատապարտյալների նկատմամբ վարչակազմի ներկայացուցիչների բացասական վերաբերմունքի փոփոխություն՝ սովորեցնել հարգել դատապարտյալների իրավունքները: Նույնպիսի վերաբերմունք պետք է ձևավորել դատապարտյալների մեջ՝ վարչակազմի ներկայացուցիչների նկատմամբ, ինչը հնարավոր է միայն վերջիններիս կողմից դատապարտյալների անձնական խնդիրները լուծելու փորձի, նրանց իրական օգնություն ցույց տալու, այլ դատապարտյալների ոտնձգություններից պաշտպանելու դեպքում:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք հավաստել, որ հանցավոր ենթամշակույթը խարխլում է հասարակության իրավական և բարոյական հիմքերը, էապես խոչընդոտում իրավապահ

մարմինների գործունեությանը, հասարակությանը պահում վախի, սարսափի մթնոլորտում:

Ազատազրկման վայրերում տեղի են ունենում անձի դեգրադացում, հանցավորի ստիգմատիզացում: Բռնության գործադրմամբ դատապարտյալները միմյանց վերածում են սոցիալական, հոգեբանական, սեռական առումով յուրահատուկ խմբի:

Սեփական սոցիալական համակարգի ստեղծումը, կարելի է ասել, դատապարտյալների արձագանքն է ազատազրկմանը[82]:

Վ. Շալամովը գրում է. «Ընդհատակյա հանցավոր թագավորությունը մի աշխարհ է, որտեղ շարժառիթները անասնական են, անասնականից է՛լ ավելի վատ, քանի որ ցանկացած գազան կսարսափեր այն արարքներից, որոնք հեշտությամբ կատարում են հանցաշխարհի ներկայացուցիչները»[83]:

Ազատազրկման վայրերում դատապարտյալի սոցիալական կարգավիճակը որոշվում է նրա ֆիզիկական ուժով, ագրեսիվությամբ, նյութական բարեկեցությամբ (դրսից ստացված օգնության հաշվին), հոգեբանական առանձնահատկություններով (կոնֆլիկտներից խուսափելու, միջանձնային հարաբերություններ հաստատելու ունակություն): Այդուհանդերձ, ցանկացած դատապարտյալ ժամանակ առ ժամանակ ենթարկվում է փորձությունների՝ իր դիրքերը բանտային հիերարխիայում ամրապնդելու համար: Դատապարտյալների մեծ մասը լարվածությունը թուլացնելու համար գործածում է թունավոր կամ թմրեցնող նյութեր:

Դատապարտյալների շրջանում սովորաբար բացակայում են փոխադարձ վստահությունը, համերաշխությունը: Շատ քչերն են ազատության մեջ հայտնվելուց հետո փորձում կապ պահպանել դատապարտյալ «ընկերների» հետ:

Դատապարտյալների մի մասը, չհաղթահարելով ազատազրկման դժվարությունները, այս կամ այն պատճառով խախտում է այսպես կոչված «բանտային օրենսգիրքը» և հայտնվում «բարոյալքվածների» շարքերում: Այս պիտակը ուղեկցում է նրանց

[82] Տե՛ս Шнайдер Г. Криминология. М., 1994:
[83] http://royallib.com/read/shalamov_varlam/ocherki_prestupnogo_mira.html#20480:

պատժի կրման ամբողջ ընթացքում, մեկ ՔԿՀ-ից մեկ այլ հիմնարկ, հիվանդանոց տեղափոխվելիս և նույնիսկ ազատության մեջ հայտնվելուց հետո:

Պատահական չէ, որ նրանցից շատերը, գիտակցելով իրենց «անելանելի» վիճակը, փորձում են հաշվեհարդար տեսնել իրենց ճնշողների հետկամ դիմել փախուստի:

Քրեական ենթամշակույթը հակադրվում է հասարակության բարոյահոգեբանական արժեքներին. նրա հիմքում ընկած են շահադիտական անմարդկային դրդումները, արագ հարստանալու ձգտումը, ամենաթողությունը, ինչպես «օտարների», այնպես էլ հասարակության առավել թույլ անդամների նկատմամբ դաժանությունը: Դրանում էական տեղ է տրվում սեռական բնույթի բռնությանը, որի հետևանքները զոհին հետապնդում են հետագա ամբողջ կյանքում: Այլ խոսքով՝ բանտային ենթամշակույթը ծնում է բռնություն, իսկ ազատազրկման վայրերում՝առաջին հերթին սեռական բնույթի բռնություն: Հետևաբար, այն պենիտենցիար հանցավորության հիմնական դետերմինանտն է:

Ուստի անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել քրեական ենթամշակույթի ազդեցությունը չեզոքացնելու կամ նվազեցնելու ուղղությամբ: Դրան, ինչպես արդեն նշել ենք, կարող է նպաստել հանցավոր աշխարհի յուրահատկությունների, դատապարտյալների վարքագծի չափանիշների իմացությունը, ինչը թույլ կտա ՔԿՀ-ների վարչակազմին հստակ, ժամանակին և օբյեկտիվորեն վերլուծել ազատազրկման վայրերում տիրող նախահանցածին իրավիճակները, վերահսկել դրանք, ինչպես նաև դրանք կանխելու միջոցներ ձեռնարկել:

ԳԼՈՒԽ 3.
ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՀԱՆՑԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՏԻՄԸ

§ 1 Դատապարտյալների անձնային առանձնահատկությունների դերը պենիտենցիար հանցագործությունների կանխարգելման գործում

Դատապարտյալի անձի ուսումնասիրության անհրաժեշտությունը ներկայումս առավել քան արդիական է, քանի որ քրեական և քրեակատարողական օրենսդրությունը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկան միտված են լինելու առավել մարդասիրական: Մասնավորապես, նման ուսումնասիրությունների նպատակն է նպաստելու ազատազրկման հետ կապված պատիժների առավել քիչ կիրառմանը, յուրաքանչյուրի նկատմամբ պատժի նշանակման խիստանհատականացված մոտեցմանը և այլն:

Ժամանակին Յու. Յու. Բեխտերևը նշում էր, որ անձի ուսումնասիրությունը պետք է նախորդի վերջինիս նկատմամբ պենիտենցիար հարկադրանքի կիրառմանը և ապահովի հետևյալ խնդիրների լուծումը.

1. դատապարտյալների ճիշտ դասակարգում միևնույն քրեակատարողական հիմնարկում,
2. դատապարտյալների յուրաքանչյուր խմբի համար պատժի կրման համապատասխան կանոնակարգի սահմանում,
3. աշխատանքային գործընթացի խելամիտկազմակերպում,
4. պենիտենցիար ներգործության արդյունքների օբյեկտիվ գնահատում,
5. պենիտենցիար հիմնարկների աշխատակիցների որակավորման բարձրացում[84]:

Թվարկված դրույթները, կարծում ենք, արդիական են նաև այսօր. դրանք կարիք ունեն հետագա մշակման և կիրառման: Հետևապես, դատապարտյալի անձի ուսումնասիրությունը անհրաժեշտ է դիտարկել որպես պատժողական և դաստիարակչական ներգործության անհատականացման, դրանց արդյունավետության բարձրացման

[84]Տե՛ս Бехтерев Ю.Ю. Изучение личности заключенного. М., 1928, էջեր 17-18:

կարևորագույն նախադրյալ:

Հանցավոր վարքագծի դրսևորման իրական պատճառները բացահայտելու համար շատ կարևոր է պարզել անձի արարքների իրական շարժառիթները: Այս տեսակետից շատ կարևոր է, որ հանցագործության շարժառիթը չնույնացվի անձի կողմից իր արարքի կատարման պատճառներին տրված բացատրության հետ: Նման պարագայում շարժառիթը սահմանափակ կընկալվի[85]:

Շարժառիթները բացահայտելու համար պետք է հաշվի առնել ոչ միայն արարքի կատարմանը դրդող՝ անձի պահանջմունքները, այլև այն մղիչ ուժերը, որոնք ուղղորդում են անձին, այսինքն՝ իրական դրդապատճառները, արարքի ներքին դետերմինանտները:

Անձը որպես իր արարքի կատարման գիտակցված դրդապատճառ սովորաբար նշում է արտաքին, այսպես ասած՝ մակերեսային շարժառիթները: Եվ այն, ինչը հանցագործն ընկալում է որպես իր արարքի կատարման դրդապատճառ, շատ հաճախ հեռու է իրական շարժառիթ լինելուց[86]:

Ազատազրկման վայրում անձը հայտնվում է մինչ այդ իր պատկերացումներից և ընկալումներից լիովին տարբեր և օտար միջավայրում: Բնականաբար ստիպված է լինում հարմարվելու այդ պայմաններին, կրելու անձնային փոփոխություններ՝ ձեռք բերելով նոր որակներ: Պատժի կրման նպատակն անձի ուղղումն է, սակայն իրականում միջավայրի ազդեցությամբ պայմանավորված՝ տեղի է ունենում ճիշտհակառակը[87]:

Պատժի նպատակների իրականացման, այն է՝ դատապարտյալների ուղղման, նոր հանցագործությունների կանխման գրավականը պատիժը կատարող հիմնարկի արդյունավետ գործունեությունն է: Այն առաջին հերթին ենթադրում է դատապարտյալների ճիշտ բաշխում ըստ քրեակատարողական հիմնարկների, այնպես, որ բացառվի կայուն հակասոցիալական ուղղվածություն ունեցող դատապարտյալների ազդեցությունը այլոց վրա[88]: Դաստիարակչական

[85] Տե՛ս http://asmolovpsy.ru/ru/books/90:
[86] Տե՛ս http://www.syntone.ru/library/books/content/5192.html?current_book_page=all
[87] Տե՛ս Г. Ф. Хохряков, Г. С. Саркисов. Преступления осужденных: причины и предупреждение. Ереван, 1988, էջ 67:
[88] Տե՛ս Н. А. Стручков, В. Н. Бризгалов. Классификация осужденных к лишению свободы и определение им вида исправительно-трудовой колонии. Киев, 1987, էջ 3:

ներգործության ազդեցության արդյունավետության բարձրացումը պահանջում է դատապարտյալների տարբեր խմբերի նկատմամբ դրանց տարբերակված կիրառում: Հետևաբար, խիստ անհրաժեշտ է յուրաքանչյուր դատապարտյալի անձի «բացահայտումը» և ընդգրկումը որոշակի խմբում: Այն թույլ կտա, առաջին հերթին, վեր հանելու հանցագործների առանձին խմբերի յուրահատկությունները, և ըստ այդմ ցուցաբերելու տարբերակված մոտեցում պատժիչ-դաստիարակչական միջոցների կիրառման հարցում:

Դատապարտյալների դասակարգումն ըստ որոշակի խմբերի պետք է վերջիններիս ուղղման նպատակ հետապնդի՝ ունենալով խիստ գործնական նշանակություն: Հաշվի առնելով ազատազրկման վայրերի առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է կազմել դատապարտյալների սոցիալ–հոգեբանական տիպաբանություն՝ հիմք ընդունելով առաջին հերթին անձի՝ կրիմինալոգիական տեսանկյունից էական, հատկապես՝ հանցանքի կատարմանը նպաստող որակները: Ինչպես գիտենք, ուղղման էությունն այն է, որ նպատակամղված դաստիարակչական ներգործության ընթացքում վերացվեն, փոփոխվեն կամ չեզոքացվեն հանցանքի կատարմանը նպաստող անձնային առանձնահատկությունները: Հետևապես, դատապարտյալների տիպաբանության մշակումը պետք է դիտել որպես ուղղման խնդիրների լուծման միջոց[89]:

Հանցավոր վարքագծի շարժառիթների բացահայտումը թույլ կտա կանխորոշելու դատապարտյալների նկատմամբ կանխարգելիչ և ուղղիչ ներգործության ուղիները: Անխոս, եթե տարվող անհատական աշխատանքների ընթացքում չբացահայտվեն և չչեզոքացվեն սուբյեկտիվ այն գործոնները, որոնք դրդել կամ կարող են դրդել կոկրետ անձին կոնկրետ հանցանքի կատարման, ապա ռեցիդիվի հավանականությունը խիստ կմեծանա: Կարծում ենք, քրեակատարողական հիմնարկներում հանցավոր արարքների կատարման շարժառիթների ուսումնասիրությունն ունի հիմնարար նշանակություն անհատական կանխարգելիչ գործեության կազմակերպման հարցում:

[89] http://legal_psychology.academic.ru/

Հարկ է նշել նաև, որ եթե հանցանքի շարժառիթների բացահայտումը կարող է օգնել անհատական դաստիարակչական գործեության իրականացմանը, ապա անձի բնավորության և խառնվածքի ուսումնասիրությունը թույլ կտա մշակել դատարապտյալներից յուրաքանչյուրի նկատմամբ կիրառվող դաստիարակչական ներգործության ավելի արդյունավետ հնարքներ:

Այս առումով հեռանկարային կարող է լինել դատապարտյալների դասակարգումը ըստ բնավորության, խառնվածքի և վարքագծային առանձնահատկությունների:

Իհարկե, վերը նշված գործեության իրականացման արդյունավետությունը, առաջին հերթին, պայմանավորված է հատուկ մասնագիտական պատրաստվածություն անցած կադրերի առկայությամբ, և, ինչու չէ, քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ծառայության ակտիվացմամբ և աշխատակիցների մասնագիտական որակների բարձրացմամբ: Անհրաժեշտ է նախատեսել դատապարտյալների վերասոցիալականացմանն ուղղված անհատական և խմբակային ծրագրերի մշակում և իրագործում, նշված հիմնարկներում տիրող մթնոլորտի «առողջացում», անձնակազմի որակավորման բարձրացում: ՔԿՀ-ի հոգեբանական ծառայության մեջ պետք է ընդգրկվեն մասնագետ հոգեբաններ: Ենթադրվում է, որ նշված ծառայության հիմնական գործառույթները պետք է լինեն՝ 1. հոգեախտորոշիչ՝ ուղղված դատապարտյալների անհատական և խմբակային բնութագրերի խոր ուսումնասիությանը, 2. կանխատեսման՝ ուղղված դատապարտյալների կողմից հակահիրավական արարքների կատարման հնարավորության գնահատմանը, 3. կանխարգելիչ՝ ուղղված դատապարտյալների վարքագծի վրա նպատակաուղղված ներգործեության իրականացմանը, 4. խորհրդատվական՝ ուղղված դատապարտյալներին անհատական հոգեբանական օգնություն տրամադրելուն:

Ինչպես նշվեց, պատժի նպատակների իրականացման համար մեծ նշանակություն ունի անձի կողմից կոնկրետ հանցանքի կատարմանը նպաստող սուբյեկտիվ գործոնների բացահայտումը: Դրանք պետք է դառնան անհատական կանխարգելիչ ներգործության օբյեկտ: Դատապարտյալների ուղղմանն ուղղված աշխատանքները

պետք է հիմնվեն անձնային առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրության, և որ ամենակարևորն է՝ հանցավոր գործեության շարժառիթների բացահայտման և դատապարտյալների դասակարգման վրա: Անհրաժեշտ է բացահայտել յուրաքանչյուր դատապարտյալի բնավորության բացասական և դրական կողմերը, որոնց հիման վրա կարելի կլինի ճիշտ կազմակերպել ուղղման գործընթացը: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ անձի ուսումնասիրության ընթացքում կարիք չկա ներխուժել նրա անձնական, հատկապես՝ ինտիմ կյանք, եթե, իհարկե, դա չի կարող օգնել հանցագործության բացահայտմանը կամ նպաստել անձի ուղղմանը[90]:

Դատապարտյալի անձի ուսումնասիրության կարևորագույն ձևերից են զրույցը, դիտարկումը, ինչպես նաև տարբեր աղբյուրներից ստացված տվյալների վերլուծությունը, անձնական գործի ուսումնասիրությունը:

Հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը պետք է սկսել նրա անձնական գործի մանրակրկիտ հետազոտությունից: Հատուկ ուշադրության է արժանի հանցագործության մեջ նրա ունեցած դերը, հանցանքների կատարման եղանակը, դատավճռում նշված շարժառիթները[91]: Այնուհետև կարելի է անցնել զրույցի և անձի ուսումնասիրության այլ ձևերի: Իհարկե, չկա հարցերի հստակ ցանկ, որով կարելի կլինի բացահայտել յուրաքանչյուրի անձնային առանձնահատկությունները, այնուամենայնիվ կարելի է մշակել այնպիսին, որի կիրառությունը կօգնի ընդհանուր պատկերացում կազմել նրանցից յուրաքնչյուրի վերաբերյալ: Օրինակ, հարցերը կարող են ուղղված լինել պարզելու ընտանիքի անդամների հետ հարաբերությունները, անձի արժեքային համակարգը, կյանքում ունեցած նպատակները, սովորությունները, ընկերների հետ փոխհարաբերությունները, վարած կենսակերպը, այլ դատապարտյալների հետ փոխհարաբերությունները, կատարված հանցանքի և նշանակված պատժի նկատմամբ վերաբերմունքը, ապագայի վերաբերյալ պլանները և այլն: Ընդ որում, կարևոր է

[90] Տե՛ս Հ. Մ. Հաչիկյան. Лишение свободы: проблемы исполнения наказания в отношении впервые осужденных. Ереван, 2010, էջ 17:
[91] Տե՛ս http://psyera.ru/5346/izuchenie-lichnosti-osuzhdennyh

ամրագրել ոչ միայն պատասխանը, այլև հարցազրույցի ընթացքում անձի մեջ նկատելի հուզական փոփոխությունները:

Անձնային առանձնահատկությունների բացահայտման համար խիստ կարևոր է կոնկրետ իրավիճակում վերջինիս վարքագծի ուսումնասիրությունը: Այն պետք է վերաբերի ինչպես կենցաղին, այնպես էլ կոլեկտիվում անձի փոխհարաբերություններին, կոնֆլիկտային իրավիճակներում վերջինիս դրսևորած վարքագծին: Նույնիսկ շատ մակերեսային դիտարկման դեպքում կարելի է որոշակի պատկերացում կազմել անձի խառնվածքի վերաբերյալ: Դատապարտյալի վերաբերյալ տարբեր աղբյուրներից և միջոցներով ստացված բոլոր տվյալների հիման վրա հնարավոր կլինի կազմել նրա հոգեբանական նկարագիրը, առանձնացնել բնավորության ցայտուն գծերը և ըստ այդմ՝ ընտրել ներգործության առավել օպտիմալ տարբերակ[92]:

Քանի որ ՔԿՀ-ում տարվող պատժիչ–դաստիարակչական գործընթացը պետք է ուղղված լինի բարոյահոգեբանականական թերությունների շտկմանը, դատապարտյալը պետք է դիտվի ոչ միայն որպես հատուկ իրավական կարգավիճակ ունեցող անձ, այլև՝ նշված թերությունների կրող՝ մանավանդ, որ ազատազրկման վայրում կարող է տեղի ունենալ անձի բարոյական նկարագրի խեղաթյուրում[93]:

Դատապարտյալի անձի բարոյահոգեբանական բնութագիրը կազմելու համար մեծ նշանակություն ունի այն, թե ինչպիսին է վերջինիս վերաբերմունքը իր կատարածի և դրա համար նշանակված պատժի նկատմամբ: Կարծում ենք, պատժի նկատմամբ դատապարտյալի հոգեբանական վերաբերմունքը իր կարևորությամբ կարելի է համարել ուղղման առաջնային չափանիշներից մեկը:

Պատժի արդյունավետության բարձրացման ուղիներից է դատապարտյալի մեջ դրա նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորումը: Դատապարտյալը, որը չի զղջում կատարվածի համար, իսկ նշանակված պատիժը համարում է անարդարացի, ուղղակիորեն ենթակա չէ ուղղման, քանի որ չի տեսնում դրա անհրաժեշտությունը, իսկ պատիժը ընկալում է զուտ որպես

[92] Տե՛ս http://psyera.ru/5346/izuchenie-lichnosti-osuzhdennyh
[93] Տե՛ս http://www.pravo.vuzlib.su/book_z1477_page_10.html

հարկադրանք:

Դատապարտյալի անձի բարոյական խեղաթյուրման հիմնական չափանիշներն են իր արարքի նկատմամբ սխալ վերաբերմունքը, իր անձի գերագնահատումը և նշանակված պատիժը ոչ արդարացի համարելը: Սավկայում է խեղված հոգեբանության մասին, քանի որ նույնիսկ հանցանքի կատարման փաստը և դրան հետևած պատիժը ի զորու չեն խղճի խայթ առաջացնելու կամ հանգեցնելու սեփական անձի ու վարքագծի վերագնահատման: Անխոս, նման դիրքորոշումը խոչընդոտում է ուղղման գործընթացին, հետևապես անհրաժեշտ է լուրջ աշխատանք տանել այդ դիրքորոշման վերափոխման ուղղությամբ:

Խնդիրն այն է, որ ազատազրկման վայրերում առկա են հոգեբանական և սոցիալական այնպիսի գործոններ, որոնք ուղղակիորեն նպաստում են դատապարտյալների հոգեբանական խեղմանը:

Պատժի կրման ընթացքում անձի բարոյահոգեբանական բացասական ուղղվածությունն ամրապնդող գործոններից է դատապարտյալների շրջանում բավականաչափ մեծ տարածում ունեցող՝ հոգեբանական պաշտպանության ֆենոմենը[94]: Վերջինս դրսևորվում է սեփական վարքագիծն արդարացնելու համար խելամիտ պատճառաբանություններ փնտրելով, իր մեղքը ժխտելով, իր գործողություններով այլոց վնաս պատճառելը ժխտելով, իրեն պատասխանատվության ենթարկած անձանց դատապարտելով և այլն: Իրեն բարոյապես արդարացնելու հանցագործի փորձերը, իհարկե, խոչընդոտում են վերասոցիալականացմանը, սակայն, մյուս կողմից, խոսում են այն մասին, որ անձը, թեև ոչ բացահայտ, այնուամենայնիվ, ամաչում է իր արարքի համար[95]:

Վերասոցիալականացման էական խոչընդոտ է նաև բանտային ենթամշակույթը, որը բացառում է կատարված հանցագործության մեջ սեփական մեղքի գիտակցումը, ժխտում է անձի նկատմամբ ուղղիչ ներգործության միջոցների կիրառումը: Բանտային ենթամշակույթի առաջացման և գոյության օրինաչափությունների

[94]Տե՛ս Ю.М. Антонян. Преступление и покаяние. ОНС. Общество, науки и современность. 1991, N 6, էջ 51:
[95] http://www.syntone-spb.ru/

իմացությունը թույլ կտապայքարելու նշված բացասական սոցիալ-հոգեբանական երևույթի դեմ: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի դատապարտյալների ֆիզիկական մեկուսացումը չվերածվի սոցիալական մեկուսացման: Որքան ամուր լինի դատապարտյալների կապը արտաքին աշխարհի, հոգևոր կյանքի հետ, այնքան կթուլանա բանտային ենթամշակույթի ազդեցությունը վերջիններիս վարքագծի վրա:

Դատապարտյալների հետ տարված անհատական զրույցներից պարզ է դառնում, որ, դժբախտաբար, նրանցից քչերն են հակված անկեղծ զղջալու կատարածի համար: Ընդ որում, որքան էլ զարմանալի թվա, չեն զղջում ոչ միայն գողերը, կաշառակերները, խարդախները, այլև՝ սպանություն, սեռական հանցագործություն, ավազակային հարձակում կատարած դատապարտյալները: Վերջիններիս թվին են դասվում նաև անձինք, ովքեր նման հանցագործություններ կատարել են բազմիցս, կատարել են առանձնակի դաժանությամբ կամ՝ իրենց իսկ հարազատի դեմ:

Հոգեբանության տեսանկյունից նման վերաբերմունքը հասկանալի է. դատապարտյալներից շատերը, պատմելով իրենց կատարած հանցանքների մասին, փորձում են հնարավորինս նվազեցնել իրենց մեղքի բաժինը: Հետաքրքրականն այն է, որ բռնի հանցագործություններ կատարած դատապարտյալները հստակ գիտակցում են, թե ինչի համար են իրենք պատժված, վերացականորեն համոզված են, որ այդպիսի արարքների համար անպայման պատժվում են: Սկզբունքորեն նրանք դեմ չեն նաև նրան, որ իրենց ևս պատժեն, քանի որ դա արդարացի կլինի, սակայն գլխավոր հարցն այն է՝ ինչպե՞ս[96]: Այսպես, դատապարտյալների շրջանում արված մեր այն հարցմանը, թե համարում եք արդյոք ձեր նկատմամբ նշանակված պատիժը արդարացի, հարցվածների միայն 37%-ը տվեց դրական պատասխան, իսկ բացարձակ մեծամասնությունը /73%-ը/ պատասխանեց, որ նշանակված պատիժը չափազանց խիստ է, որ կարելի էր բավարարվել նշանակված պատժի կեսով, որ իրենց վաղուց արդեն կարելի էր ազատարձակել և այլն:

Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրենց արարքի

[96]Տե՛ս Антонян Ю.М.. Преступление и покаяние. ОНС. Общество, науки и современность. 1991, N 6, էջ 44:

համար զղջացող ու իրենց անխնա քննադատող հանցագործները հանդիպում են միայն գեղարվեստական գրականության մեջ՝ լինելով հեղինակի վառ երևակայության արդյունք: Այսպիսին է իրականությունը և պետք է ընդունել այն՝ զերծ մնալով հանրային բարձր վտանգավորությամբ օժտված անձանց նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու անհիմն կոչերից:

Իսկ ինչ վերաբերվում է շահադիտական շարժառիթներով հանցագործություններ կատարած դատապարտյալներին, պատկերը լիովին այլ է. նրանցից շատերը միևնույն է չեն հասկանում, թե ինչու են հայտնվել ճաղերից այն կողմ: Բնականաբար, բարոյականության տեսանկյունից ինքնաքննադատության մասին խոսք անգամ չկա: Վերջիններս, կարելի է ասել, զղջում են միայն նրա համար, որ գործել են անզգույշ, ոչ շրջահայաց, շրջապատված են եղել դավաճան ընկերներով, բռնվել են իրավապահ մարմինների կողմից, ստացել են չափազանց խիստ պատիժ և այլն[97]:

Նման վերաբերմունքը պայմանավորված է բարոյականության ընդհանուր անկմամբ, մարդկանց արժեհամակարգերի փոփոխմամբ, օրենքի նկատմամբ անվստահությամբ, մարդկանց նյութական վիճակի կտրուկ վատթարացմամբ և այլն: Այնուամենայնիվ, որքան էլ որ նշվածները էական նշանակություն ունենան, սխալ կլինի հանցագործի վարքագիծը բացատրել միայն թվարկված գործոնների ազդեցությամբ: Չէ որ ինքը՝ հանցագործը, պետք է զղջա իր կատարածի համար՝ անկախ նրանից, թե սոցիալ-տնտեսական ինչպիսի խնդիրներ են տվյալ պահին ծառացած հասարակության և իր ընտանիքի առջև[98]:

Ավելին, հանցագործի վերաբերմունքն իր կատարածի նկատմամբ ուղղակիորեն կապված չէ հասարակության նյութական բարեկեցության հետ: Ժամանակակից եվրոպական շատ երկրներում ևս եղել են և կան հանրության համար մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործներ, ովքեր չեն զղջում իրենց կատարածի համար: Հարց է ծագում՝ ինչով բացատրել տվյալ երևույթը: Նախ՝

---

[97] Տե՛ս Антонян Ю.М. Преступление и покаяние. ОНС. Общество, науки и современность. 1991, N 6, էջ 45:

[98] Տե՛ս Антонян Ю.М. Преступление и покаяние. ОНС. Общество, науки и современность. 1991, N 6, էջ 48:

պետք է նշել, որ բռնվելուց հետո հանցագործը անմիջապես հայտնվում է այսպես ասած «ընդդիմության» շարքերում և ամեն կողմից սպասում է հարվածի, այսինքն՝ իր վիճակի էական վատթարացման, խիստ պատժի՝ ընդհուպ ցմահ ազատազրկման: Չի ակնկալում ոչ ոքի աջակցությունը, պատրաստակամությունը՝ կիսելու իր մտահոգությունները, վախերը: Հետևապես, իր կենսական ամբողջ ներուժը ուղղում է սեփական ինքնապաշտպանությանը: Նրանցից շատերի համար ավելի դժվար է անցնում ազատազրկման սկզբնական շրջանը: ՔԿՀ-ում տիրող մթնոլորտը, խիստ սահմանափակումները, կամքի և ցանկությունների ճնշումը, այլ դատապարտյալների վարքագիծը հոգեբանորեն ընկճում են անձին: Նման պայմաններում առաջնահերթ խնդիր է դառնում սեփական շահերի պաշտպանությունը, բարոյական նորմերը հետզհետե զիջում են իրենց դիրքերը, իսկ ինքնաքննադատությունը, եթե իհարկե այդպիսին երբևէ եղել է, ընդհանրապես վերանում է: Այդպիսով, անձը ընտրում է վարքագծի որոշակի տեսակ՝ ամբողջովին ուղղված սեփական անվտանգության ապահովմանը[99]:

Պետք է նշել նաև, որ կատարված հանցագործության, մեղքի, պատասխանատվության մասին զրույցներ ազատազրկման վայրերում գրեթե չեն տարվում: Խոսքը վերաբերում է ոչ միայն դատապարտյալներին, այլև՝ վարչակազմի աշխատակիցներին: Բանն այն է, որ վերջիններս չունեն մասնագիտական պատրաստվածություն, ունակ չեն թափանցելու դատապարտյալի ներաշխարհ, հասկանալու նրա մտահոգությունները, ներշնչելու վստահություն, ցավակցելու և զղջալու ու ապաշխարհելու միջոցով մղելու ինքնամաքրման:

Զղջման զգացումը օտար է ազատազրկման վայրում պատիժ կրող հանցագործին, ավելին, նման խնդիր նրանց առջև նույնիսկ դրված չէ: Այդուհանդերձ, այն խիստ կարևոր է ռեցիդիվի կանխման և ընդհանրապես անձին հոգևոր արժեքներով «վարակելու» համար: Զղջումը ոչ միայն սեփական սխալների և մոլորությունների

[99] Տե՛ս Антонян Ю.М.. Преступление и покаяние. ОНС. Общество, науки и современность. 1991, N 6, էջ 49:

ընդունում է, այլև մարդկային նոր որակների ձեռքբերումը[100]:

Ապաշխարհումը և զղջումը կարող են դառնալ դատապարտյալների շրջանում լարվածության թուլացման միջոց՝ հանգեցնելով ՔՀ-ում կատարվող իրավախախտումների նվազմանը և կանոնակարգի ամրապնդմանը:

Զղջումը՝ որպես բարոյա-հոգեբանական երևույթ, բացառիկ նշանակություն ունի դատապարտյալի ուղղման գործում, քանի որ սերտ կապված է ինքնաքննադատման, ինքնախարանման հետ: Նշված երևույթի կարգավորիչ, ուղղիչ դերը այն է, որ ամոթը՝ որպես զղջման տարր, իրենից ներկայացնում է մարդու ոչ հստակ արտահայտված զայրույթը իր իսկ անձի նկատմամբ[101]: Ամոթի և խղճի խայթի զգացողության միջոցով հասարակությունը ներազդում է անձի վրա:

Խղճի խայթը, զղջումը՝ բացասական հույզերով, խոր հիասթափությամբ, հոգեկան տառապանքներով արտահայտվող անձի վերաբերմունքն է իր կատարածի նկատմամբ: Խղճի խայթն իրական է, եթե անձը խարանում է ինքն իրեն, ցավում է անցյալում կատարածի համար: Իսկ ինչպես դատապարտյալի մեջ արթնացնել խիղճը: Իսկզբանե հարկ ենք համարում նշել, որ բացասաբար ենք վերաբերվում այն պնդմանը, թե որոշ մարդկանց մոտ խիղճը իսպառ բացակայում է: Անխոս, այն ունի ցանկացած մեղսունակ անձ: Խնդիրը միայն նրանում է, որ այն, որոշակի հանգամանքների բերումով, արգելափակվել է դեռևս մինչ հանցանքի կատարումը, իսկ ահաազատազրկման պայմաններում ոչ միայն չի վերացել, այլև՝ հակառակը՝ ամրապնդվել է:

Ուստի, անհրաժեշտ է ուղղման գործընթացը կազմակերպել այնպես, որ անհատական դաստիարակչական ներգործության օգնությամբ հետզհետե հաղթահարվի այդ պատնեշը: Անչափ կարևոր է օգնել դատապարտյալին ճանաչելու ինքն իրեն, հետաքրքրություն առաջացնել իր իսկ անձի նկատմամբ: Դա կօգնի ստեղծել որոշակի նախադրյալներ հանցագործի մեջ ճիշտ ինքնագնահատական ձևավորելու հարցում, ինչպես նաև կնպաստի

[100] Տե՛ս Гегель. Соч. Т. 3, էջ 121:
[101] Տե՛ս Соловьев В.С.: Оправдание добра. Нравственная философия. Соч. в 2т: Т.1. М., 1990, էջ 133:

արթնացնելու ինքնաճանաչման և ինքնադաստիարակման պահանջը, ինչն ուղղակիորեն կապված է զղջման հետ: Միևնույն ժամանակ նշենք, որ զղջումը, ամոթի զգացումը և խղճի խայթը չպետք է ենթադրեն անվերջ ինքնախարանում՝ հանգեցնելով հոգեկան տվայտանքների: Զղջումը պետք է ենթադրի մեղքի քավում, այսինքն՝ պատժի կրումը և ուղղումը անձի կողմից պետք է ընկալվեն որպես անհրաժեշտություն: « Հանցագործը պետք է գիտակցի, որ ինքը պատժված է արդարացիորեն և եթե նա գիտակցում է դա, ապա, նույնիսկ պատժից՝ որպես արտաքին հարկադրանքից ազատվելու ցանկության դեպքում, ընդունում է, որ իրեն պատժել են արդարացի, հետևապես համաձայն է նաև պատժի հետ»[102]:

Այսպիսով, եթե դատապարտյալի բոլոր ուժերը ուղղված լինեն միայն իր «ես»-ի պաշտպանությանը, ապա խոսք անգամ չի կարող լինել զղջման, նույնիսկ անկեղծ ինքնաքննադատության մասին: Հետևապես, ցանկալի վիճակի հասնելու համար անհրաժեշտ է առավելագույնս վերացնել ոչնչով չարդարացված՝ դատապարտյալների կենցաղին վերաբերվող իրավական սահմանափակումները, ՔԿՀ-ում ստեղծել ապրելու մարդավայել պայմաններ: Նախ և առաջ խոսքը բանտային ենթամշակույթի ազդեցության թուլացման և կանխման մասին է:

Բանտային ենթամշակույթը արհամարհում և, կարելի է ասել, ստորացուցիչ է համարում դաստիարակչական բնույթի միջոցների կիրառումը: Պենիտենցիար հիմնարկում իրավախախտում կատարելը և տուգանային մեկուսարանում հայտնվելը բարձրացնում է դատապարտյալի հեղինակությունը: Իսկ ահա վարչակազմի հետ համագործակցող և ուղղման ճանապարհը բռնած դատապարտյալները դառնում են ծիծաղի առարկա և ենթարկվում անընդհատ հետապնդումների մյուս դատապարտյալների կողմից:

Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ հանցագործների վերասոցիալականացման գործընթացը պայմանավորված է որոշ գործոնների ազդեցությամբ, դրանք են. մի կողմից՝ հասարակությունը, ընդունված բարոյական նորմերը, ՔԿՀ-ի վարչակազմի գործունեությունը, մյուս կողմից՝ բանտային

[102] Տե՛ս Гегель. Паботы пазных лет.М., 1973, Т. 2, էջ 28:

ենթամշակույթը:

Նշենք նաև, որ ՔԿՀ-ի վարչակազմը առավել հակված է դատապարտյալների վրա ազդեցության իմպերատիվ մեթոդների կիրառման: Այն ենթադրում է խիստ սանկցիաների, դատապարտյալների նկատմամբ խիստ հսկողության, իշխանական լիազորությունների կիրառում: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջիններս հանգեցնում են դատապարտյալների համախմբմանը ընդդեմ «ընդհանուր թշնամու»՝ ՔԿՀ վարչակազմի: Իրավիճակն ավելի է բարդանում, եթե վարչակազմի ներկայացուցիչները դատապարտյալների նկատմամբ օգտագործում են իրենց անսահմանափակ իշխանությունը: Գործունեության նշված ոճը ոչ միայն խոչընդոտում է վարչակազմի և դատապարտյալների համագործակցությանը, այլև՝ նպաստում ոչ ֆորմալ խմբերի ձևավորմանը, բանտային ենթամշակույթի տարածմանը և արմատավորմանը:

Կարծում ենք, դատապարտյալների ուղղման համար առավել արդյունավետ կլինի վարչակազմի նշված գործելաոճը փոխարինել դատապարտյալների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքով: Դա կօգնի վերջիններիս վերասոցիալականացմանը և վարչակազմի նկատմամբ վստահության ամրապնդմանը:

§ 2 Դատապարտյալների վիկտիմայնացման կանխարգելման հիմնախնդիրները քրեակատարողական հիմնարկներում

Հանցավորության և վիկտիմալոգիական[103] գործոնների վերլուծության վերջնական նպատակը հանցավորության կանխարգելիչ միջոցառումների կատարելագործումն է՝ հանցագործության հնարավոր և առկա զոհերի վրա անմիջական ներգործության միջոցով:

Հնարավոր է, որ հանցավորության կանխարգելման ոլորտում մեր անհաջողությունները պայմանավորված են նրանով, որ հարյուրամյակների ընթացքում ամբողջ ուշադրությունը

[103] Վիկտիմալոգիան ուսմունք է հանցագործության զոհի մասին:

սևեռվել է արարքի կամ հանցագործի և ոչ երբեք զոհի վրա[104]:

Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելումը տարբեր սուբյեկտների օրենսդրորեն կարգավորված, նպատակաուղղված գործունեությունն է՝ ուղղված ազատազրկման վայրերում դատապարտյալների վիկտիմիզացման դետերմինանտների հայտնաբերմանը, ուսումնասիրմանը, չեզոքացմանը և վերացմանը: Դատապարտյալների վիկտիմիզացման կանխարգելումը, մի կողմից, հանդես է գալիս որպես կանխարգելիչ գործեության ինքնուրույն տեսակ, իսկ մյուս կողմից՝ ընդհանուր պենիտենցիար հանցավորության կանխարգելման ենթատեսակ: Լինելով ազատազրկման վայրերում հանցավորության կանխարգելման ինքնուրույն տեսակ՝ այն ուղղված է պենիտենցիար հանցավորության դեմ պայքարի նոր եղանակների և միջոցների որոնմանը:

Դրա նպատակն է ազատազրկման վայրերում հանցավոր ոտնձգության պոտենցիալ զոհերի պենիտենցիար վիկտիմիզացման կանխումը, ինչպես նաև ընթացքի մեջ գտնվող վիկտիմիզացիոն գործընթացների ընդհատումը:

Կարծում ենք, նշված նպատակին կարելի է հասնել դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման խնդիրներով պայմանավորված մի շարք փոխհամաձայնեցված միջոցների կիրառման արդյունքում միայն: Եթե նպատակը, ցանկալի արդյունքը պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելումն է, ապալուծումը որոշակի գործողությունների և միջոցառումների ամբողջությունն է, որոնց իրագործումը պետք է նախատեսվի խիստորոշակի ժամանակահատվածում:

Դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման գլխավոր խնդիրներից ենք համարում հետևյալները՝

ա) Հանցավոր ոտնձգություններից անձի պաշտպանության ապահովում, որպեսզի հանցավորության քրեածին ազդեցությունը՝ իր բոլոր դրսևորումներով, լուրջ խոչընդոտներ չստեղծի անձի հիմնական, կենսական կարևոր նշանակություն ունեցող

[104] Տե՛ս, Фаттах А., Виктимология, что это такое и какого ее будущее // Международное криминологическое обозрение: Т.21. N 2-3: Париж, 1967, էջ 51:

իրավունքների իրականացման համար[105]:

բ) Առավել խոցելի օբյեկտների պաշտպանության ապահովում /դատապարտյալների կյանքը և առողջությունը/:

գ) Պենիտենցիար հիմնարկներում դատապարտյալների վիկտիմիզացման կանխարգելմանն ուղղված գործեության արդյունավետ կազմակերպում և իրականացում:

դ) Պենիտենցիար հիմնարկներում առկա հանցավոր դրսևորումների կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ակտիվացում:

ե) Խախտված իրավունքների վերականգնում, հասցված վնասի հատուցում, կրկնակի պենիտենցիար վիկտիմիզացման կանխում:

Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելումը գործնականում կարևոր խնդիր է, որը պետք է դրվի քրեակատարողական համակարգում իրականացվող բարեփոխումների հիմքում: Այս նպատակի իրագործումը պահանջում է կազմակերպական և իրավական մի շարք խնդիրների լուծում՝ կապված կանխարգելիչ գործեություն իրականացնող սուբյեկտների համար ռազմավարության և կոնկրետ ծրագրերի մշակման հետ, ինչպես նաև պատժի կրման այնպիսի պայմանների ստեղծում, որոնք թույլ կտան առավելագույնս բացառել միջավայրի՝ դատապարտյալների շրջանում վիկտիմայնություն և հակահասարակական ուղղվածություն ձևավորող բացասական ազդեցությունը:

Անդրադառնալով պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման կազմակերպչական ապահովման խնդրի ուսումնասիրմանը՝ կարծում ենք, որ ազատազրկման վայրերում զոհերի վերաբերյալ տվյալների բացակայությունը նվազեցնում է պենիտենցիար հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը:

Պրոֆեսոր Դ. Վ. Ռիվմանը ազատազրկման վայրերում զոհին բնութագրող տվյալների հավաքման անհրաժեշտությունը

[105] Տե՛ս, Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я. Криминологическая профилактика: теория, опыт, проблемы: Монография. М.: НОРМА, 2001. էջեր 165-171; Зубков А.И., Филимонов О.В. Актуальные проблемы российской уголовной политики // Проблемы укрепления законности и борьбы с пре- зации ступностью на региональном уровне. Смоленск: Смолен, ф-л юрид. ин-та МВД РФ, 1999. էջեր 116-119:

պայմանավորում է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝

ա/ Վիկտիմիզացման գործընթացը և հանցագործության իրական պատկերը կարելի է վերականգնել զոհի անձի և վարքագծի ուսումնասիրության շնորհիվ. հանցագործը հաճախ խեղաթյուրված կերպով է ներկայացնում կատարվածը, առավել ևս այն դեպքում, երբ զոհն այլևս կենդանի չէ:

բ/ Անձի պենիտենցիար վիկտիմիզացմանը հաճախ նախորդում են իրավիճակներ, որոնք պայմանավորված են զոհի անձի և վարքագծի առանձնահատկություններով: Դրանց անտեսումը կարող է դառնալ հանցագործության իրական պատկերի խեղաթյուրման, հետաքննության ոչ լիարժեք իրականացման և արարքի սխալ որակման պատճառ:

գ/ Զոհի կողմից ստացված տեղեկատվության օբյեկտիվության գնահատումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հայտնի են նրա անձնային առանձնահատկությունները, երևույթն ընկալելու հնարավորությունները, սուբյեկտիվ վերաբերմունքն իրականությանը, հետաքննությանն աջակցելու ցանկությունը կամ դրաբացակայությունը և այլն:

դ/ Զոհերի անձնային և վարքագծային առանձնահատկությունների իմացությունը անհրաժեշտ է նրանց անձնական անվտանգության ապահովման ուղղությամբ հիմնավոր որոշումների ընդունման, ինչպես նաև կրկնակի վիկտիմիզացման կանխարգելման համար:

ե/ Վիկտիմալոգիական բնույթի տվյալները ոչ պակաս կարևոր են, քան հանցագործների վերաբերյալ ունեցած տեղեկատվությունը: Զոհը էական դերակատարում ունի հանցածին իրավիճակի ստեղծման և զարգացման մեխանիզմում, հետևապես, անհրաժեշտ է կատարել կրիմինալոգիական առումով զոհերի դերի վերլուծություն և հաշվի առնել վիկտիմալոգիական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները՝ ինչպես կոնկրետքրեական գործեր, այնպես էլ ընդհանրապես պենիտենցիար հանցավորությունն ուսումնասիրելիս[106]:

Առաջիններից մեկը Ս.Ս. Օստրոումովն է խոսել իրավական

[106] Տե՛ս, Ривман Д.В. Использование виктимологических данных в предупреждении преступлений // Вопросы профилактики преступлений. Л, 1980, էջ 48:

վիճակագրության համակարգում առանձին բաժնի ձևավորման անհրաժեշտության մասին, որի նպատակը հանցագործության զոհի անձի և վարքագծի քանակական բնութագրի վերաբերյալ տվյալներ ստանալն է [107]:

Նման տեսակետ են հայտնել նաև Վ.Ս.Ուստինովը և Ա.Ա. Գլուխովան: Վիկտիմալոգիական վիճակագրությունը պետք է դիտարկել որպես իրավական վիճակագրության մաս, որն ուսումնասիրում է զոհի անձի և վարքագծի քանակական բնութագիրը՝ հանցագործությունների կանխարգելման, կանխման և բացահայտման նպատակով[108]:

Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ Կալանավորվածներին պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների Ներքին կանոնակարգը [109] հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2006թ. N 1543-Ն Որոշումը համալրել «ՔԿՀ-ներում հանցագործության զոհերի մասին տվյալներ» բաժնով, որը հնարավորություն կտա գրանցել տվյալներ զոհերի ժողովրդագրական հատկանիշների, վիկտիմիզացման պատճառ հանդիսացած հանցագործության տեսակի, հասցված վնասի բնույթի և չափի, վնասը հասցնելու պահին զոհի վիճակի վերաբերյալ:

Ազատազրկման վայրերում զոհերի վերաբերյալ նշված նորամուծության ներդրման արդյունքում ստացված ընդհանրացնող տվյալները կօգնեն զոհի միջոցով գտնել հանցագործությունը կատարած դատապարտյալին: Եթե հանցագործները մի շարք դեպքերում ընտրում են իրենց զոհերին ըստ վերջիններիս անձնային և վարքագծային որոշակի հատկանիշների /նրանց ընտրությունը կրում է տիպական բնույթ/, ապա կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ հանցագործները ևս ունեն իրենց բնորոշ, տիպական առանձնահատկությունները. հանցագործի որոնումները սկսվում են սահմանափակ թվով կասկածյալների վերաբերյալ տվայալների

[107] Տե՛ս, Остроумов С.С. Советская судебная статистика. (Часть общая и специальная). М.: МГУ, 1976, էջ 12:
[108] Տե՛ս, Устинов В.С., Глухова А.А. Понятие и значение виктимологической статистики // Вестник Нижегородского гос. ун-та им. Н.И. Лобачевского. Н.Новгород. 1999, էջ 34:
[109] Այսուհետ՝ Ներքին կանոնակարգ:

ուսումնասիրությունից:

Այդպիսով, իրավական վիճակագրության մեջ վիկտիմալոգիական վիճակագրության ներառումը պետք է դառնա պետական քաղաքականության մի մասը՝ ուղղված պենիտենցիար հանցավորության կառուցվածքի, շարժընթացի, մակարդակի, վիճակի նկատմամբ հսկողության իրականացմանը:

ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի հոդված 2-ում օրենսդիրը քրեակատարողական օրենսդրության խնդիրներից է համարում դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, ինչը ենթադրում է դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հնարավորության բացառում:

Նշված խնդրի արդյունավետլուծումը կախված է պենիտենցիար հանցավորության կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգից, որը պետք է ունենա համապատասխան իրավական կարգավորում:

Պենիտենցիար հանցավորության կանխարգելում իրականացնող սուբյեկտների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից ոչ մեկում չկա ցուցում վիկտիմալոգիական ուղղվածության միջոցառումների անցկացման վերաբերյալ: Բացի այդ, այնպիսի վիկտիմալոգիական հասկացություններ, ինչպիսիք են «վիկտիմիզացման կանխարգելում», «դատապարտյալների վիկտիմային վարքագիծ», «վիկտիմայնությամբ աչքի ընկնող դատապարտյալներ» և այլ՝ թեկուզև այլ ձևակերպմամբ, նշված ակտերում չեն հանդիպում:

Հիմնական գերատեսչական նորմատիվ իրավական ակտը, որով որոշվում է քրեակատարողական համակարգի կանխարգելիչ գործունեության կազմակերպման կարգը՝ ՀՀ Արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի՝ «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 44-Ն հրամանն է [110]: Այս ակտում ուղղակիորեն նշված է, որ դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական

[110] Այսուհետ՝ Գործունեության կարգ:

աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունն ուղղված է դատապարտյալների սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը, ախտորոշմանը և կարիքների ձևավորմանը: Այդ բոլոր տվյալների հիման վրա կազմվում է դատապարտյալի ողղման գործընթացի ծրագիր: Այդպիսով, հանցագործության կանխարգելումը, ըստ էության, ուղղված է պոտենցիալ հանցագործ դատապարտյալների ստիգմատիզացմանը, իսկ դրա իրականացման միջոցները հիմնականում կրում են միակողմանի բնույթ՝ անտեսելով զոհի դերը հանցավոր վարքագծի դրսևորման մեխանիզմում: Հետևաբար, դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման նպատակով համալիր և ընդգրկուն միջոցների կիրառման բացակայությունը հանգեցնում է պոտենցիալ զոհերի շահերի և իրավունքների անտեսման:

Ծարադրվածը վկայում է դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելմանն ուղղված գործունեությունը կարգավորող իրավական հիմքի մշակման անհրաժեշտության մասին:

Ներկայումս մեր հանրապետությունում տեղի է ունենում ՔԿՀ-ների՝ միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցման գործընթաց, որն ուղղված է նաև ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց անվտանգության ապահովմանը: Նշված բարեփոխումների շրջանակներում, կարծում ենք, բավական արդիական և նպատակահարմար կլինի «Գործունեության Կարգը» լրացնել վիկտիմալոգիական կանխարգելման միջոցների համակարգով: Նման փոփոխությունները թույլ կտան մշակել ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման ռազմավարության ծրագիր, կապահովեն նշված գործունեությունն իրականացնող սուբյեկտների գործառույթների իրականացման փոխհամաձայնվածությունը, անընդհատությունը:

Առաջարկում ենք «Գործունեության Կարգ»-ում կատարել հետևյալ փոփոխությունները. «Ընդհանուր դրույթներ» բաժինը անհրաժեշտ է լրացնել քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վիկտիմիզացման կանխարգելմանն ուղղված հիմնական

սկզբունքներով և նպատակներով:

Վիկտիմիզացման կանխարգելումը պետք է ուղղված լինի անձանց օրինական շահերի պաշտպանությանը և նրանց խախտված իրավունքների վերականգմանը, դատապարտյալների վիկտիմիզացման դետերմինանտների բացահայտմանը, վերացմանը և չեզոքացմանը, ինչպես նաև այն անձանց հայտնաբերմանը, ովքեր իրենց վարքագծային և անձնային առանձնահատկությունների «շնորհիվ» մեծ հավանականությամբ կարող են հայտնվել պենիտենցիար հանցագործության զոհի դերում:

Վիկտիմիզացման կանխարգելումը պետք է ապահովվի ՔԿՀ-ներում պատիժ կրող դատապարտյալների նկատմամբ հուսալի պաշտպանության, մեկուսացման և հսկողության իրականացման միջոցով, նրանց՝ օրենքով սահմանված կարգով տեղաբաշխման, վիկտիմիզացմանը նպաստող գործոնների բացահայտման, դրանց չեզոքացմանն ուղղված միջոցների մշակման և իրականացման, այն անձանց բացահայտման միջոցով, որոնց վարքագիծը վերջիններիս համար կարող է վիկտիմիզացման վտանգ ստեղծել, ինչպես նաև դաստիարակչական, կրթական և անձնային անվտանգության ապահովման միջոցների ձեռնարկման միջոցով՝ ուղղված նրանց վիկտիմային վարքագծի կանխմանը:

Դատապարտյալների վիկտիմիզացման կանխարգելման նպատակը պետք է լինի ինչպես հնարավոր զոհի վիկտիմիզացման, այնպես էլ արդեն սկսված վիկտիմային գործընթացի կանխումը:

Պենիտեցիար վիկտիմիզացման կանխարգելումը պետք է հիմնված լինի օրինականության, մարդասիրության, համակարգվածության, տարբերակման և անհատականացման, ինչպես նաև վիկտիմիզացման կանխարգելման միջոցների ժամանակին և բավարար կիրառման սկզբունքների վրա:

Օրինականության սկզբունքը նշանակում է, որ վիկտիմիզացման կանխարգելումը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության խիստ պահպանմամբ, իսկ կանխարգելիչ միջոցառումների կիրառումը պետք է բխի այն անձանց օրինական շահերից, ում նկատմամբ դրանք կիրառվում են: Վիկտիմիզացման կանխարգելման մարդասիրության սկզբունքը արգելում է ՔԿՀ-

ներում գտնվող անձանց ենթարկել ֆիզիկական տանջանքների կամ նվաստացնել մարդկային արժանապատվությունը:

Վիկտիմիզացման կանխարգելման համակարգային սկզբունքը ենթադրում է սոցիալական, իրավական, հոգեբանական, կրթադաստիարակչական, կազմակերպչական, տեխնիկական և այլ բնույթի միջոցների փոխկապակցված իրականացում՝ ուղղված վիկտիմիզացման վտանգ ստեղծող գործոնների վերացմանը, ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց վիկտիմային վարքագծին նպաստող պատճառների վերացմանը, վիկտիմիզացման կանխարգելում իրականացնող սուբյեկտների համագործակցությանը:

Վիկտիմիզացման կանխարգելման միջոցների տարբերակված և անհատական կիրառման սկզբունքը նշանակում է դրանց կիրառումը՝ հաշվի առնելով անձանց անձնային առանձնահատկությունները, նրանց վիկտիմային վարքագծի բնույթը:

Կանխարգելիչ միջոցների ժամանակին և բավարար կիրառման սկզբունքը ենթադրում է նշված միջոցների կիրառումը վիկտիմիզացման բավականին վաղ շրջանում և այնպիսի ինտենսիվությամբ, որը թույլ կտա կանխել նշված գործընթացը:

Առաջարկում ենք Գործեության Կարգի «Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացումը դատապարտյալների հետ» գլխի 42-րդ կետի 7-րդ ենթակետը ներկայացնել հետևյալ խմբագրությամբ՝ «... անհրաժեշտության դեպքում՝ դատապարտյալների շրջանում հնարավոր կոնֆլիկտային կամ վիկտիմային իրավիճակների կանխարգելման և լուծման ուղղությամբ անհատական և խմբային խորհրդատվություն տրամադրելը: Կոնֆլիկտների և վիկտիմային իրավիճակների կանխարգելման աշխատանքներն իրականացվում են պարբերաբար: Կոնֆլիկտների և վիկտիմային իրավիճակների կանխարգելումը ներառում է դատապարտյալների շրջանում միջանձնային լարված հարաբերությունների բացահայտում, որն իրականացվում է հետևողական դիտարկումների և անհատական զրույցների միջոցով..»:

Առաջարկում ենք նշված գլխում նախատեսել վիկտիմիզացման ենթարկվելու ռիսկայնության բարձր աստիճան ունեցող

դատապարտյալների առանձին խմբերի ստեղծում և նրանց ընդգրկում «Վիկտիմիզացման ենթարկվելու ռիսկայնության բարձր աստիճան ունեցող դատապարտյալների հաշվառման» մատյանում՝ նրանց նկատմամբ նպատակաուղղված ծրագրեր իրականացնելու նպատակով:

Առաջարկում ենք նաև «Դատապարտյալների ախտորոշումը, գնահատումը և բնութագրումը հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելիս» գլխում նախատեսել միջոցառումներ՝ ուղղված այն դատապարտյալների բացահայտմանը, որոնց՝ պենիտենցիար հանցավորության զոհ դառնալու հավանականությունը մեծ է՝ ելնելով իրենց վարքագծային և անձնային առանձնահատկություններից: Անհրաժեշտ է նաև նշված անձանց նկատմամբ իրականացնել դաստիարակչական, ուսուցողական, անձնական անվտանգության ապահովմանն ուղղված աշխատանքներ՝ վերջիններիս դեվիանտ վարքագիծը կանխելու նպատակով:

Անհատական մակարդակում վիկտիմիզացման կանխարգելման հիմնական միջոցների թվին պետք է դասել դատապարտյալների հետ անհատական զրույցների անցկացումը, բացասական ազդեցություն ունեցող կապերից և պայմաններից մեկուսացումը, սոցիալական և հոգեբանական օգնության տրամադրումը:

«Գործունեության Կարգում» առաջարկվող փոփոխությունների կատարումը և իրականացումը չեն պահանջի հավելյալ նյութական, ֆինանսական և կադրային ռեսուրսներ: Նշված փոփոխությունները կօգնեն պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելմանը, կլրացնեն ներկայումս ազատազրկման վայրերում հանցագործությունների կանխարգելմանն ուղղված գործունեության բացերը:

Այդպիսով, «Գործունեության Կարգում» վիկտիմալոգիական բովանդակությամբ փոփոխությունների կատարումը ոչ միայն կամբողջացնի պենիտեցիար հանցավորության կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգը, կլրացնի իրավական կարգավորման բացերը, այլև կնպաստի պատիժ կրող անձանց կողմից ազատազրկման վայրերում հանցանքների կատարման նվազեցմանը:

Դատապարտյալների դրական վարքագիծը խթանելու և

պենիտենցիար հանցագործությունները կանխելու նպատակով առաջարկում ենք փոփոխություն կատարել դատապարտյալներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման կարգը և պայմանները սահմանող նորմերում: Մասնավորապես,

1. Վերացնել Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի ինստիտուտը: Որպես հիմնավորում նշենք հետևյալը. ՀՀ նախագահի 2006թ. հուլիսի 31-ի ՆՀ 163 – Ն հրամանագրի համաձայն՝ անկախ հանձնաժողովների 9 անդամներից միայն մի քանիսն են ընդգրկվում ենթահանձնաժողովների կազմում և անձամբ ծանոթանում պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացված դատապարտյալի անձնական գործին, զրուցում վերջինիս հետ, իսկ հանձնաժողովի մնացած անդամները դատապարտյալի մասին պատկերացում են կազմում և, փաստորեն, որոշում կայացնում ենթահանձնաժողովների անդամների, հաճախ՝ նաև սուբյեկտիվ կարծիքի հիման վրա: Ավելին, միանգամայն անհասկանալի է, թե քրեակատարողական հիմնարկների վարչակազմերին անհայտ ինչ չափանիշներով են ղեկավարվում անկախ հանձնաժողովների անդամները՝ մերժելով ՔԿՀ վարչակազմի կողմից բավարարված դիմումների մոտ 70%-ը: Մասնավորապես՝ 2014թ ընթացքում հանձնաժողովը հավանություն է տվել պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու 204 դատապարտյալի դիմումի, ինչը կազմում է անկախ հանձնաժողովին ներկայացված 673 դիմումների 30.3%-ը միայն:

Կարծում ենք, դատապարտյալի անձի մասին լրիվ պատկերացում կարող է կազմել միայն պատիժը կատարող ՔԿՀ վարչակազմը ու ամենևին կարիք չկա ընթացակարգը բարդեցնելու:

2.Նախատեսել պատժի կրումից առանց նախապայմանների վաղաժամկետ պայմանական ազատում, եթե անձը կրել է դատարանի կողմից նշանակված պատժի 3/4-ը, պատժի կրման ընթացքում դրսևորել է դրական վարքագիծ՝ չունի տույժեր, ՔԿՀ վարչակազմի կողմից արժանացել է խրախուսանքի: Կարծում ենք՝ սրանով ոչ մի կերպ չի նսեմացվում դատարանի դերը, քանի որ դատարանի

առաքելությունն է իրականացնելու արդարադատություն և նշանակելու արարքի բնույթին և վտանգավորությանը համապատասխան պատիժ՝ պատժի նպատակների իրականացումը վստահելով ՔԿՀ վարչակազմին: Եվ այն, որ դատապարտյալը համապատասխանելով ներկայացվող բոլոր չափանիշներին, ենթակա է ազատ արձակման առանց նախապայմանների, վկայում է ոչ թե դատարանի կողմից նշանակված պատժի անտեսման, այլ պատժի նպատակների իրականացման մասին:

Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման գործում էական նշանակություն ունի ազատազրկում պատժատեսակի կրման այնպիսի պայմանների օրենսդրական ամրագրումը, որոնց դեպքում պենիտենցիար վիկտիմիզացման վտանգը կհասցվի նվազագույնի: Դատապարտյալներին պահելու միայն մարդասիրական պայմանների ստեղծման դեպքում է հնարավոր վերջիններիս ուղղումը, քանի որ կիսաքաղցած և կենցաղային ծանր պայմաններից չարացած դատապարտյալների հետտարվող դաստիարակչական և կանխարգելիչ բնույթի աշխատանքները պարզապես արդյունավետ չեն լինի: Պետք է հաշվի առնել նաև այն, որ մեծահասակները ավելի քիչ են ենթարկվում դաստիարակչական ազդեցության:

Նշված օրինաչափության անտեսման դեպքում դատապարտյալների հետտարվող դաստիարակչական և կանխարգելիչ բնույթի աշխատանքները վերածվում են անդադար բարոյախրատական զրույցների և պատժիչ միջոցների կիրառման, ինչը երբեք դրական արդյունք չի տադատապարտյալի ուղղման հարցում:

Ուստի անհրաժեշտենք համարում՝

ա/ դատապարտյալների նյութակենցաղային ապահովվածության մակարդակը համապատասխանեցնել միջազգային իրավական ակտերի չափանիշներին, առաջին հերթին՝ պատժի կրման կացարանային ձևից անցում կատարել խցային, բարելավել պատիժը կրող անձանց բնակարանային պայմանները:

Նշենք, որ ներկայումս պատժի կրման գործող կացարանային կարգը դատապարտյալների վիկտիմիզացմանը նպաստող հիմնական պատճառներից է:

Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները

ցույց են տալիս, որ պատժի կրման կացարանային ձևից խցային անցումը կարող է դրական ազդեցություն ունենալ պենիտենցիար վիկտիմիզացման վիճակի վրա: Այս կապակցությամբ արված հարցման պատասխանները ներկայացնում ենք աղյուսակի տեսքով՝

Աղյուսակ 8

Կարծում եք արդյոք, որ դատապարտյալների վիկտիմիզացման դեպքերը կնվազեն, եթե անցում կատարվի պատժի կրման կացարանային ձևից խցային ինի	«Կոշ» ՔԿՀ ներկայացուցիչներ	«Սևան» ՔԿՀ ներկայացուցիչներ
այո	97%	96.5%
ոչ	0%	0%
դժվարանում եմ պատասխանել	3%	3.5%

Այսպիսով, հարցված աշխատակիցների բացարձակ մեծամասնությունը գտնում է, որ պատժի կրման պայմանների բարելավումը կնպաստի պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման արդյունավետիրականացմանը:

Նմանատիպ արդյունքներ տվեց նաև ազատազրկման դատապարտված անձանց շրջանում անցկացված հարցումը՝

Պատասխանները ներկայացնում ենք աղյուսակի տեսքով՝

Աղյուսակ 9

Դուք Ձեզ առավել ապահով կզգաք պատժի կրման խցային ձևում	1-ին անգամ ազատազրկման դատապարտվածներ	2 և ավելի անգամ ազատազրկման դատապարտվածներ
այո	80.1%	70%
ոչ	17.9%	24.7%
դժվարանում եմ	2%	4.3%

պատասխանել		

Հետաքրքիրն այն է, որ բացասական պատասխան տված անձանց մեծամասնությունը պատասխանը պատճառաբանել է այն փաստով, որ պենիտենցիար հիմնարկի առավել «փակվածությունը» կարող է մեծացնել հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչների կողմից ապօրինի գործողությունների կատարման հնարավորությունը[111]:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ խցային ձևի անցնելուց հետո պետք է ստեղծվեն հասարակական հսկողություն իրականացնող մարմիններ՝ աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ա/ Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անազատության պայմաններում դատապարտյալներին առավելագույնս հնարավորություն կտան ապրելու սովորական կյանքով՝ իհարկե առանց պատժի կրման կարգն ու պայմանները խախտելու: Նախ՝ անհրաժեշտ է վերացնել դատապարտյալների կենսագործունեության բոլոր ոլորտները խիստ կարգավորող սահմանափակումները, քանի որ դրանց մեծ մասը հիմնավորվում են կամ օպերատիվության ապահովմամբ կամ պարզապես վարչակազմի աշխատանքը հեշտացնելու ցանկությամբ:

բ/Վերանայել արտաքին աշխարհի հետշփման, ինչպես նաև իրենց կրթական և ինտելեկտուալ մակարդակը բարձրացնելու նպատակով կապի տարբեր միջոցներից օգտվելու սահմանափակումները, մասնավորապես՝ վերանայել հեռախոսակապից օգտվելու ժամանակացույցը, ավելացնել դրանց հաճախականությունը: Արդիական ենք համարում նաև էլեկտրոնային գրադարանի ստեղծումը՝ թույլատրելով դատապարտյալների մուտքը որոշակի կայքեր /լրատվական, տեղեկատվական/՝ առանց հետադարձ կապի, էլեկտրոնային նամակներ ուղարկելու կամ ստանալու հնարավորության: Այսպիսով, առաջարկում ենք ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական Ծառայության՝ «Կալանավորվածներին պահելու վայրերի և

[111]Տե՛ս, Волкова Т.Н. Женская пенитенциарная преступность // Актуальные проблемы уголовного права, криминологии, законодательства и правоохранительной деятельности / Под науч. ред.: Романов А.К. - М.: Дело, 2009, էջ 53:

քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը»[112] հաստատելու մասին որոշման XIII գլխում կատարել հետևյալ լրացումները՝

Դատապարտյալը համակարգչային սարքերի օգնությամբ կարող է մուտք գործել որոշակի կայքեր՝ առանց հետադարձ կապի, էլեկտրոնային նամակներ ուղարկելու կամ ստանալու իրավունքի:

գ/ Դատապարտյալների բնակարանային պայմանները բարելավելու և քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք ՀՀ չբնակեցված տարածքներում կառուցել նոր քրեակատարողական հիմնարկներ: Կարծում ենք պենիտենցիար հանցավորության կանխարգելման հարցում մեծ դեր կարող է խաղալ դատապարտյալների զբաղվածությունը. չնայած նրան, որ դատապարտյալներն ունեն վարձատրվող աշխատանքի իրավունք, փաստացի այդ իրավունքը մեր հանրապետությունում չի իրացվում, իսկ ահա Ներքին Կանոնակարգը սահմանում է, որ դատապարտյալը կարող է հոգալ իր կարիքները՝ օգտվելով քրեակատարողական հիմնարկում գործող կրպակից, փոստային և այլ վճարովի ծառայություններից, մասնավորապես՝ կենցաղային իրերի վարձույթ կամ տրամադրում, լվացքատան կամ քիմմաքրման ծառայություններ, լրացուցիչ լոգանք ընդունելու հնարավորություն, կոշկակարի, դերձակի ծառայությունների տրամադրում, նույնիսկ՝ բժիշկ-մասնագետի ծառայություններից իր անձնական դրամական միջոցների հաշվին: Փաստորեն ստացվում է՝ վարձատրվող աշխատանքի բացակայության պայմաններում ամբողջը հոգսը ընկնում է դատապարտյալի ընտանիքի անդամների վրա կամ գումար վաստակելու միակ հասանելի միջոցը դառնում է թղթախաղը: Ուստի, առաջարկում ենք գյուղատնտեսությամբ կամ անասնապահությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին հարկային արտոնություններ տրամադրելու միջոցով շահագրգռել իրենց գործեությունը ծավալել նշված քրեակատարողական հիմնարկների հարակից տարածքներում՝ պատիժ կրող դատապարտյալներին աշխատանքով ապահովելու նպատակով: Կարծում

[112] Այսուհետ՝ Կանոնակարգ

ենք, նշված ծրագրի իրականացումը կնպաստի դատապարտյալների զբաղվածության խնդրի լուծմանը, բանտային առօրյայից կտրվելուն, բանտային ենթամշակույթի նորմերից և ավանդույթներից հեռանալուն, ինչը, անկասկած, նախադրյալներ կստեղծի հանցավոր ենթամշակույթի ազդեցության թուլացման, և՝ հետզհետե վերացման համար:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ հանգում ենք հետևյալին՝

ա/ Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելումը տարբեր սուբյեկտների օրենսդրորեն կարգավորված, նպատակաուղղված իրավական նշանակություն ունեցող գործունեություն է՝ ուղղված ազատազրկման վայրերում դատապարտյալների վիկտիմիզացման դետերմինանտների հայտնաբերմանը, ուսումնասիրմանը, չեզոքացմանը և վերացմանը:

բ/ Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելումը պենիտենցիար հանցավորության կանխարգելման նոր և ինքնուրույն ուղղություն է, որը, ըստ մեզ, թույլ կտա առավելագույնս լրիվ և բազմակողմանիորեն օգտագործել ազատազրկման վայրերում հանցավոր ոտնձգություններից զոհերի պաշտպանության համար նախատեսված բոլոր հնարավորությունները: Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման նպատակն է ազատազրկման վայրերում հանցավոր ոտնձգությունների զոհերի ինչպես պոտենցիալ, այնպես էլ առկա վիկտիմիզացման կանխումը:

գ/ Նշված նպատակին հասնելու համար առաջնային նշանակություն ունի կազմակերպական և իրավական բնույթի տարբեր խնդիրների լուծումը, մասնավորապես՝ կանխարգելիչ գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների գործունեության ռազմավարության և ծրագրերի մշակում, ինչպես նաև պատժի կրման այնպիսի պայմանների ստեղծում, որը առավելագույնս կբացառի դատապարտյալների շրջանում վիկտիմային և հակահասարակական ուղղվածություն ձևավորող միջավայրի բացասական ազդեցությունը:

դ/ Կազմակերպական բնույթի միջոցառումների կատարելագործում, ինչը պետք է ենթադրի

1. իրավական վիճակագրության մեջ վիկտիմալոգիական բնույթի տեղեկատվության ներառում,

2. հանցավորության կանխարգելում իրականացնող սուբյեկտների գործառույթների շրջանակի համալրում դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելում նախատեսող գործառույթով, նշված ոլորտում հասարակական կազմակերպությունների իրավասությունների և հնարավորությունների ընդլայնում,

3. դատապարտյալներին իրենց կյանքին, առողջությանը, սեփականությանը սպառնացող հանցավոր ոտնձգություններին դիմակայելուն հոգեբանորեն նախապատրաստում,

4. վիկտիմայնության բարձր աստիճանով օժտված դատապարտյալների ժամանակին բացահայտում և նրանց հետ համապատասխան հոգեբանական, դաստիարակչական բնույթի աշխատանքների իրականացում:

ե. Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման իրավական միջոցառումների կատարելագործման հիմնական ուղղությունները պետք է լինեն՝

1. մի շարք օրենսդրական և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերում վիկտիմալոգիական բովանդակությամբ լրացումներ կատարելը,

2. վարչակազմի ներկայացուցիչների և իրավապահ մարմինների նկատմամբ վստահություն ներշնչելը,

3. քրեակատարողական քաղաքականության հետագա հումանիզացման ապահովումը (ՔԿՀ գործունեությունը պահանջում է պատժի կրման այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կնպաստեն դատապարտյալների միջանձնային հարաբերություններում լարվածության թուլացմանը),

4. դատապարտյալներին վարձատրվող աշխատանքով ապահովելը,

5. իրավական նորմերում փոփոխություններ կատարելը՝ դրանց վիկտիմային բնույթը չեզոքացնելու նպատակով,

6. պենիտենցիար հանցավոր ոտնձգություններից վնաս կրած դատապարտյալներին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ իրավական հիմք և մեխանիզմներ մշակելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պենիտենցիար հանցավորության ուսումնասիրությունը ՀՀ-ի ազատազրկման վայրերում թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

1. Պենիտենցիար հանցավորություն ասելով պետք է հասկանալ հանցավորությունն ազատազրկման վայրերում, այսինքն՝ հասարակությունից հարկադիր մեկուսացման պայմաններում դատապարտյալների կողմից պատժի կրման ընթացքում կատարվող հանցագործությունների ամբողջություն: Այստեղից հետևություն՝ պենիտենցիար հանցավորության տարանջատումը ընդհանուր հանցավորությունից պայմանավորվում է հետևյալ երկու չափանիշներով. նախ՝ նոր հանցանքը կատարում է նախկինում այլ հանցանքի կատարման համար ազատազրկման դատապարտված անձը, և երկրորդ՝ հանցանքը կատարվում է ազատազրկման վայրում՝ ազատազրկման ձևով պատժի կրման ընթացքում:

2. 2000-2011թթ Հայաստանի բոլոր քրեակատարողական հիմնարկներում միջին հաշվով տարեկան կատարվել է 25 հանցագործություն, որը կազմում է ընդհանուր հանցավորության 0.4%:

3. Առանց հանցագործի և տուժողի փոխհարաբերությունները, վերջինիս վարքագիծը ուսումնասիրելու՝ հնարավոր չի լինի լրիվ ծավալով բացահայտել ազատազրկման վայրերում կատարված հանցագործությունների համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները և կազմել դրանց ամբողջական պատկերը, ինչն առաջին հերթին անհրաժեշտ է կանխարգելիչ միջոցառումների մշակման, հանցագործությունների բացահայտման, հետաքննության անցկացման, պատժի և պատասխանատվության անհատականացման համար:

Հանցագործը, տուժողը և հանցածին իրավիճակը սերտ փոխկապակցված են և կազմում են մեկ ամբողջական համակարգ, որը կարող է գոյություն ունենալ միայն նշված բոլոր տարրերի առկայության դեպքում: Ազատազրկման պայմաններում

դատապարտյալների վարքագիծը կարգավորվում է ոչ միայն և ոչ այնքան կանոնակարգի պայմաններով, որքան բանտային ենթամշակույթով, ավանդույթներով, ինչի պատճառով զոհի վարքագիծը էական դերակատարում է ունենում հանցանքի կատարման մեխանիզմում:

4. Անհրաժեշտ է, որ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցները ժամանակին կարողանան առանձնացնել վիկտիմայնությամբ աչքի ընկնող դատապարտյալներին: Հարկ է, որ քրեակատարողական համակարգի աշխատակիցները հատուկ մասնագիտական գիտելիքների կիրառմամբ կարողանան առանձնացնել նշված անձանց վիկտիմայնության ձևավորմանը նպաստող գործոնները կամ դրանց ամբողջությունը, տիրապետեն պենիտենցիար հանցագործության զոհերի անձնային առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների:

5. Ազատազրկման վայրերում հանցավորությանը նպաստող գործոններից են անձի հոգեկան և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոնք

• ներգործում են ֆիզիոլոգիական և հոգեբանական գործընթացների, իսկ դրանց միջոցով նաև մոտիվացիայի ձևավորման վրա,

• ազդում են ինչպես սեփական հնարավորություններ, այնպես էլ ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները ադեկվատ գնահատելու ունակության վրա,

• ինքնատիպ «կատալիզատորի» դեր են խաղում վիկտիմայնության ձևավորման գործում:

6. Հայաստանի ազատազրկման վայրերում հանցավոր վարքագծի դրսևորմանը նպաստող ներքին գործոններից են՝

ա. Հոգեպես անհավասարակշիռ, եսակենտրոն, դյուրագրգիռ, ագրեսիվ անձանց առկայությունը, որոնք, հաճախ ընկնելով հեղինակությունների բացասական ազդեցության տակ, դառնում են հանգամանքների զոհ: Իսկ ահա հանցավոր աշխարհի «առաջնորդները» կամ ուղղակի «բանտային հեղինակությունները», չեն հայտնվում վարչակազմի տեսադաշտում: Նրանք հաճախ աշխատում են անձամբ չգործել, այլ մնալով ստվերում՝

կազմակերպել և ղեկավարել հանցագործությունները:

բ. Դատապարտյալների երիտասարդ տարիքը /21-25/, ինչն անուղղակիորեն, բայց անկասկած ունի հանցածին նշանակություն: Այդ մասին է վկայում նշված տարիքային խմբի հանցավոր ակտիվության ամենաբարձր աստիճանը: Զարմանալի չէ, որ հանցագործությունների ընթացքում նրանք հաճախ ղեկավարվում են հույզերով և ո'չ բանականությամբ:

գ. Հանցանք կատարելիս դատապարտյալների հարբածությունը: Հանցագործությունների պահին դատապարտյալների 1/3-ը գտնվում է ալկոհոլի ազդեցության տակ: Իսկ ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրության արդյունքները, հենց հարբածությունն է հաճախ դառնում հանցագործությանը նպաստող պայման: Բացի այդ, հարբած վիճակում պենիտենցիար հանցագործություններ կատարած անձանց մեծ մասը վկայում է ՔԿՀ-ում անվտանգության ապահովման ուղղությամբ վարչակազմի կողմից տարվող աշխատանքների լուրջ թերացումների մասին:

դ. Բացասական վերաբերմունքը պատժի կրման պայմաններին (դատապարտյալների մոտ 23%-ը պատժի կրման պայմանների խախտողներն են, ընդորում նրանց մեծ մասը՝ չարամիտ):

ե. Բացասական վերաբերմունքը ուսումնական գործընթացին, քանի որ այդ արժեքները առաջին հերթին կապված են ազատության հետ, և, հետևապես, արժեզրկվում են անազատության պայմաններում:

զ. Դաստիարակչական բոլոր տեսակի աշխատանքների հերքումը՝ կապված դրանց ձևական և ոչ մասնագիտական մակարդակով անցկացնելու հետ:

է. Հանցավոր ենթամշակույթին հետևելը

ը. Անձի այլասերված պահանջմունքները: Անազատության մեջ ևս շարունակում է գործել սեռական հարաբերությունների մեջ մտնելու անձի բնական պահանջմունքը: Բայց, քանի որ այդ պահանջմունքի բավարարումը սահմանափակված է մեկուսացման պայմաններով, դատապարտյալների միասեռ զանգվածով, երկարատև տեսակցությունների սահմանափակ քանակով (ինչն էլ, ի դեպ, քրեակատարողական հիմնարկներում սեռական այլասերվածության պատճառն է), ապա անձը, ունենալով բացասական արժեքային

կողմնորոշվածություն, լինելով ծայրաստիճան պարզունակ և զուրկ հոգևոր արժեքներից, բնական այդ պահանջմունքը վերածում է անոմալիայի և հանգեցնում սեռական էքսցեսների:

7. Պենիտենցիար հանցավորությանը նպաստող օբյեկտիվ գործոններից են

ա. դատապարտյալների հետ տարվող դաստիարակչական բնույթի աշխատանքների ցածր մակարդակը,

բ. դատապարտյալների անգործությունը,

գ. դատապարտյալների ոչ ճիշտ տեղաբաշխումը. վարչակազմը հաճախ անտեսում է նրանցից յուրաքանչյուրի անցած հանցավոր ուղին, տարիքային առանձնահատկությունները, ինչը հաճախ բերում է նրան, որ «փորձառու» և ագրեսիվ տրամադրված հանցագործները բնակեցվում են դրական բնութագրվող, նաև առաջին անգամ դատապարտված անձանց հետ, որը տեղիք է տալիս առաջինների կողմից վերջիններիս նկատմամբ ճնշումների և բռնության գործադրման՝ ներառելով նաև համասեռ բռնությունը,

դ.պատժի կրման պայմանների ոլորտում վարչակազմի թերացումները, դատապարտյալների նկատմամբ թույլ հսկողությունը, մոլախաղերով զբաղվելու, թմրանյութեր ձեռք բերելու, ինչպես նաև այլ բնույթի պենիտենցիար հանցանքներ կատարելու հնարավորությունը,

ե. անբավարար հսկողությունը գիշերային ժամերին,

զ. ազդանշանային համակարգի թերությունները,

է. վատլուսավորությունը՝ հատկապես գիշերային ժամերին,

ը. դատապարտյալների հետ տարվող դաստիարակչական բնույթի աշխատանքների անբավարար մակարդակը: վերջինս արտահայտվում է նաև նրանում, որ սեռական կյանքի խնդիրներին առնչվող դասախոսություններ և զրույցներ դատապարտյալների հետ գրեթե չեն տարվում: Բժշկական անձնակազմը կանոնավոր կերպով չի հետազոտում դատապարտյալներին՝ արվամոլներին առանձնացնելու, հաշվառելու և նրանց հետ անհատական հոգեբանական աշխատանքներ տանելու համար,

թ. օպերատիվ-հետախուզական գործունեության թերացումները՝ կապված օպերատիվ տեղեկատվության ցածր մակարդակի հետ

(դատապարտյալների մտադրությունների, ծրագրերի մասին անտեղյակությունը):

8. Ազատազրկման վայրերում հանցագործությունների մեծ մասի կատարումը պայմանավորված է հանցավոր աշխարհի ավանդույթներով և սովորույթներով: Քրեակատարողական հիմնարկներում կատարվող հանցագործությունների կեսից ավելին, այսպես թե այնպես, պայմանավորված է պատիժ կրող դատապարտյալների շրջանում պաշտամունքային նշանակություն ունեցող ավանդույթներին և սովորույթներին անշեղորեն հետևելով:

9. Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելումը պենիտենցիար հանցավորության կանխարգելման նոր և ինքնուրույն ուղղություն է, որը թույլ կտա առավելագույնս լրիվ և բազմակողմանիորեն օգտագործել ազատազրկման վայրերում հանցավոր ոտնձգություններից զոհերի պաշտպանության համար նախատեսված բոլոր հնարավորությունները: Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման նպատակն է ազատազրկման վայրերում հանցավոր ոտնձգությունների զոհերի ինչպես պոտենցիալ, այնպես էլ առկավիկտիմիզացման կանխումը:

10. Պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման իրավական միջոցառումների կատարելագործման հիմնական ուղղություններն են՝ ա) մի շարք օրենսդրական և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերում վիկտիմալոգիական բովանդակությամբ լրացումներ կատարելը, բ) վարչակազմի ներկայացուցիչների և իրավապահ մարմինների նկատմամբ վստահություն ներշնչելը, գ) քրեակատարողական քաղաքականության հետագա մարդասիրացման ապահովումը (ՔԿՀ գործունեությունը պահանջում է պատժի կրման այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կնպաստեն դատապարտյալների միջանձնային հարաբերություններում լարվածության թուլացմանը), դ) օրենսդրական մակարդակով դատապարտյալներին վարձատրվող աշխատանքով ապահովելը, ե) իրավական նորմերում փոփոխություններ կատարելը՝ դրանց վիկտիմային բնույթը չեզոքացնելու նպատակով, զ) պենիտենցիար հանցավոր

ոտնձգություններից վնաս կրած դատապարտյալներին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ իրավական հիմք և մեխանիզմներ մշակելը:

11. Դատապարտյալների ուղղմանն հետ կապված աշխատանքները պետք է հիմնվեն անձնային առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրության, և որ ամենակարևորն է՝ հանցավոր գործեության շարժառիթների բացահայտման և դատապարտյալների դասակարգման վրա: Անհրաժեշտ է բացահայտել յուրաքանչյուր դատապարտյալի բնավորության բացասական և դրական կողմերը, որոնց հիման վրա կարելի կլինի ճիշտ կազմակերպել ուղղման գործընթացը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

1.ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք: Ընդունված 2003թ. ապրիլի 18-ին // www. arlis.am

3. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք: Ընդունված 2004թ. դեկտեմբերի 24-ին // www. arlis.am

4. ՀՀ Կառավարության 24 օգոստոսի 2006թվականի N 1304-Ն Որոշում: Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը հաստատելու մասին:// www. arlis.am

5. ՀՀ Կառավարության 3 օգոստոսի 2006թվականի N 1543-Ն Որոշում: Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի եվ քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին:// www. arlis.am

6. ՀՀ Արդարադատության նախարարի N-44-Ն հրաման: «Կալանավորվածների եվ դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական եվ իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը հաստատելու մասին:// www. arlis.am

7. Հանցագործությունների եվ իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիր: Ընդունված՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 40/34 բանաձևով:// www. arlis.am

1. Абрамкин В. Ф. Чижов Ю. В. Как выжить в советской тюрьме. М., агенство «Восток», 1996, 151 էջ :

2. Абаджян А.В. Проблемы пенитенциарной преступности. М., ВНИИ МВД России, 2001, 100 էջ :

3. Аброськин С.Н. Задачи предупреждения и пресечения рецидива преступлений в местах лишения свободы: Современные криминологические проблемы борьбы с преступностью / Труды академии управления МВД Росии. М., 2000, էջ եր 99-104:

4. Акутаев Р.М. Латентная преступность: Актуальность проблемы и понятие // Государство и право. 1997. № 12**,** 79-88 էջ եր :

5. Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я. Криминологическая профилактика: теория, опыт, проблемы: Монография. М.: НОРМА, 2001. 496 էջ :

6. Анисимков В. М.Россия в зеркале уголовных традиции тюрьмы. СПб. изд-во «Юридический центр-пресс» 2003, 250 էջ :

7. Антонян Ю. М. Преступность в местах лишения свободы и ее причины / Уголовное право, 2002г. N 4, էջ եր 101-105:

8. Антонян Ю. М., Бородин С. В.Преступность и психические аномалии. - М.: Наука, 1987, 207 էջ :

9. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М., «Логос» 2004, 448 էջ :

10. Антонян Ю.М. Роль конкретной жизненной ситуации в совершении преступления. М., ВШ МВД СССР, 1973, 71 էջ :

11. Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследования преступлений. М., Юристь, 1996, 336 էջ :

12. Антонян Ю.М.. Преступление и покаяние. ОНС. Общество, науки и современность. 1991, N 6, էջ եր 43-52:

13. Буева Л. П..Проблемы деятельности личности в марксистской и буржуазной социологии // Исторический материализм как теория социального познания и деятельности. М., Наука, 1972, 212 էջ :

14. Волкова Т.Н. Женская пенитенциарная преступность // Актуальные проблемы уголовного права, криминологии, законодательства и правоохранительной деятельности / Под науч. ред.: Романов А.К. - М., Дело, 2009, էջ եր 51-58:

15. Гаухман Л.Д. Проблемы уголовно-правовой борьбы с насильственными

преступлениями в СССР. Саратов, изд-во Саратов, 1981, 59 Էջ :

16. Сардюк Л.В. Психическое насилие как предмет уголовно-правовой оценки следователем. Волгоград, изд-во ВСШ МВД СССР, 1981, 62 Էջ :

17. Гегель. Соч. Т. 3, 372 Էջ :

18. Гегель.Работы разных лет М., Мысль, 1973, Т. 2, 133 Էջ :

19. Гернет М. Н.Татуировки в местах заключения г. Москвы. Преступный мир Москвы. М., Право и жизнь, 1924, 219Էջ :

20. Долгова А.И. Преступность и стратегия борьбы. - М.: Криминолог, ассоц., 1998, 408 Էջ :

21. Ефимов Е. С. Современная тюрьма. Быт, традиции и фольклор. М., ОГИ, 2004, 398 Էջ :

22. Жариков Н.М.., Морозов Г.В., Хритинин Д.Ф. Судебная психиатрия. - М.: Изд. НОРМА, 2006, 560 Էջ :

23. Зубков А.И., Филимонов О.В. Актуальные проблемы российской уголовной политики // Проблемы укрепления законности и борьбы с преступностью на региональном уровне. Смоленск: Смолен, ф-л юрид. ин-та МВД РФ, 1999, Էջ Եր 116-119:

24. Исправительно-трудовая психология / Под ред. Глоточкина А. Д., Пирожкова В. Ф.. Рязань, изд-во РВШ МВД СССР 1985, 356 Էջ :

25. Калинин Ю.И. К вопросу о понятии, сущности и основных чертах пенитенциарного преступления // Человек: преступление и наказание: Вест. Академии права и управления Минюста России. - 2004. - № 4 (48),Էջ Եր 4-13:

26. Каретников В. И. Характеристика преступлений, совершеннын осужденными в ИТК. Учеб. пособ., М., ВНИИ МВД СССР, 1986, 60 Էջ :

27. Каретников И.В. Обстоятельства, детерминирующие преступность в исправительно-трудовых колониях. Учеб. пособ. М., ВНИИ МВД СССР, 1986, 56 Էջ :

28. Коган Ю. М. Татуировки преступников. Одесса, изд-во Окрлит, 1928:

29. Конышева Л. П. Опыт психологического исследования взаимодействия потерпевшего и преступника в криминальной ситуации // Проблемы борьбы с изнасилованием. - М., 1983, 65 Էջ :

30. Корелъ.Л. ВСоциология адаптаций: Вопросы теории, методологии и методики. Новосибирск: Наука, 2005, 423 Էջ :

31. Криминология / под.общ. ред. В.Н.Кудрявцева, В.Е. Эминова, М., Юрист, 1995, 512 Էջ :

32. Кудрявцев В. Н. Преступность и нравы переходного общества. М.: Юристъ, 2002, 686 Էջ :

33. Кудрявцев В. Н.Проблема мотивации в криминологии. М., Наука, 1986, 217 Էջ :

34. Кудрявцев В. Н. Стратегии борьбы с преступностью. М.: Юристъ, 2003, 352 Էջ :

35. Кудрявцев В.Н. Генезис преступления. Опыт криминологического моделирования. Учебное пособие. М., Инфра-М, Изд. Дом «Форум», 1998, 216 Էջ :

36. Кузнецова Н.Ф. Преступление и преступность. Москва, изд-во моск. ун-та, 1969, 232 Էջ :

37. Курн Г. Международное сравнительное исследование виктимизации населения // Латентная преступность: познание, политика, стратегия: Сб. материалов в межд. семинаре. - М., ВНИИ МВД России, 1993, 207 Էջ :

38. Милюков С.Ф. Классификация скрытых преступлений по степени их латентности // Латентная преступность: Познание, политика, стратегия. М., ВНИИ МВД России, 1993, 234 Էջ :

39. Минская В.С., Чечелъ Г.И. Виктимологические факторы и механизм преступного поведения. - Иркутск: Изд. Иркутского ун-та, 1988, 150 Էջ :

40. Минская В. С.Индивидуализация уголовной ответственности с учетом неправомерного или безнравственного поведения потерпевшего // Сов. юстиция-1970. №20, Էջ եր 9-13:

41. Минская В. С. Криминологическое и уголовно-правовое значение поведения потерпевших // Вопросы борьбы с преступностью. Вып. 16.-М., 1972, Էջ եր 19-28:

42. Олейник А.Н. Тюремьная субкультура в России: от повседневной жизни до государственной власти. М., Инфра-М, 2001, 418 Էջ :

43. Орлова Э.А., Филонов Л.Б. Взаимодействие в конфликтной ситуации. Некоторые факторы, определяющие ход взаимодействия //Психологические проблемы социальной регуляции поведения. М., Наука, 1976, 342 Էջ :

44. Остроумов С.С. Советская судебная статистика. (Часть общая и специальная). М., МГУ, 1976, 416 Էջ :

45.Пенитенциарная криминология: Учебник / Под ред. Ю. М. Антоняна, А. Я. Гришко, А. П. Фильченко. - Рязань: Академия ФСИН России, 2009, 567 Էջ :

46. Пинчук Б.И.Рецидивисты. Глава пятая / Курс советского уголовного права/

Под. ред. Н.А. Беляева, М.Д. Шаргородского, Ленинград, изд-во ленинград. ун-та, 1970г. 117 Էջ :

47. Подгурецкий А. Очерк социологии права. М., Прогресс, 1974, 315 Էջ :

48. Полубинский В. И., Ситковский А. Л..Теоретические и практические основы криминальной виктимологии: монограф., М., ВНИИ МВД Поссии, 2006, 208 Էջ :

49. Репецкая А. Л. Виновное поведение потерпевшего и принцип справедливости в уголовной политике. Иркутск, изд-во ИГУ, 1994, 152 Էջ :

50. Ривман Д. В. Виктимологические факторы и профилактика преступлений. Л., изд-во Высшего политического училища МВД СССР, 1975, 168 Էջ :

51. Ривман Д.В. Использование виктимологических данных в предупреждении преступлений // Вопросы профилактики преступлений. Л., ВПУ МВД СССР, 1980, Էջեր 37-41:

52. Рубинштейн Л. С.Основы общей психологии. 2-е изд (1946г.) СПб,изд-во Питер, 2002, 720 Էջ :

53. Рыбальская В. Я. Виктимологическое исследование в системе криминологической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. М., 1980, Էջեր 32-40;

54. Соловьев В.С.: Оправдание добра. Нравственная философия. Соч. в 2т: Т.1. М., Мысль, 1990, 892 Էջ :

55. Старков О.В. Криминопенология: Учебное пособие. Москва, изд-во «Экзамен» 2003г. 480 Էջ :

56. Старков О.В., Милюков С.Ф. Наказание: Уголовно-правовой и криминопенологический анализ. СПб., изд-во Юридический центр-пресс, 2001, 459 Էջ :

57. Стручков, Н. А., Бризгалов. В. Н. Классификация осужденных к лишению свободы и определение им вида исправительно-трудовой колонии. Киев, МООП УССР, 1967, 109 Էջ :

58. Стуканов А.П.Кресты. История побегов. СПБ., Юридический центр-пресс, 2001, 70 Էջ :

59. Тард Г. Законы подражания. СПб, Общественная польза, 1982:

60. Ткачевский Ю.М., Прогрессивная система исполнения уголовных наказаний, Москва, Зерцало, 1997г. 144 Էջ :

61. Тюгаева Н. А. Понятие адаптации личности осужденного к условиям отбывания наказания в ИТК // Личность преступника: криминологический и

исправительно-трудовой аспекты: Труды PBUI МВД СССР. Рязань, 1977. Вып. 6, էջեր 216-221:

62. Усс В. А.,Лишение свободы. М., 1985, ВНИИ МВД СССР 112 էջ :

63. Устинов В.С., Глухова А.А. Понятие и значение виктимологической статистики // Вестник Нижегородского гос. ун-та им. Н.И. Лобачевского. Н.Новгород. 1999, № 5 (http: // www. unn. ru/rus/books/vestnik1.htm)

64. Фаттах А.. Виктимология, что это такое и какого ее будущее // Международное криминологическое обозрение: Т.21. N 2-3: Париж, 1967:

65. Франк Л. В. Виктимология и виктимность: Учебное пособие. - Душанбе, 1972. 321 էջ ;

66. Рыбальская В.Я, Виктимологические исследования в системе криминологической разработки проблем профилактики преступлений несовершеннолетних // Вопросы борьбы с преступностью. Вып.33.-М.: «Юрид. лит-ра», 1980. էջեր 33-35:

67. Хачикян А. М.. Лишение свободы: проблемы исполнения наказания в отношении впервые осужденных. Ереван, изд-во «Тигран Мец» 2000, 160 էջ :

68. Хачикян А. М. Лищение свободы: криминологические и уголовно-исполнительные проблемы. Ереван, изд-во ЕГУ, 2008, 192 էջ :

69. Холыст Б., Криминология. Основные проблемы. М., Прогресс, 1980, 263 էջ :

70. Хохряков Г.Ф. Социальная среда и личность (значение элементов социальной среды в процессе достижения целей исполнения наказания, исправления и перевоспитания осужденных в ИТУ). М., ВНИИ МВД, 1982, 88 Էջ :

71. Хохряков Г. Ф., Саркисов Г. С. Преступление осужденнык, причины и предупреждение. Ереван, Айастан, 1988, 280 էջ :

72. Чечелъ Г. И.Виктимологические вопросы особо опасных преступлений против личности // Правовые вопросы борьбы с преступностью. - Томск, изд-во Том. Ун-та, 1985, էջեր 183-196:

73. Шнайдер Г. Криминология. М., Прогресс-универс, 1994, 368 էջ :

74. Schafer S. The victim and his criminal. - New York: Random House publ., 1968, 178 էջ :

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԵՂՄԱԳՐԵՐ

75. Заборский В.А. Криминологическая характеристика и предупреждение

пенитенциарной преступности. Автореф. дис.канд. юрид. наук. СпБ, Санкт-Петербургский иниверситет, 2005, 20 էջ :

76. Заборовский В. А. Криминологическая характеристика и предупреждение пенитенциарной преступности. Дисс. канд. юрид. наук. СПб., Санкт-Петербургский университет, 2005. 135 էջ :

77. Задорожный В. И.Концептуальные основы виктимологической профилактики преступлений: Дис. д-ра юрид. наук. М: Академия управления МВД России, 2006, 606 էջ :

78. Тангиев Б.Б. Предупреждение преступлений в учреждениях, исполняющих наказаниев виде лишения свободы: Автореф. дис.канд. юрид. наук. СПб., Санкт-Петербургский университет, 2004, 24 էջ :

79. Громов В.Г. Криминогенность мест лишения свободы и ее нейтрализация: Автореф. дис. д-ра юрид. наук. Тамбов: Тамбовский государственный университет имени Г.Р. Державина, 2009, 447 էջ :

80. Сердюченко И.Н. Пенитенциарная виктимизация осужденных и ее предупреждение. диссертация, канд. юрид. наук, Рязань, 2011, 218 էջ :

81. Некрасов А.П. Профилактика пенитенциарной преступности. Автореферат: Дис. канд. юрид. наук. СПб., 2000, 24 էջ :

82. Журавлева Т.Н. Институт принудительных мер медицинского характера в законодательстве Российской Федерации: Дис. канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2002, 212 էջ :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆԿԱՅՔ-ԷՋԵՐ

83. http://psyera.ru/5346/izuchenie-lichnosti-osuzhdennyh

84. http://psyera.ru/5346/izuchenie-lichnosti-osuzhdennyh

85. http://www.pravo.vuzlib.su/book_z1477_page_10.html

86. http://asmolovpsy.ru/ru/books/90:

87. http://www.syntone.ru/library/books/content/5192.html?current_book_page=all

88. https://books.google.am

89. http://lawtoday.ru/razdel/biblo/yur-psix/077.php

90. http://lurkmore.to/

91. http://cyberleninka.ru/article/n/tyuremnaya-subkultura-ponyatie-harakteristika-osobennosti

92. www.strana-oz.ru/2008/2/tyuremnaya-subkultura
93. cyberleninka.ru/article/n/tyuremnaya-subkultura-ponyatie-harakteristika-osobennosti
94. www.strana-oz.ru/2008/2/tyuremnaya-subkultura
95. cyberleninka.ru/article/n/tyuremnaya-subkultura-ponyatie-harakteristika-osobennosti
96. http://coollib.com/b/115139/read
97. http://coollib.com/b/115139/read
98. http://royallib.com/read/shalamov_varlam/ocherki_prestupnogo_mira.html#20480:
99. http://legal_psychology.academic.ru